Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Այս աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային հրապարակում 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դուք կարող եք.
Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material
You are free to:
Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

244/299

ԼԵՍ ՄԱԼԽԱՍՅԱՆ

# ՀՈՐՈՏ-ՄՈՐՈՏ

ՉՈՐՐՈՐԴ ԳԻՐՔ

ՊԱՏԿԵՐՆԵՐ
ԻՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՑ

ՅԵՐԵՎԱՆ 1927 թ

Ա 92
923

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԱԼԽԱՍՅԱՆ

# ՀՈՒՇԵՐ-ՍՈՒՐԵՐ

ՊԱՏԿԵՐՆԵՐ
ԻՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՑ

ՀՈՐՈՐԴ ԳԻՐՔ

ԵՐԵՎԱՆ 1927 թ.

ՀԱՅԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 3976
ԳՐԱՌ· 179 Բ. ՏԻՐԱԺ 650

923-492

L. U. im. Z. Lu. Ud. Z. Lus.
Наркомпр. С.С.С.Р.
Уральский Университет
Свердловск
Научная Библиотека
SVERDLOVSK

# ՆՎԵՐ

## ԻՄ ՍԻՐԱՍՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔ

## ՉԱՎԱԽՔԻՆ

# ՉԱՎԱԽՔԻ ՅԵՐԱԶԸ

## I

Յերկինքը պղնձվել էր:

Զորացած, քար կտրած յերկիրն իր որհնաբանական գալարումներով վողբի աղաղակ էր բարձրացրել յերկնքի դեմ և աղի արտասուքն աչքերին կուչ յեկել. նրա յերեսի կեռման ճեղքվածքներն, իբրև սողացող ոձեր, փռվել էին արտերի ու մարգագետինների մեջ, ահագին փոսեր ակոսել ամ հողում. հասկերն իրենց չորացած, ցամաքած գլուխներն, ցրիվ յեկած քեխերի նման քիսներով, ուղղել էին դեպի վեր և հուսահատորեն անդադար որորվում վորպես զավակի մահը վողբացող վորդեկորույս մայր. խոտն ու ծաղիկը, ծառն ու մացառը թառամել, թորշոմել, արնաքամ յեղած սովալուկ մարդու նման անկենդան կմաղք դառել, դաշտերի յերեսին ցից-ցից մնացել, իբրև ուրվականներ ու իրենց դալուկ սովերներն տարածել իրենց նմանների վրա. կարկաչուն հառակ վտակները նվազել, չորացել. տեղի տվել նեխման ու ապականության, իրենց յեռնից թա-

դած լեակեներում. իսկ զրնգան, սառնորակ աղբյուրները վաղուց իրենց ձենը ներս քաշած՝ ցամաքել, համր եյին դառել. խոսնակ թռչունը, թևերը ցած թողած, նվազել, լռել, շվաքի մեջ կուչ յեկել, բերանը բաց արել ու սաստ ողը շնչում... իսկ մարդը, այդ սֆինքս ճակը, վոր բիբլիական որեներով իրեն տեր ու ճանորեն է համարում մայր յերկրին՝ մի վողորմելի բան դառած, անկյունեներում կուչ յեկած, իր ան որն էր լալիս...

— Սով է տիրել, խնամի Մկո, սո՛վ, համատարած սով. ես ի՞նչ գուրում է:

— Մեր մեղքի համար, սանահեր Հակո, մեր անթիվ մեղքերի համար, երկնքի դեմ...

II

Մթնեց:

Խնամի Մկոն ու սանահեր Հակոն, հոգնած վողբից ու կսկծից, քաշվեցին իրենց խրճիթները:

Տիրեց խուլ խավար:

Գիշերն իր լայն թևերը փռեց հեծեծող մայր յերկրի յերեսին. յերկնքի յերեսին ցրտացին բազմաթիվ աստղեր. սակայն նրանց զեղեցիկ աչքերից վոչ մի ցավակցություն արցունք, վոչ մի գովարար ցող չիջավ տառապող յերկրի յերեսին:

Անցան ժամեր:

Հորիզոնի յերեսին դարձյալ ցոլաց վարդագույն շողքը. արևելքում ընկած մի յերկու պատառ շերտավոր ամպերը հագան ծիրանի. լեռների յեռևից ճորից ճագաւիքով դուրս սողաց հրեղեն կապարմիր գունդը, ու իր շեշտակի հառագայթներով ճորից սկսեց մայր յերկրի յերեսը այրել ու տապել... վերջին բզեզն ու թիթեռը այրեցին ցրա հրատապ հաճանչների տակ իրենց քնքուշ թևերը. արտույտի վաղորդյան յերգը մարավ ողում, տակավին ցա իր բունը չիջած. Հորից տիրեց յերկրի յերեսին ավեր ու զարհուրանք...վողն ու կոծը, աղաղակն ու հառաչը տառապած մարդկության շրթունքներից ցորից առաքվեցին վեր...

Յեվ այդ տեղ յերկա՛ր-յերկա՛ր:

Յերկար տեղ ել խնամի Մկոյի ու ասնուներ Հակոյի քովը:

III

Հանկարծ թուխպը պատեց յերկինքը. գետնի առաջից լսվեց դղրդյուն. մայր յերկիրը վեր ցնցվեց, շարժվեց և իրենց քնից սթափեցրեց-զարթեցրեց խնամի Մկոյին ու ասնուներ Հակոյին: Ցրանք աչքերը բաց արին, ցնցեցին չորս բոլորը, տեսան...վոչ այն ծա-

նոր Զավախքը, այլ իրենց համար բոլորովին մի անծանոթ, ոտար աշխարհ. այստեղ և փայլում էր նույն կապարմիր արևը, բայց այստեղ յերկրի յերեսին չէկային խորշոմներ, վոչ էլ չորացած վտակներ, այլ նրանց փոխարեն ձգված էին լայն-լայն ջրանցքներ. գրնգան աղբյուրները փոխվել էին շինարար ձևի հոյդահոս շատրվանների ու մշտահոս ծորակների. խոտն ու ծաղիկը, իբրև փյունիկ, կասես, վերանորոգվել էին, թարմացել, դարձել և իրենց հոտով ու անուշ բուրմունքով ամբողջ ողը լցրել. իսկ հորոտ-մորոտը, Զավախքի այդ ֆնֆուշ ծաղիկը, իր կապտագույն աչիկներով ցնծում էր իրեն պատած դալար խոտերի ու մյուս ծաղիկների յերեսին և անմահական հոտ արձակում. մացառները փարթամացել, ստվերախիտ դառել. իսկ հատասքուն և սաղարթախիտ ծառերը՝ վոմանք հրակայորեն բարձրացել, իրենց կատարները միչև յերկինք հասցրել ու ամպերի հետ խաղում, իսկ վոմանք էլ իրենց պտուղների ծանրության տակ կռացել, խոնարհել գետին, ինձող էին կանչում. արտերի հասուն հասկերը, ներքև քաշ ընկած, թեթև զեփյուռի առջև, նազանի կերպով, «հորանց էին գնում». թռչունները նորից թև առել, նոր լեզու ստացել, յերկնքի ոչ տը դաթը հասել ու այնտեղից իրենց

ուիներգը կարդում աշխարհին...իսկ մարդը, այդ թմբած արարածը, մի սոսկալի, անզուսպ բան եր դառել. նա անշունչ իրերին կյանք տրված՝ նրանց մեջ ինչ ասել՝ թե ողում և թե յերկրի յերեսին, վոր կողմն ուզում, այն կողմն ել պանում:

Մինչ խնամի Մկոն ու սանահեր Հակոն տեսնում եյին այդ տար աշխարհը՝ որը կամաց-կամաց մթնեց:

Ճպուռն առաջինը իր ճռոցը սկսեց. գիշերային հավքը իր սուլոցը բարձրացրեց. իսկ լուսինը, կաթնագույն լույս արձակող այդ յերկնային լապտերը, իր ճաշելի հռանիքով, խաղաղ ճամբա ընկավ յերկնքի կապուտակ յերեսով. զով քամին իր մեղմ ալիքներով սկսեց խաղալ խնամի Մկոյի ու սանահեր Հակոյի արծաթյա խոպոպիկների հետ ու մի թարմություն շնորհեց նրանց:

— Ես ի՞նչ ե, խնամի՛ Մկո. ես յո՛ւր ենք. յո՞ւր ե են վառող յարեգակը, են ճաքճքած գետինը, են սովը...

— Ջիռե՛մ, սանար Հակո՛, չիռեմ, թե ես վերսեղ ենք, ես ի՛նչ ե...

— Ի՛նչ. չըլլի՞ մենք մեռել եյինք, հիմի ել հարութեն առել, ասուծու դրախտին արժանացել:

— Վո՛չ ձեր մարմինները, այլ ձեր միտքն ու հոգին է հարատևություն առել և արժանացել մարդկային ձեռքով շինած դրախտին,—լսվեց մի անծանոթ ձայն:

— Մարդկայի՞ն...ի՞նչպես...վե՛ր...

— Նրանք. ա՛յ. նայեցե՛ք այնտեղ,—նորից լսվեց անծանոթ ձայնը:

Խնամի Մկոն ու սանտահեր Հակոն աչքերն ուղղեցին դեպի արևելք և տեսան մի սևահեր, գանգուր մազերով պատանի, հետը փրփուր շրթերի մեջ կորած մի գեղանի աղջիկ. նրանք վազում եյին դեպի Զավախք, ձեռքերին բռնած մի–մի դրոշակ, վորոնց մեկի վրա գրած էր ԳԻՏՈՒԹՅՈՒՆ, մյուսի վրա ԱՇԽԱՏԱՆՔ:

Հավելված «Զավախքի». 1913 թ.

---

# ԳՅՈՒՂԻ ՅՈՒՉԲԱՇԻՆ

*«Ակսար մեծ յեղանեն կրծոխ»։*

*Ժող. ասք.*

## I

Մի երիտասարդ ու յուր ապ երեք։ գյուղից. նոր եր դուրս գնացել, որ մի բանի գյուղացի, հանդիպած մի գոմ շարժոխի ասել, հանդիպ գրուց եկին տեսած։

Երանց, ասորդա հոգերի մասին լեղած, գրուցը ծուլ եր ու ցանդուց, որպես ժամանակ երանք բերանները հանձն բաց անելով ծուրբեն հարցնում եկին, որպես հետ լեռները բերկյուրծությամբ խոչանդում, ապա մի յերկու խոսք խոսում ընդհանուր գրուցին։

Այդ ժամանակ, հանկարծ, խիստ արագ քայլերով մոտեցավ նրանց մի ասրերդոր գյուղացի, որի գալը հարգանքից ու բարեբաղձանքից բարբաջն կտրեց եր, շնչաշաղությունը ասրազուցի։ իսկ նրա կուրծքը. ձգվում էր ինչ, ցանձ հետ, ինչպես ինչպես։ Ես ոչ թեսով լեռ շրջից գլխի վերևում ու գալ։ նա գալիս։

— Յուզուշի՛, ի՞նչ եսակ նասել լես, մեմ չես լիլի, ուշ, թե զեզին զուրս ի՞նչ կենեն։

—Ի՛նչ է, խնամի Մարուք. էլի ի՞նչ ես հեռաստե,— ասանց վրոմմանքի հարցրեց յուզուշին։

— Եսրեն ավել էլ ի՞նչ ըլի. վրենը հալ չը մնաց. ամբրնեը ինչքան զարի ու ցրեն էր, ունեը ինչքան մալ ու զելմթ՝ բոլոր տարան, խամարի ավեն, վշացուցին... Ախբր վե՞վ էր տեսե ես տեսակ բան. Մկրչենց Նազարեթի յուզուշի եղած վախը, սամված զարմի հոգուն, ջահիլները չիսեցին թե վեր ծակը մանեցին, որ ձեռքեն ազատեցին. վերանց խամար խոզցոզ տեսնիր՝ ո՛ սահթ չարեր էրանիր, կրհանիր, տար որ կուտա վերջը վարեսանքը ձեռնեբեն կանիր, ժամին կուտար, կրենց էլ չարթնեբով նարխան մեջ տնաթի ձարով կը վանեցներ։ Հիմի զա եսանց քեզի համար հանդիսա նասել ես, հեչ տեր չես ըլի...

— Ի՞նչ խամար, ի՞նչ Մկրչենց Նազարեթ, ի՛նչ խելքեր զուս զուս կուտաս, չես հասկցնե, թե բանդ ի՛նչ է,—ա՛յս տնդամ արքեն վրամվանց ալած վրա բերեց յուզուշին։

— Գեղի ազեքը...

— Գեղի տղերք ի՞նչ,—խոսքը կտրեց յուզարաշին։

— Խաւտար կը խոզան, խո՛ւտար։

— Խաւտա՛ր կը խոզան։

— Գոսոզքս տղերքի քով, քոքի տակը նրա-տած, են տեսակ խաւտար կը խոզան, ե՛ն տե-սակ խաւտար, որ յերկնքեն կրակ թափէ գրկա-նեարան՝ չեն խմոնա։

— Հասա՞ս կանա,—նորից հարցրեց յուզա-բաշին։

— Հասա՛ս։ Ընդան, ի՛նչ ունիմ ասա խոսքս։ Մեկն ել իմ չարքիսդ մունչս է։

— Սիրտս՛ դը, սիրտս՛ դը,—վրա բերեց մի ղյուզացի։

— Դե՛, յուզրաշի, յե՛լ, ել մի՛ ուշացնե, յե՛լ, քանի տեղերեն չեն յելի, յե՛լ, թե չե որ-յոլեկ ըլլիս ճամբեկ է, կրցրիին,—վրա բերեց մի յերկրորդ ղյուզացի։

— Քեզի տեսնիմ յուզրաշի, բանեա, են որ-ցրեա ել բանտարեարան, են որ. որ ճամբի ա-նոնք ման, խաւտարի տեղն չրան։

Յուզրաշին, վրա ման հրան տարեվան, տարբաց յերեսով, հատա բերեր, վեր գրն-թար, մինչև բոյով, տրեխան մարերով մարդ էր, վեր նստած մոտեմ էր։

Երբ տեղում գրաքննիչ նիստում Մարտիրոս Տոլստոյը,—և ինչի՞ կուշտանում, չէ, էրմանք:

Յուրաքանչյուրի վերջացում նոսա տեղից, մոտենում իրեց ոտն գոռն և կանչեց.

— Ադջի՛ Տերտեր, ադջի՛, վե՞ի կա նստեք:

— Ի՞նչ և, ոչիչ,—նեղոքց բանից մի նորատ կնոջ ձայն:

— Զամչես բե՛, զամչես:

— Լավ,—կրկնեց նույն ձայնը և մի բոպեից յետո մի գեղատի կոյ ադջիկ գալիս յուրաքանչյուր Հատոս կոմիտ մոտը:

Յուրաքանչյուր Մարտիրի հետ շարժվեց գեղի խուժան խորացողների տեղը:

— Կանչ խուժանը էր խորան, Տո՞,—քիչ տեղ գնալուց յետո Տոլստոյից նա Մարտիրին:

— Կանի՞, Ա՛... Են էլ ենպես տարված, որ յերկնքեն վրենները կարկուտ գա՝ չեն իմանա: Ասողմանները էլ արատի յե. կարչն որ գանեսի, բանեսի...

— Ի՞նչ կան. տարատի՞ի՛... Կարուշը բանեսի... Հայ չան բանարանը... Տես, Ա՛, քանի տեղ բանել եմ, մեն խոսի խուժանին վերջ տվեր, մեն չե բանեմ՝ բարեկեց և կուշին էր հանեմ. ելի չեն վարեանում, էր խոսան...

— Կարի՛... Ի՞նչ կարի. կարին հանելը չէ՞ւ. պէտք թեւերը կոտրես, ասենս քարը հաշտեցնելի համար, երեք–չորս ամիս հարատեւ հանեցնես, որ խելքերը գլխները գան,—գայ–լարեմ, չէ՞ւ լինելիք հայրենիքդ հանդարտեմ, գոյ յարգարեն բաներ ցեր հարեւանքեմ, գոյ խորհրդոցներէն, արուեստ ասրա, վրա բերեց Մարգարը և սկսեց քարերն ամէն մէն–մէն գցել։

— Վէ՞ր են խորհրդոցները, չխոսի՞ս։

— Ի՛նչպես չե. բարին և յեր իմ աշքովս տեսա. մէկը Թասանի մանչն է, են Ուռնան է, ինչ է, չխոսիմ. մէկն ալ են Հակոբի բեմարարին է. մէկն ալ Սարգիսի թեմն է. մէկն ալ տիրացու Բարսեղի տնեցանն է, են որ քարերն կուգար. է՛է՛, ինձ գրա յեր, մէկն ալ Փանոսի Հազարամանն է. մէկն ալ տերտերի գեմին մանեցու բարուն է—Մելքոնի. մէկն ալ են էն է՞ր, ասասի՛, վրաս էր, ը՛ը՛ը՛, ինչ թեմրաս քամ որ մէ վարամ աշքերս գնաց, հետ արշին թեմրաս վրա Ջարդեց, վարխամ...

— Հա՛, գիտեմ, բան՝. — ճանապարհը շարունակելով վրա բերեց յարգարեն,—չարաս Մարթոյի բանը։

— Հա՛, են էր. քամ գարը։

— Ե՞լ։

— Ես... Ես լավ չխոսեմ. հետաքրքրությունս մինչև երբեմն անճախ նշմարեցի։

— Լա՛վ,—ձայնեց յուզարարին և նայեց Մարաքի կողմը՝ կարես մի քան ասելու արամադրությամբ։

— Քեզի ասենք յուզարարի, են ասում բան բերես երանց դրախը, են ասում բան, որ թաղի բուռ բանը ձեռները չառնին։

Յուզարարին մի քանի բոլե մտածած ընց, հատ բերանը դրեց, խորհաց, այս ու այն կողմը նայեց ու դառավ.

— Կես ատամի կխաղան, հա՞։

— Կասեմ, ե՛, յերկնքեն որ կրակ թափի...

— Փարա չա՞ս կա, հա՞,—նրան ընդհատեց յուզարարին։

— Աստված, խաչվի... Բոնածներդ ապի ատաղ յե. կուշը որ՝ բանեմ...

— Այ, այ, այնի քարի ասին են. կամա՛ց, ես կոզմեն ապի, ենպես քարի եսանեն երթանք, անկարծ գլխներս վերդին կայնինք։

Հանկարծ յուզարարին կանգ առավ։

— Ինչի՞ կայնար։

Յուզարարին, անխաս, ձեռքը տարավ ճակատին, լավ դեռեց ժայռը, խորհրաս տեղը, նոր

ճանապարհը, փորով գնալու լեր, քիթդ ու պռունգը գրանց ու խրանց։

— Գիտե՞ս ինչ կա, խնամի Մարտիր։

— Ի՞նչ։

— Լավ կանեա որ լեռ գամես։

— Ինչի՞,—զարմանք կարած դժգոհությամբ հարցրեց Մարտիրը։

— Որ ունչով չընկաս. երկուսով որ երթանք մի գաղի տեսնին, փոխին. մեմ էլ պետի խմանան, որ դու խարար ես ասի՝ հետը պետի գյուշմնան։

— Յես ենանցեն փոխեցո՞ղ եմ, ի՛նչ է. քեզի՛։

— Յես որ կասեմ «լեռ գարձի», լեռ գարձի, ինձի բան։

Մարտիրը, մի-երկու վարկյան մնաց բան յուզրուշ դեմքը, արտահայտությունը գիտելու, նա այդ ժամանակ աշխատում էր տարաբաղձալին մանել յուզրուշ հոգու մեջ՝ խմանալու, թե ինչպես համար էր իրեն շուզելը։ «տխար ի՞նչ կա, կուզե ծեծե՝ թող ծեծե, խոյ լեռ ենար թեեկը բցնելու չեմ. կուզե խրատե, նեղե, լեռ ի՞նչ գիտեմ էլ ինչ, թող ենե, ինձեն պետի քաշվի։ թե՝ մի ուրիշ բան կա, որ լեռ չեմ հասկնա»... ու էր այդ մտածմունքից

վոչ մի յեղբայրությունն չկարողանալով դա-
ռաց։

— Կամ քո բանի է։ յեթե որ չես ասիլ, չեմ
դա։

— Հա՛, հա՛։ յես մենակ եղբայր։ Եղբայ-
րամ է։

— Որ եղբայրս է՝ հիմի քեզի մի բան հա-
կրցնեմ։ Եսպե՛ե՛ս արտերու մէջն կերթա։
կերթաս կըհասնիս քարի յետեւը, ենդից կը
պառկիս վրի վրա, ոտքերով կերթաս։ Հրամ-
բամ աչե, որ չնկատեն, թե չե դիտե՞ս, եսոնք
կարնկի պես են, ինչպես որ կարնկինները ոյա-
ռելյով քաշելու ժամանակ ճամբին կիջնեն ար-
ծերու, մեկին զարտոզ կըդնեն, որ չանոմար-
յա թե չե մե ուրիշ բան պատահի՝ իմաց ա-
եսոնք էլ եղբայրս են։ են կարմբ զարդի դիմեն
զարտոզ են կացնեցուցի, որ յեր մարդ երե-
վա՝ իմաց ա։

— Հա՞։

— Հարա՛։

— Դե լավ, հասկցա, հիմի դա՛ դնի՛։

— Հիմի քեզի ասենամ յուզրաշի։ Եղանց
գլուխը են ասում մի բան բերես, են ասում
մի բան, որ թուզթ բաց բանը ձեռնիրը չա-
նեն, թե չե քանդվո՛նք—քանդվո՛նք։ ա՞ր է,

իրարմէնն տարածնէրն էլ պահէն, էլի մէ բան է, իրանէն բարբր Սանտալի մէկիրանը, յա քարաք, ենանց էր փչացնէն... Եվ խմէլն էտ գարաթէնն էլ իրէն իրարէն,—իրենց—էց Մարաքը և էլատիրա գարձալ յեա:

Յաղրաշին շարունակց ճանապարհը. Նա տամչ ծալից գնալի ճամբ, մամլ հատած արտերը, վարանք իրենց հատած հատկերալ բարձրանալա էլին մինչև նրա կուրծքը, ու ընկալ քարցը խոհերի մէջ.

«Ինչ բան՛ալ. արատի էր խարա՞ն... կուշը բանրա՞վ... Վա՛յ յեա էն ձեր... Մարկ էրա, է՛... Աղատի՛... Կուշը բանրա՛վ... յեա էս—քան ժամանակ է յաղրաշի յեմ, էրքան վարա չեմ տեսե՝ էտանք խառմարը բանրալ էր խարան... Է՛քան էլ վարա... արատի՛... կա՛ռ... բանրա՛վ»...

Մինչ ալդ նա արդեն հասել էր ժայռի յեանը. ալդտեղ նա վարվեցն տամալ գերկը, արտակց գեանին ու ակռեց տամչ ատրալ, յերբեմն գրեթը քիչ վեր բարձրացնելալ, վարանել, թե արդյոք չե՞ հասել:

«Պահ, ձեր տիրոջ հերն անիծած. էրքան էլ վարա՛... արատի՛... կա՛ռ... բանրա՛վ»...

Յեվ ապրում էր, ատանց նկատելու, թե ինչպես ցորենի և գարու ցողունները իրենց

տարք հանկարծ ոչ ու ձախ պտտվելով տիր-
ելին տալիս այս ու այն կողմը, վարսես ծոմը
տիր է տալիս, իր յեռուից թողնում տիս չա-
պեռնվի գնացած ժամանակ, տես այդ տիր-
ները նրից զատ իրար բաղխվում, ժխտում,
հավատալում: Այդ տիրներից, տարբերակ
շարժումից, հանկարծակի գարով լրն ու տր-
տուտը ընելից վեր էլին թռչում, նախ բարձ-
բանում վեր, տես հեռանում մի ուրիշ կողմ:

«Եղբան էլ փարա՛... տրտա՛... կա՛շ...
վայ յես են ձեր»...

Նա նրից բարձրացրեց գլուխը և տեսավ,
որ արդեն հասել էր ծայրի յեռեր, կանգ ա-
ռավ:

«Հիմի վե՛ր կացին երթամ, որ ուչվեները
կարեմ, որ չկրնան տեղերեն վեր կենան, վա-
խին... Աղասիներն ու կուշները հեռերը տա-
նին... Ենքան կա՛շ... պա՛հ...»:

Նա չոգեց տրտի մեջ, վրան-գլուխը թաղ
տվեց, մանավանդ փափաղը, վոր փորի տակ
գնալուց բարդվին հոգի մեջ կարել էր, տես
զգույշ վեր կացավ և կուզեկուզ, շատ քայլե-
լով ծոմից դեպի ձախ, վոր հետ պտույտ գալ
դեպի ոչ և մեկեն թռչեր ժայռի գլխից ներքև
ու, հանկարծ, նրանց ուսչը կարեր:

Վարդեսը արեւի կիզիչ եւ յերկայն շրջան կայրեալ արեւամէն արդեն վարդ եր բարձրացել գենթի մեջտեղը կանգ առել, ու ժայռի շվաքը խորացողների գլխից հեռացել։ Երա տակ նստածները չեյին նկատում վոչ շաբաթ, վոչ էլ արեւի ջերմութիւնը, անձնատուր լեռած լրենց տաք խաղին՝ ամբողջովին զբաղված եւ-յին նրանով։ Երանցից մեկը, վորը, բան յերեւվում էր, ամենից վարեւորվածն եր եւ ամենից շատ զբաղվածը խաղին, գոտով թուղթը ձեռը բռնած շարունակ հարցնում եր.

— Թո՛ւզթ ուզե։

— Քաչե խաչի տասնոյը։

— Բանե։

Թուզթ ուզողը ձեռը տարով գրպանը եւ հանեց բուռ կոչնեը։

Թուզթ քաշողը ոչ ձեռքի բուռ մատը տանելով բերանին լեզվով թքում է, ապա շտապ-շտապ մի թուզթ ուզողին տալիս, մյուսը կրեն առնում։ Թուզթը քաշելու ժամանակ խաչերի թիվը քանի գնում բաժանվել կարգը սոմաբանում է։

— Քաչեց, թուզթը էլի քաչեց (մոգնիսի պես ձգել է), գուչակում է նստողներից մեկը։

— Մա՛րդս թուղթը նոր կուզա. ինչ կուզեք ասեք։

Այդ ժամանակ, հանկարծ, Վարդն (այդպես էր թուղթ քաշողի անունը) կռմփր բացվում և խաչի ասացողը։

Բանդ յերիտասարդը զայրացմամբ դցում է վրաները նեղքի և կրքոտ աչքերով նայում է Վարդին։

— Ուզե՛, — ասում է Վարդն հանգստությամբ, կարևորությունն չտալով իրեն նայող յերիտասարդի զայրույթով նայվածքին։

— Քիչ բանե, — ցածր ասում են նոր բրնդին մոտինները, — թուղթը կուզա, քիչ բանե, մինչև թուղթը կտրի։

— Մի չայի, — կանչում է խոզացող յերիտասարդը, — քաշե ինձի զարդի մեկնոցը։

Վարդն զժգոհ այն բանից, որ իրեն հանչում թղթին քիչ են բանում, սկսում է թուղթ տալ։

— Ահա՛ն, յերամ։ Ունանն տամ, — կանչեցին չորս կողմից ուրախացած մյուսները, որ Վարդի թուղթը կտրվեց, — ունճախ կտրում։

Սակայն, Ունանը զժգոհ այն բանից, որ հին կոպեկ է տանում, կանչեց։

— Ձեռ մանեթ պիտի բանեմ. ինչի՞ մեջ բնիպաք, չը թողիք, բաներ.

— Ուզե, ուզե՛,—Վարդն ուրախացած զառնում է յերդարդին:

— Բանե, բանե, մանեթ բանե, թուղթը կտրել է,—վրա բերին չորս կողմից տերտերի մանչուն:

Տերտերի մանչը վարդապետած այն բանից, որ Վարդի թուղթը կտրել է զլուխ է մեջտեղ հենց հատ արտանց ու կանչում.

— Ոյնին (որի) տունդը:

Վարդն տարբենով հուզմունքով, հուզմունք, որ նրան հայտնի չեր՝ տուներ՞ ու, թե տրվելու արտաքսով, քաշեց տակին թուղթը տերտերի մանչուն՝ վազին, քաշեց յերկրորդ թուղթը երեն՝ բացվում է ոյնի տունդը ու խրում է մանեթը:

Տերտերի մանչը զարմանքից ու հուսահատությունից կատարում է. նրա աչքերը լցվում են կրակ, յերեսի գույնը փոխվում է, կարմրում, սևանում է նա վրեժխնդիր կանչում է.

— Եր չեղա՛վ. չեմ բնդունե:

— Ինչի՞ չեղավ,—վրա յե բերում Վարդն և մանեթը զլուխ գրում գրպանը:

— Մեկ էլ քաշե,—չեմանում ինչ տակը տարտակում է տերտերի մանչը:

— Սխալար, դուք բանք,—նրան դարձյալ դառնում և ընկերներին վազան:

— Ել եռանց քաշել չէլլի,—ասում են ընկերները տերտերի մոնչուն,—ճրագրաթյուն մի ընե:

Տերտերի մոնչը ասասիկ վրդովված այն բանից, որ նրան վարձատրող, մի մանեթ բռնել ավող ընկերներն այժմ չեն ուզում իր կողմը պահել՝ ժայթքում և և դառնությամբ կանչում.

— Ձեր հերն անիծած. նամարդներ... Մեկ ել բլի թղթիս վրա չը խոսիք:

— Հերդ ել անիծած, մերդ ել, դուռամաստ. ի՞նչ, տերտերի ոգու յեռ դեյի, բերանդ պիտի պռատե՞ս...

— Եղար համար են բան՝ «տերտերի ոգի-քը խեղաս կըլլեն»...

Թրրմբրմբ,, հանկարծ:

Ժայռի գլխից նեղքն և ընկնում մի դանդուկծիկ բան, ընկած տեղում ուղղվում և խուրդուրդացողների առաջ փոքի կանգնում:

Գյուղի յուզարաշին, մարակը ձեռին:

Խուրդացողները հանկարծակի յեկած ուրեցան վեր կենալ, փոխչել:

— Տեղերեդ չը շարժի՛ք,—ասաղելով ճչաց յուզարաշին, վառելը բայն բաց անե-

լով բարեկենները տարածեց ողում և մարդիկը շարժելով ցցվեց նրանց դիմաց։

Խաղացողները տարան գրիչ վառոդից, տեղերից վեր կացան, քանդվեցին և վարձ տրին փախչելու։

— Վեր որ փախի՝ յեռանեն տուն եմ գնալու, ենուեղ հարը քով հարեն գալու,—ասաղակեց յուզբաշին և ուզեց վազել բռնել տերտերի մանչուն ու մի ուրիշին, վարանք կարողացան նրա ձախ կողմից դուրս պրծնել։ Յուզբաշին մտածելով, որ յեթե գնացողների յեռեից վազեր, մնացածներին հնարավորություն կտար փախչելու, դառաց.

— Լա՛վ, գնացեք տեսնեմ ձեռքես ինչպես եք պրծելու։

Ասա դառավ դեպի մնացածները.

— Կիրակի որով ես ի՞նչ և երածներդ,— դառաց ու մի յերկու մարդի հարված հացրեց ամենից թուլին ու վատուժին։

Մարդի հարված ուռոց դառանու չանի կակիծը մի տեսակ մրմուռ առաջ բերեց մյուսների մարմնի մեջ։

Ասել են՝ «ազգեսին հարցրին՝ ինչո՞ւ տարանի դեմ ձեն չես հանե, պատասխանել է՝ գայլի աչքերն ինձ սավարցրին։

Յուզբաշին նույն զայրույթով զատով բո-
լորի յերեսին նայեց ու կանչեց—

— Հիմի բոլորիդ խաչե՞մ...

Պատանիները մնացին պապանձված:

— Ասե՛ք, վե՞վ և ձեզեն ոանողը:

— Եղ և, յուզբաշի, եղ,—յոթ-ութ բերան
խոսքին միասին և ցույց ովին Վարդին:

— Ա՛յ, դու Տարոնցարա,—ոյս ոնգամ ո-
վելի կրակ կանչեց յուզբաշին և մարոկը շար-
ժեց ոգով,—եղո՞ւ Տամար կուգա քարքեն,
որ մեր ոգոցը խոսար խոզ ոգելցնես,
որ յեռն Տեռնեքը խոզաս, ոանես, Տա՞ռ...

Վարդն ոսի ոգես ոգեց զարար. յեթե նա
զարարում լիներ՝ անշուշտ պատասխան կա-
նեներ ոտրա յուզբաշուն («քոզքի ոգա բլի ու
պատասխան չունենա՞») ոսկայն, ոյսոեր, ոյս
չարամ, վարոեր վոչ բարեկամ ուներ, վոչ ծա-
նոթ, մենակ, ոյն եր մարոկի ու ոտրվոց ին-
վերների ոտաջ, վարոնք բարբր նրան թշնամի
էին կրենց ոանեու Տամար, ի՞նչ ուներ...
Նրա յեռն բանվեց բերանում և մարմինը Տաշ-
մացավ:

— Տղայք վարեսոանքը զա՞ւ յես ոտրե:

— Անոնք կրանք կոարվեն... յես ի՞նչ
բնեմ...

— Հանե՛, թե՛զ Տանե՛:

Եվ այս «թեզը» այնպես մխոցժակով արտասանեց յուզբաշին, որ կասես մի յերանելիթյան խոսք լիներ իրեն համար:

Վարդն զրպանից հանեց «բոմբ» փոքրը:

Յուզբաշին նայեց պրնձապուն և ապխտակ փոքրին ու մաքի մեջ խոսեց.

«Վայ յես ձեր են... Զորթ որ... եոքան էլ փարա՞... մեջը լիքը ճերմակ արատի... կուշը որ բռնում»... ու ձեռը յերկարացրեց փոքրին տանելու:

— Հանե՛, բոմբ՛ը հանե:

— Էլ չկա. ապքանն է,—հարցրեց թոթովեց Վարդն:

— Ես էլ չկա՞,—հարցակոն կրկնեց յուզբաշին և ձեռով բռնեց նրա զրպանի տակը:

Վարդն ցնցվեց:

— Քարքացու բոմբա. մարդ կը խաբես, հա՞...

— Կասա էլ չկա, հա՞ա՞,—զուրց նրա վրա յուզբաշին և մի-յերկու ուսախառն հարցած հացրեց Վարդին:

Վարդն, ջանը մրմռալով, հանեց զրպանում մնացածը, լցրեց յուզբաշու բուռը:

— Էլ ո՞ւմ քով կա փարա:

— Ամեն բոլորի քովն ալ կա,—կանչեց արտում, թուքը հոգում, ցավը ջանում կրելով Վարդն և քաշվեց ժայռի տակ:

Պատանիները, շատ կարմիր, իրենց մոտ գերած փոքրը ուժեցին յուզարշու բուռը և հետ քաշվեցին նուցնելու ժայռի տակ:

— Տեսեք, բարեկամ Ջերեր նորեն աչերս գեմ, ում քով փոքրս գանիմ զամշու տակ եմ տանելու, պրպտելու,—նոքից ապառնած յուզարշին և ուռած փոքրը տեղերից դրպարը:

Նրանք բուռ դեմ արին իրենց գրպանները և ապտեցին, հրաման արձակելուն:

— Դե՛, հիմի ասա՛ ընկեր, ձեզի տանիմ չեզ, ձեր թեևեն ենուեզ կարել ասմ, տանիմ քարաք նաչարնիկի քով, ենուեզ պատմեմ, որ չուք խուսարում ու հարերաբ ցրեն, գարի գոր-նարում զեզր քանդել եք. նաչարնիկը ձեզ մի քանի ամիս նարտխա նուացնե, հրար մի քանի-սիր եվ զեզեն հանե... Ասա՛ ընկեր:

Պատանիների մեջ անհանգիստ շարժում տիրեց. նրանց յերեսի գույնը գնաց. իրենք ացրայրվեցին, հոգեպես ընկճվեցին ու չիմացան ինչ ասեին յուզարշուն:

— Դե՛, եվ ի՞նչ եք կացնե, յերեսիս կաշեք, ձեզ հետ յեմ. ասա՛ ընկեր:

— Սամո՛ն յուզարշի, ոչախոր ենք ընկե... գո՛ւ գիտես, փոքր պոզենք, ես անգամ նեղե, հարերաս քով մեզի մի տանի:

— Ի՞նչ նեբել, ի՞նչ բան, ինչ գալս կամա՛ք... անձամբ ես ձեռքս բռնել... Նեբե՛մ...

Գը խնդրենք. եվ չենք նեռ,—համարյա ուղեբանցին բարբաջ մխամին:

— Զե՛, նեբեվ-մեբեվ չբկա... Թե՛գ:

— Ասածո՛ւ սիրուն. ենգես հաշվե թե մի խալթամե, եբեվ ենք... Ես անգամ բախշե... թե որ մեկ ել ենենք՝ ճանեբս գա՛բի,— այս անգամ թախանձանքին ավելի համարձակներբ:

— Լա՛վ, եբբան որ կը խնդրեք՝ կը նեբեմ. հրամբ ի՞նչ ենեմ, յեսի որ ես բանը գլուցեք իմանամ՝ չե՞ն բան, թե «ինչի՞ նեբեցի՞ բ»:

— Գեղացիք վե՞բանեբեն պետք իմանան,— սիրա ասած վրա բերին մի յերիտասբ:

— Փարեսանքն որ ասա՝ հրաբ չե՞ն իմանա, որ խաբամբ եք խաղցե, են փարեսանքն է,—խրամանի ձեռվ հաբց ավեց յուզբաշին:

— Փարա ենանց ինչի կասաս, որ ինչի ել իմանան:

— Զը ասա՝ հրաբը ի՞նչ ենեմ:

— Հեչ... քեզի համար պահե:

— Պահե՛մ,—իբբ զարմացած յերիտասբանցեց յուզբաշին:

— Հա՛, հա, պահե:

— Ե՛, յեսի չե՞ն իմանա, յեսի ինձի...

— Վե՞ր տեղեն պիտի խմանան,—վրա բե-
բեցին, տմբացրին մի յերկուսը։

—Վե՞ր տեղե՛ն... Ձեզեն բաց չի՞ լի...

— Խելո՞ւ ենք, ի՛նչ է, որ բանենք,—վրա
բերին չորս կողմից։

— Դե լա՛վ, եզքան որ կուզաչեք՝ կընեքեմ
հրամը աշեցեք, որ ոնչալի, կը հասկնա՞ք՝
ոնչալի բան չանք, թե չե ես զամչիս կրտես-
նի՞ք՝ հարս գերեզմանը վիս՝ մեկ էլ որ ձեռս
բնիք՝ էլ սաղ չեք մնա—... մարդը ա՛ի տվե-
լարդ անգամ ես չարժեց ոդում։

— Դու անհա՛գ կեցի,—խլեց չորս կողմից,
—խոյ մենք մեր գյուշմանը չենք, որ մեր լեզ-
վով կրանն բնենք...

— Լավ, կը հասկամ ձեզի, գնացեք...
Չա՛, հանկարծ զառամ ես,—թե որ ձեզի հարց-
նող ելի, թե խուսմը խաղցած տեղերդ ձեզի
յուզբաշին բանել է՝ բանք՝ «ինչ խուսմը, ինչ
բան, յուզբաշին եկամ, մենք արտերս մեկ ա-
տալ կը չնդեյինք, մեզի համար ամեն կուզ-
յինք»։ խմացա՞ք։

— Լա՛վ,— ցնծությամբ կանչեցին բո-
լորը և հեռացան խաղատեղից։

Յեվ մինչ պատանիները հեռանում էին՝
յուզբաշին քաշվեց մի կողմ, նստեց մի ծածուկ
տեղ զառդի տակ, և սկսեց վրդերը համբել։

«Ինչքան փարտ է... մա՛յ յեռ են ձեր... դրեմ որ, խոզցածներդ ամեն տրտսի է եղել. էլուչն որ՝ բաներ՝մ, բաներ՝մ...»

## IV

Գյուղացիները չարդախի տակից դուրս գալով, բարձրացել էին տան կտուրը, ձեռքերը ճակատներին տրել, զիրաստ էին հետևում և անհամբեր սպասում, թե յե՛րբ և զարդյուղչին և ի՛նչ կերպ և զարդ. արդյոք խումբ խոզցող պառավների բերդի ձեռքերը, նրանց զառիներով, յեռանները կապո՞ծ, թե՛ նախքի պես առաջ խառնած, գյուղ քշելիս:

Սակայն անցնում էին ժամեր. վոչ յուղչին էր յերևում, վոչ էլ խումբ խոզցող պառավներ:

— Ինչպես կերևա՝ չե կարացել գան. մ'ինչի գնացել է՝ ենանք տեղերը փոխել են:

— Հարթած չեր կարա... Հազար հեղ բան. թե «յուղչի ինձի էլ հետ տար», չարտաք, —պառնեզած վրա բերեց Մարուքը:

— Ինչի՛ք, էլ ապասներս գալ է. ինչք երթանք աներ. ապասերով անթի մնանք:

— Վե՞ր գան ի՛նչ և պատահ.—խոսեց մի յերիտասարդ գյուղացի և պատրաստվեց կամուրջից ներքև քաշանալու:

— Սպասեցե՛ք,—հանկարծ կանչեց նրանցից մեկը, վազ տնտրբեր նրանց խառածին, ձեռը տարած ճակատին յերկար, դիտում էր հեռուն,—սպասեցեք. շայիրի ճամբով մեկիմ կուգա, կսես յուզրաչին ըլլի. մի քանի մարդ էլ ենդին հեթիերի մեջ մոն կուգան:

— Ո՞ւր է,—ձեռքերը ճակատներին տանելով սկսեցին նրա ցուցց ուված կողմը դիտել մյուսները:

— Հրեն, ա՛յ. մոտը գյուշով (ուզրությամբ) աչեցեք. հրեն:

— Հա՛, զարթ որ. մեկիմ կուգա. քերվածքն էլ, կսես, յուզրաչանն յըլլի. ենար պես ձեռները կը փարատե:

— Հա՛, են է,—հատատեց մի յերկրորդ դիտող:

—Մեննա՞կ է. հեռը մարդ չկա՞,—արտասանք հարցրեց Մարուքը:

— Մեննակ է, հա,—պատասխանեց ուրիշին խառը գյուղացին:

— Ի՞նչպես թե մեննակ է. հրալը հեռը ապերքը չկա՞ն,—նորից հուզված հարցրեց Մարուքը:

— Չե, չկան. ախա՛, զամ չեն ձեռքը, թեվերը փարատելեն կուգա:

— Չկարաց... ինչքան ըսի, թե ինձ էլ

հետ տար», հրատարակ,—ինքն իրեն մրմռմաց Մարուքը և մի յերկու անգամ շուռ ու մուռ դարով կանգնած տեղում նստեց և արտնեղությունից սկսեց պապիրոս հինել:

Յուզբաշու մենակ դալը բոլոր գյուղացոց վրդովվեցրեց, վոր նա չեր կարողացել խումաբ խաղացողներին բռնել, պատժել:

Մինչ այդ յուզբաշին արդեն մոռեռում եր գյուղին. նրա քայլվածքը համբ եր, դեմքի արտահայտությունը անիրաւյթ: Նա ծանր և բարակ քայլերով սկսեց ոտնդուխներով կրտուրը բարձրանալ:

Մարուքը չըհամբերեց նրա կուրը բարձրանալուն. վերևից վրդովված կանչեց.

— Ի՞նչ եղան խումաբ խաղցող տղեքը, յուզբաշի, չբերի՞ր:

— Ի՞նչ խումաբ խաղցող տղա, ինչ բան, —ասաց, մինչև իսկ անտարբեր պատասխանեց յուզբաշին, յերբ արդեն բարձրացել եր կրտուրը:

— Դոզդրու տղերի քով, քարի տակը խումաբ խաղցող տղեքը:

— Քարի տակը յես խումաբ խաղցող տղա չտեսա:

— Յա՛... ի՞նչ կսե... ասածո՛ւ սիրուն... ինչպե՞ս թե չտեսա... Բա՛...

— Հլպը ենոնք ի՞նչ են,—հեռվում ցույց տալով Մարուքին ընդհատեց մի ուրիշ գյուղացի։

— Տեսա,—յերեսը շուռ տալով դեպի հեռվում յերևացող պատանիները պատասխանեց յուզբաշին։

— Հլպը ել ի՞նչ,—մի բանի սպասելով հարցեց Մարուքը։

— Տեսա. արտերու մեջ իրենց համար ման կուզային, ատալ կըջնդեյին։

— Խումար չեյի՞ն խաղա,—սրտաճաք յեղած նորից հարցրեց Մարուքը։

— Չե՛... յես խումար չըտեսա...

— Յա՝... ի՞նչ կսե,—թարս-թարս նրա յերեսին նայելով ճչաց Մարուքը։

— Ի՛նչ «յա»... Ասոյ յես հոգիս չեյի կարա տեսնե՝ վրենները սուտ՝ ուռուսի շատ ցքե...

— Հլպը յես որ ես իմ քոռ աչքովս տեսա, են ի՞նչ եր,—ձեռքն աչքին տանելով նորից բացականչեց Մարուքը։

— Են ըլի որ աչքիդ երևույթ և երևցի,—հեգնանքով վրա բերեց յուզբաշին,—զուր տեղն ել ինձի ենքան նեղության պատճառ դարձար,—և անփույթ ու անտարբեր հատարակության հուզմունքին կտուրից քաշացավ ներքև և ուղղվեց դեպի իր տուն, ճանապարհին ձեռը տա-

նելով գրպանը, փողերը խառնելով և քթի տակ մրմռալով՝ «հա՛յ շան լակոտներ... դրրթ որ ... խաղցածները ոալթ աբատի և եղե... կռուշն որ բռերով, բռերով...

— Եղո՛ր համար ինձի ճամբու կխեն յետ դարձուց,—գլուխը շարժելով, կասես, գյուղացիներին գանգատվեց Մարուքը:

— Զա՞... «վե՛վ գիտե»,—իր կասկածը նրից կրկնեց գեղջուկը:

— Յես ու իմ Աստված նատեց բա՛ն կա,—հատ ու վորոշ խոսեց մեկը:

Մնացած գյուղացիների մեջ նույնպես անվորոշ կասկածներ առաջացան, թե ի՛նչպես կարող եր Մարուքի տեսածը սուտ լինել:

— Սխրը ասել են, ե՞ «ակոսը մենծ եզանեն կըծռի»,—նկատեցին մի յերկուսը և հարցական նայեցին մնացածների յերեսին:

— Մենք ենք մեղավոր, մենք. ջահիլներն ինչ ենեն. ինչ տեսանեն՝ են ել որինակ կառնին,—ավելացրին մի քանիսը և հիասթափված քաշացան կորից ցած:

---

# ԱՆՊԱՏՃԱՌ ՅԵՐԵՑՓՈԽԸ

## I

Ուշ յերեկոյան պյուլամիջով տուն էր վերադառնում Սանոյենց Տրդատն ու քթի տակ ինքն իրեն խոսում. «Յես Սանոյենց ոչղի արդեն ըլեմ, Կիրակոս աթոռակալի (յերեցփոխ) թոռը, սաղ գեղը միտք ունենա ինձի աթոռակալ ջոկելու (ընտրել) ու են ճրագե պռկներ. մենծ բերան Աբելը վեր կենա ենքան հալղի մեջ ինձի անպատվե՛ե՛... «քամե ջադաց» ասե՛ե՛... Հա՛, գիտեմ, եդպես կենե ենոր համար, որ ինքը աթոռակալ դառնա, ժամի վարեն ասե... Չե՛, յես եդ բանը իմ անվանս չեմ ուտեցնե. յես Տրդատը չըլլեմ, գլխաս փափախ չունենամ, թե աթոռակալ չրդառնամ, թեկուզ հարյուր մանեթ ծախս դնա. եսանց թաղիքի բան է. վարեն ի՞նչ է, ձեռքի ապա, եսոր կա՝ յեքլան չըկա. վաստակողը յես չե՞մ... Հրմը մարդուս անունը մենծ բան է, ոչինչ որ չըլլի՝ են ճրագե պռկներ Աբելին»... Ու մեկ ել տեսավ, որ իրենց դռան առաջն է, վոր-

տեղ նրա կինը, գեղեցիկ Մաքիսը, ինչպես անվանում էին նրան գյուղում, սալաքարերի վրա նստած իր ճերմակ, թոթով (փոքրիկ) վոտքերն էր լվանում։

— Ի՛նչ ճրագ, ի՛նչ Աբել, ա՛յ մարդ, քեզ ու քեզ ելի ի՞նչ կը խոսես։

— Են, որ Բեթանենց Աբելին տրաքցնելու համար ամբառակալ պիտի դառնամ։

— Հիշեմ գիշերով, Աստված սիրես, եր գան մի հնճարքե։

— Աստված կանուխ մե հալում կը մոթթես, մեքանի հալկիթ կը ջարդես, մխրտ կենես, չայ կը պատրաստես, որ տերտերին կանչես, պատիվ եմ տալու։

Կինը խեթ-խեթ նայեց մարդու մատակտած յերեսին, վորի ուրվագծերը բանի շողքի տակ հազիվ երևն նշմարվում, ու քթի տակ ինքն իրեն փնթփնթաց. «պրպտ ու մահս ուտ տերտերը», ապա ելնելի ձայնով թոթովեց.

— Հալ ու հալկիթ ունենամ՝ ապրցս կուտեցնեմ։

— Դե որ կասեմ «երա՛», երա՛, էլ մի՛ յերկընցնե. յես ազամարդ եմ, խոսք եմ տվե՝ պիտի կատնչեմ։

Գեղեցիկ Մաքիսը, վոր մինչ այդ խրխատի (վրայի գլեսա) փեշերով իր վոտքերն էր

արքում–շրջացնում, սալաքարերից յուշիկ ի–
չում ներքև, շտեմը վոտքերը պցեց և նազանի
քայլվածքով շարժվեց ներս։

Տրդատը դռանը, յերկար սարված իր սա–
պարա յերեցփոխությամբ, ինքն իրեն պատ–
կերացնում եր, թե ինչպես ինքը յեկեղեցում,
մոմի սեղանի մոտ կանգնած, հպարտությամբ
նայում է իր շուրջը, ինչպես ողամարդ, կը–
նիկ–մարդ դալիս իրեն գլուխ են տալիս, մոմ
առնում, ինքը փողերն առնում, գանձանակի
ծակից ներս է գցնում, ինչպես ժամատա–
յությունը վերջացնելուց հետո մոմերը հանգ–
ցնել և տալիս տիրացուին, փողերն առնում,
գրպանն ածում և ամենից ուշ դուրս գալիս յե–
կեղեցուց, ինչպես ամենքը սիրալի բարևում
են նրան, և նա աջ ու ձախ գլուխ տալով անգա–
դար կրկնում է «ողորմի տուվա՛ծ»... Ինչպես
յեկեղեցու փողերն իրեն մոտ հավաքվում են
հարյուրներով, ինքն այդ փողերով իր տան
կարիքն է հոգում, դեռ ամենից առաջ իր կար–
միր յեզան ընկեր առնում, ինչպես գյուղի
քյոխվային ու միքանի գուրաներին յեկեղեցու
փողերից միքանի մանեթ պարտք է տալիս,
վոր իրանից հաշիվ ու համար չպահանջեն,
հարա դեռ խոսողին էլ մի լավ լվանան... Ինչ–
պես ինքը տերտերի հետ տակից բանը սար–

քում է, վոր բռնվելու տեղ չմնա... Ինչպես դրծակալ, հոգևոր կառավարության անդամ, վարդապետ, յեպիսկոպոս դալիս են դյուղ իր տանն իջնում, ինքը հյուրասիրում է նրանց, մարդու շարք անցկենում, նրանց դովքն ու դովասանքը լսում, ինչպես յերեմն ել... «Հե՛յ—հե՛յ...» հանկարծ դուրս թռավ նրա բերանից, «մեմ դլուխդ վե՛ր հանե իմ անմահ պապ՝ Կիրակոս աթոռակալ, տես թե արժանավոր թոռդ ինչպես անունդ դեսին չըցքեց, աթոռակալ անունն ու պատիվը նորեն տանդ ու տեղիդ վրա բերեց»...

Գեղեցիկ Մաքիսը, վոր մինչ այդ թոնրատանը ընթրիքի պատրաստությունն ել տեսնում ու վրդովված մտածում, վոր իր ամուսինը դարձյալ յերեցփոխ դառնալու ցավով ել բռնված, ինչպես սրանից յերեք-չորս տարի առաջ, դուրս յեկավ բակից և ամուսնուն հեգնանքով կանչեց.

— Հրամմե ներս. պարոն աթոռակալ, իրիկնահացը պատրաստ է:

II

Լուսացավ:

Շվաքն իր փեշերը գյուղի կառներից ու փողոցներից սկսեց հավաքվել, չքանալ. գյու-

ի նիհար գանգերը ամեն, կոնաձև կտուրներից ծխի քուլաները հարյուրավոր յերթևեկներից սկսեցին դուրս սողալ, ապա ոլոռի պարարտարար վեր բարձրանալով՝ անուրանալ, անեյանալ. նախերն իր սովորական բառաչով թռափեց դյուղ. հավերն իջան իրենց թառերից, սկսեցին աղբերում ու աղբանոցներում քչուջ անել, կերակուր վորոնել. դյուղական դոնեքն սկսեցին մեկը մյուսի հետևից բացվել. ապրթարանին դիմաց ժողովուրդը նախ յերևաց խառնվեցավ, հետո դեմքին յերկու բուռ չուր գարկելով վեչերով այն սրբեց, շորացրեց, ապա քթի ալակ իր մեղմիկ ապրթքը մրմրունչաց:

Գյուղը զարթնեց:

Ամեն մարդ վեր կացավ իր գործին:

Տղաները, վոր սովորություն ուներ ամեն կերակի անձամբ իր վոչխարին ու տավարին նայելու, տավարի յուղը համարելու, աղ տալու, հոտին խառնելու, այլ առավոտ ամեն ինչ թողեց իր վորդուն և ինքը վազ տվեց նոնոյի մկրատանը:

Գեղեցիկ Մաքիտը, վրդովված, վառեց ջոնիրը, ամաններըը վրա դրեց, ապա մի չապրիկ հավ բռնելով տվեց վորդուն մորթելու, աղջկան ել պատվիրեց, վոր փեսրահան անի,

իսկ ինքը, կովկիթը թեր դցած, մտավ գոմ կովերը կթելու։

Մի ժամից, երբ արդեն թոնիրը տրախաշ-խաշ վառվում էր, հացը պատրաստ, խոնջան և տրքած էր, շշով ոդին ձեռին, նեղս մտավ Տրդատը, նրա յեռեից դյուղի յերեցը՝ Տեր-Բառնաբասը։

Քահանան ձեթոտ դեմքով, խիտ մորուքով, ծուռ քթով մի անճոռնի թյուն էր, որը շատ ուկում էր ուրիշ նոցում մորդու յերեսին, այլ միշտ նոցում էր նեղքեր, թեք, կուռեռ արդարացնելու թուրքական այն առածը, որ «բարեկամը յերեսիդ է նոցում, թշնամին վառքերիդ»։ Նրա վրայի հագարը ու մի ուղղից կարկատված վերարկուն յուղի ու կեղտի մեջ կորել էր. իսկ գոտին, կարես մի հնացած ամրոց լիներ, որ վերցրել, գոտով ճիտել էին նրա գլուխը։ Նա վառքը չեմքից նեղս դնելուն պես ձայնեց.

— «Վաղջուցն ասես հացամիկ»։

Գեղեցիկ Մաքսիմը հագիվ գլուխը շարժեց և հրավիրեց նրան տեղան։

Նոր տարված հալի հոտը բռնել էր թոնրատունը. միխուն գրած էր հալի կողքին, նրա մատ տերն ու կարտոլը, ձուն ու թուշի պա-

ն էրը, իսկ դրանից բոլորի կենտրոնում Տրդատը պպզացրեց շշով ողին։

— Տրդատ քեռյա՛, աշե՛, ես բախով կերդվիմ, որ մարդու տալան դարձնող է,—ոչու չիշը սեղանից բարձրացնելով խոսեց Տերենտատը,—եսոր քեզի սթռուակալ եմ ջոկել տալու։

— Հա՛ռ՛, —հարցական ձայնեց Տրդատը և իր մեծ քթանի դեմքը ուղղեց դեպի նա ու մի ծալիս փայլեցրեց իր վոշխարի հայացքով աչքերին։

— Կարգովս կերդվիմ։ Ե՛նքան մարդ եմ տեսե, ենքան մարդ, որ չեմ կարա ասե. բոլորն էլ քեզի յեն ձեն տալու,—խոսեց նորից քահանան և աջ ոտով խփելով շշի փորին ողին վայր դրեց։

— Կարդիր հատատա մնա, տեր-հայր,— մրթե դրակը վերցնելով ասաց Տրդատը և ողին ածեց գավաթը ու ամեց յերեցին։

— Ես քո՛ւ կենացդ, իմ ամենատաջին բարեկամ, դու անհա՛գ կեցի. են մեծ բերան Աբելը ոխտը դրաբ էլ որ ունենա՝ սթռուակալության յերես տեսնելու չե... յես ենոր համար ենպես մե բանմ եմ ասելի, ենպես մե բանմ, որ...

— Ի՞նչ և, — աչքերը տերտերի յերեսին հառեց Տրդատը:

— Ականջդ բե, ասեմ:

Տրդատը ականջը մոտեցրեց Տեր-Բառնաբային և նա փսփսաց.

— Իմացա՞ր:

— Իմացա, իմացա, — ծիծաղեց Տրդատը, — Ֆարմասան. հը՛ հը՛ հը՛ հը՛... Դե ճեռքինդ տուշ երա:

Քահանան սխորժակով կոնծեց ոդին:

— Անուշներ:

— Ջանդ տուշ: Դե՛, մե հատամ էլ դու խրմե, — խոսեց յերեցը և լցրեց ոդու գավաթը:

— Ծառա յեմ կարդիդ, հայր Ջան. փառավորվի՛ս. ինչ մատրություն որ ունիս՝ Աստված ալյոզի:

— Ամե՛ն, ամե՛ն, — ուրախ ձայնեց քահանան և բաժակը խլեց:

— Հայր Ջան, որհնե՛:

— Վո՛ղջ ըլլա, գեղեցիկ Մաքիս, որ սաղ Սանջախի մեջ մի հատամ ես. ամեն տեղ քու գեղեցկությունդ կըխոսին, որ ման կուգա՝ կըտես սարի ջեյրան ըլլիս. աչքերդ՝ ինչպես շահանի աչքեր. թշերդ՝ Գյուլստանի վարդ, յերեսդ՝ լուսանի տասնըհինգը... Վա՛հ, մարիկ երա, և, Տրդատ քեյա, մեմ մարիկ երա, տես

ինչ բա՞յ, ինչ բա՞ռ. չինա՛ր և, կատարյա՛լ չի-նար... հարյուր ալի քեզի եղբես մարդը... Ե՛, քուրա, մարդուդ հետ մի բարձի ծերանար. կե-նացիր:

«Հոգն են կնիկա դրախտ, որ բարձր կը վախե, մարքի մեջ խոսեց դեղեցիկ Մարքար դլխով հպիվ շնորհակալության նշան արեց Տեր-Բառնաբասին և քթի տակ ավելացրեց. «գրողս ու մահս խմես, որ եկել ես էլի մարդուս խելացնելու:

— Անուշնե՛ր, ուր հհայր,—դրան ետևից Տրդատը:

— Զա՛նդ անուշ. հապա՛, խանումիդ կե-նացը մե հատամ էլ դու անուշ երա, որ կանանով ալի,—խոսեց քահանան և դարձյալ լիքը լը-ցրեց ողու գավաթը,—պա՛հ, ուես, և, Մարքիս խանում, ուես մարդդ քեզի ինչքան կրսիրե, որ բախին սատքնեն թափավ:

«Գաղքի լոթի», վրդովված մեկուսի տր-ատամնեց դեղեցիկ Մարքար:

— Հայր Ջա՛ն, կարդիդ հատատա մնաս. արհնոդ ալիս. ես տանր ամեն ժամանակ եղբես բարեկամ մնաս:

«Զանը են ուեսակ բարեկամի դրախտ, որ խոսավանեցնելու ժամանակ մարդս

թուշ կըկպմթե», պարձյալ քթի տակ մրմռաց դեղեցիկ Մաքրը։

— Ե՛, ինչիկ չա՛ն, սա՛ղ ըլլա։ տասվուծ ամոթով չենի։ թշնամու սրտովը հըլլինք։

— Սպասե՛, սթոռակալ, ես թասի վրա յես մի տաղ եմ ասելու,—բացականչեց յերեցը և դեմքը ուղղելով դեպի դեղեցիկ Մաքրը յերդեց.

«Պատրաստեցեր կըլլի բարուկ
Թևերդ չինի բիլաղուկ.
Բոյդ երկան, մեջքդ նազուկ.
Կայնի սեյր անեմ, սեյր անեմ,
Մարալ բոյիդ ես հեյրան եմ»։

— Հան, չա՛ն...ինչիկ, կիսամա՞նաս,—կանչեց Տրդատը և կանծեց.—ձենդ անուշա, տեր հայր։

Տեր-Բառնաբասը այդ խոսքերից ամենի վոգևորվեց և յերգեց յերկրորդ տունը.

«Պատրաստեցեր կըլլի համեմ.
Լեզուդ դիր բերանս ծամեմ.
Սերբա սրտիդ մեջը քամեմ.
Կայնի սեյր անեմ, սեյր անեմ,
Մարալ բոյիդ հեյրան եմ»։

— Պա՛հ, պա՛հ, պա՛հ...Չա՛ն...վոգեվորությունից աղաղակեց Տրդատը։

— Դե՛, դեղեցիկ Մաքրո, ես երկուսիդ կե-

նացը. Չուխտ մնաք,—բաժակը լցնելով նորից խմեց Տեր-Բառնաբասը և մի լափող հայացք ձգեց թոնրի տաքությունից գեղեցիկ Մաքիտի կարմիր թշերին և մտքի մեջ վորոճաց. «ի՛նչ կուրծք ունի շան աղջիկը՝...ոխխայ, երնա՛կ իդոր տիրոջը»...

— Եդոր վրայեն վերարկուն որ հանես՝ տակը կըմնա մի Գյումրվա լոթի», քթի տակ ելի մրմռաց գեղեցիկ Մաքիտը և խորը հառաչեց, «ափսո՛ս զգեստ»...

— Դե՛, աթոռակալ, հիմի փորերս մի լավ պնդցնենք, որ եսոր ենտեղ, ժամի բակը շատ բան ունինք ենելու: Յեվ արդարև՝ նրանք պնդացրին փորերը, մանավանդ յերեցը, վոր ուռած-տռզած սեղանից վեր կենալիս շատ ուտելու համար պատմեց հեռևյալ անեկդոտը.

— Մե անգամըմ երկու թուրք մոլլա սելով կուգան եղե դեմի իրենց գեղը՝ ենոնցեց մեկը սելի վրա նստած կլլի, մեկելը պառկած. ետոնցկը պատահի իրենց գեղեն մի թուրքմ ու կը հարցնե, «մոլլաներ, ես վորտեղեն կուգաք»Նըստած մոլլեն պատասխան կուտա. «մեռեղմ մեռել էար, գնացել եյինք հոգու հաց (քելեխ) ուտելու:—Ե՛, լավ կերա՞ք,—կը կհրացնե պատահող թուրքը:—Յես լավ կերա, հըմը ես ողորմած հոգին ավելի լավ կերավ», իր պատմությունը

վերջացրեց Տեր-Բառնաբասը և ցինիկ կերպով ավելացրեց. «գիտե՞ս, դեղեցիկ Մաքիտ, են պառկած մոլլեն ենքան և կերե, որ տրաքել և. հա՛, հա՛, հա՛, հա՛...

Դու են մոլլեցեն ինչո՞վ ես պակաս», զայրույթով շշնջաց դեղեցիկ Մաքիտը և դուռը բաց արեց վորկրամոլ հյուրի առաջ:

Նրանք յերկուսով յելան դուրս:

## III

Գյուղի վոչիսարը նոր եյին կթել-վերջացրել, վոր յեկեղեցու զանգերը ծլլը՛նգ հա ծլլը՛նգ ավին:

Մազազուրկ մորթե գլակը դլխին, կեմե գոտին մեջքին, շալվարը ծուռ հագած, քրտնքի մեջ կորած, վազ եր տալիս ժամկոչ Բղդեն գյուղամիջում ու ձեռի ճեղքված ցախը, վոր նրան ճիպոտի տեղ եր ծառայում, թափահարելով կանչում.

— Տուն գլուխ մե մարդ ժամի դուռը:

— Տուն գլուխ մե մարդ ժամի դուռը:

— Ելի ի՞նչ կա: տա՛-տ՛, գարշից ուտող, որ ժամի զանգերը եղպես հավար-հավար կուտան,—հարցնում եյին նրան չորս կողմից:

— Սիթուակա՛լ պիտի չոկեն. սիթուակալ. տա՛ն գլուխ մե մարդ ժամի դուռը,—շտապով

վրա էր բերում Բզդեն և վարքն ու կանչը շարունակում։

Ցեկեղեցու վոչ այնքան ընդարձակ պարիսպը առել էր իր մեջ բավականին մեծ բարմունքյուն։

Այդ միատեսակ և միաձև ամբոխը, վոր նստել էր պարսպի պատերի տակ, կամ նեղքի՝ դերեզմանոցքարի վրա, կամ թառ արել-կպել պարսպի գլխին, կամ ծարապատիկ նստել կոնաշավուն գեռնին, կամ ձեռքերը մեջքին ծալել, կանգնել շվաքի մեջ, միաժամանակ խիստ այլազան էր. նրանցից վոմանք մորուքով էին, վոմանք ասիրած յերեսով, վոմանք բարբոսին լզոտ դեմքով... վորի գլխին մորթե մեծ փափուկ կար, վորի կատարին ան, թեթև թաղիք, վորի գլխին ֆես, վորի գլուխն էլ թաշկինակով էր փաթաթած, մի յերկար գլխին էլ ոսի շապկա կար... նրանից վորը հագած ուներ արեխ, վորը յամանի, վորը յերկար ճաքով կոշիկ, վորի արունդներին թուրքի զանգալ (կաշեյի զանգատանոկ), վորի հագին էլ քոշեր... Մի քանիսը հագած ունեին խիստ լայն փողքերով շալվար, վորպիսին, սիրոչ ման գալու ժամանակ, նրա յետևից, ոչխարի գմակի պես գնում գալիս էր... շատերը նրանցից հագել էին կոճակներով արխալուղ, շատերը լայն կրծքով ար-

խալուղ, վորոնց տակից յերևում եր նրանց յերակը (բաճկոն), կամ կրծկալը. շատերը ունեին չեբքեզ, շատերը առանց չեբքեզի եյին, մի բանիան ել շապկով, իսկ մի յերկուան ել ձմեռվա տաք մուշտակով... Ուրիշ խոսքով՝ հագել եր ով ինչ կարողացել եր, ով ինչ գտել եր:

Հեռվից հավաքված ամբոխն իր տարբական ոգմանը, ծխի քուլլների հետ, գցել եր յեկեղեցու պարիսպը, յերբ, հանկարծ, Տեր-Բառնաբասը բարձր ձայնով ասաց.

— Ե՛, սիրելի՛ ժողովուրդ, գործակալը թաղվեց և գրի, ինձի պատվիրել է, որ մեր յուր հանկյոց, հավատարիմ, իրեն գործին ոչի ոգնական ընտրել ամա. հիմի բան՛ք, ո՞ւմ կուզեք, ո՞ւմ է մտքերդ, որ գրեմ, գրկեմ:

— Վե՞վ կա են տեսակ մարդ, որ ում գրես, գրկես,—խոսեց մի նորատի գեղջուկ:

—Վեվ կա՞, հրաբ եսքան մարդն ի՞նչ է, որ նասեղ թռի են եկե:

— Շատակ է, շատ մարդ կա, հրամ ոգնական ոգնական մարդ չկա—խոսեց ասողին և ձեռի գոյատով ամուր հարվածեց գետին:

— Որ եղամ՛ն է, թոռունենց մանչ, հրամա՛ն, ինքդ եղի,—հեգնանքով նկատեց յերկրորդը,—եսքանի մեջ, ինչպես կը տեսնեմ մեն-նակ ոգնական գտա՛ս կա:

— Ինչի՞. աթոռակալ ըլլիմ, որ եգվան վեր կենան՝ ասեն, թե «կերաավ»։

— Կսեն, հլալը չե՛ն ասե. եսքան աթոռակալ և եղե, վե՛ր չե կերե, որ դու չուտես,— դեմքը վեր ցցելով հարեց չորորդը։

— Տեսաք, որ իմ ասածն և. թացն ել չորի հետ կը վառեն,—ձայնեց առաջինը,—վեվ եղել է՝ կերել և. հիմի չուտողն ել ուտողին հավասար կըհաշվվի։

— Ե՛, ի՞նչ ենենք, որ եղման է՝ ասել և աթոռակալ չըլլոկե՞նք, ժամը թողենք առանց աթոռակալի՞։

— Գուռք եման մե մարդմ, որ չուտե՝ ջոկեցեք,—դարձյալ հարեց առաջինը։

— Եղա՛վ. յես գուա, ա՛ռա եք,—հանկարծ կանչեց յերկար բեխերով մի գեղջուկ։

— Գուա՞ր։

— Հա՛։

— Վե՞վ է։

— Ա՛յ, հրեն. պատի ծերին որ նստել է. Պետանենց Մարգարը։

— Վե՞վ. ինչ ասի՞ր. Պետանենց Մարգարը,—տրաքվելու չափ բարձր կանչեց մի մի-ջատի գեղջուկ,,—այ հո՛ղը են աթոռակալի դլխուն, որ Մարգարեն և ըլլելու։

— Ինչի՞. մարդուն ի՞նչ և եղե, որ եղ ու-

ակ կըխոսես,—բարկացած հարց տվեց յերկար բեխերով գեղջուկը:

— Տո՛, Պետանենց Մարգարը ե՛ն չե, որ մի տարիմ ոխշարի շոբան եղած ժամանակ հախտուած յեցընիրեք գառը ուզեցել և ընկերների մեջ հավասար բաժնե, չե կըցե. տեսել և որ չի ըլլի՝ վերուցել և լծի կըտրտորը՝ ենով և բաժնե, ելի չե կըցե. են չե՞, հա,—յերկար բեխերովից ել ամուր բղավեց նորատի գեղջուկը:

Այդ խոսքերի վրա այնպիսի մի զորեղ ծիծաղ բարձրացավ, վոր զանգակատան գլխին նստած մի քանի սարյակ թռան, հեռացան. իսկ Պետանենց Մարգարը ամոթից, սուս ու փուս ցած իջավ պատի գլխից և ծլկվեց տուն:

— Տղեք, տա՛ր երեք, յես գտա,—խոսեց նստած տեղից մի հատակավոր գեղջուկ, վոր մի քանի մանր քար առած բուի մեջ ինքն իրեն տբթիկ եր խաղում:

—Վե՞վ ե, ըսա՛,—հարց տվին չորս կողմից—

—Մեյրո՛ն, ա՛յ Մեյրոն. հազիր ինքն ել լավ գիր ու գալամ գիտե:

—Մեյրո՛ո՛ն...եհե՛ե՛ե՛...գրեթե երգեց մի խիստ մեծ փափախով մարդ,—Մեյրո՛ն. տո եղեն Մեյրոն չե՞, որ մե տարիմ, յերի թուրքերը սինոռի համար մեր նախիրը քշեցին տարան իրենց գեղը, մենք գանգատ տվինք մեր պակասած

բեն եր չորս կողմը չրկա, սոսկ ու սյուսով չորս կողմերս համար, են եր գանգատ ոչեց, թե ի-կով ձեռք ձգեց. են չե՞:

— Ե, քեզի՞ ինչ, ջուջա՛. թաղքի կոմն եմ ասե, խո քուկդ չեմ ասե:

«Ջուջա»...դա այնպիսի մի դառն խոսք եր մեծ փափախավոր գյուղացու համար, այնպի-սի մի անպատիվ, ծաղրի յենթարկող խոսք, վոր հազար անգամ լավ եր նրան բռնեցին, թնդանո-թի բերան տային, քան թե այդ ծաղրի խոսքը:

«Ախար ինչպե՞ս... ինքը փառավորապես ուսեցրել եր պապիրոսը, նստել եր իբրև գյուղի համար իր խոսքն ասելու, հանկարծ, նրան վի-րավորում եր մի մարդ, վորի դառնը մինչ որս հարթ անգամ չեր բառաչել... Նա հուզմունքից անկարող լինելով իրեն պահել, վե՛ր թռավ նրա-ռած տեղից և ուղեց հարձակվել Մեյրոյի վրա. ռակայն մոտի նստողներ նրան բռնեցին, չը-թողին:

— Հլը մեմ խոսը թպզուկես պոյին ու կալ փափխին աչեցեք, կսես յաթաղը բուսած սունկ ըլլի,-ս-հեգնանքով ավելացրեց Մեյրոն:

— Տո, դորթ որ, կսես հատա կոթով գոն-թիկ ըլլի,—խոսեց Մեյրոյի մոտիկ նստողը ու բարձր-բարձր ծիծաղեց, վորին հետևեց ընդ-հանուր ծիծաղ:

Զյուչան բարկությունից ապահովությամբ նեղս ծծեց ծուխը, ապա բարդ-բարդ թոցեց ոդի մեջ ու ազատվեց.

— Ե՛յ, ուրիշի դառնն ամեն լեզու չո՛ւն, դու էլ էր մնացե մարդու վրա հանչերո՛ւ:

— Դե լա՛վ, հանդարտվի. ժամի դուռ է, ամոթ է. խոսք էր, ասվավ, անցավ,—հանդարտվելին մեծ վտահությամբ մարդուն նրա մոտ նստողները:

— Թաքմակով (քացի) կուտամ, ասեն կերածդ հացի փշրանքները փոքով կրթափեմ...դուռամոտ...ա՛սմ հետ յես,—ասաց և նորից նստեց Զյուչան:

— Զե՛, ես չեզամ, ուրիշմ չոկեցեք,—ճայնեցին մի յերկուսը:

— Ուրիշ ո՞սմ. էլ անտրտամ մարդ մնա՞ց. ամեն մեկին մի փոքր դրիք,—խոսեց մի կրտակ զեղչուկ և չիպտախը ձիգ տվեց:

— Ինչի՞ չկա. ա՛յ Սալմանդենց Վրթանեսը, Սլթանենց Ովեսը, Սարանենց Ներսեսը, Սրապենց Սեղբոսը:

— Ինչ ասի՞ր. վե՞վ. Սեղբոսը. են փիանիցն էր մնացե սթոռակալ դառնալու, որ մեկ ստաքանմ բախտ համար ամեն որ տոքով քաղաք կերթա, հոգին կրսեցնե, ստա վկայությեն կուտա:

— Վե՞վ և փիանից, սուտ վկայութեան ար-
վող. յե՞ս,—հանկարծ տեղից վեր թռավ Մու-
բանը:

— Հլպը յե՞ս... կուզե՞ս հիմի յրախու
դարտակ շուշեն ցուց տամ, ճոներդ դող ընկ-
նի, թուքդ ել բերնեդ վազե:

Մռայլ և կապտած դեմքով Սեղբոսը այս
անգամ մի սարսափելի հուզմունք զգաց, վոր
իրեն հայտնի չեր՝ անվանարկվելո՞ւց եր, թե
ոդու անունը լսելուց...նա աչքերը բնի մեջ
խաղացրեց, ինքն իրեն ոձի պես ֆշշաց և հա-
զիվ լսելի ձայնով բրբռաց,—հրլր իդոր կերած
ապուրին աչեցեք:

— Դե՛, վորդիք, ես չեղավ. ես ժամ և,
աստծու, ապրթքի տո՞ւն և, թե քառություն,
—վրդավված կանչեց յերեցը և գանգակի պա-
տանը ձիգ տվեց:

Կոչնակի ծլնկոցը սթափեցրեց գյուղացի-
ներին. մի ըսպե տիրեց նրանց մեջ լռություն.

— Վո՛րդիք, ախր եդպես բղավելով բան
չիլլի. վերջապես պետք է մեկին ընտրեն՞ք,
թե չե:

— Ըսա՛, ո՞ւմ,—շատ վարպետորեն հարց
տվեց յերիցին Տրդատին ուզողներից մեկը:

— Ո՞ւմ. ա՛յ Սանոյենց Տրդատը:

— Վե՞վ. ինչ ըսի՞ր. մեկ ել ըսա. իմա-

նամ,—խրոխտ կերպով վրա բերեց հաստ շրթունքներով, մեծ բերանով մի դեռահաս դեղչուկ, Բեթունենց Աբելը:

— Սանոյենց Տրդատը. խա՛ւլ ես, չե՞ս լսում. ինքը լավ ոչախի տեր, անուանով, հալալ մարդ:

— Սանոյենց Տրդատը. ահո՛ո՛ո՛ո՛, աբեթե յերգեց Բեթունենց Աբելը,—Սանոյենց Տրդատը... Դու Ուռուսեթի գնացե՞լ ես, ենտեղ քամու ջաղացներ կան, տեսե՞լ են, հա՞:

— Ընենք տեսել եմ. եռով ի՞նչ կուզես ասել:

— Են կուզեմ ասել, որ Տրդատ բաժդ են քամու ցաղացն է, որ վեր կողմը կամին փչե՝ են կողմը կը դառնա:

Այդ խոսքի վրա Բեթունենց Աբելի շուրջը նստած մարդկանց մեջ մի այնպիսի քրքիջ բարձրացավ, որ յերեցը չը գիտեր ի՞նչ աներ, նորից զանգակի թոկը ձգի՞ դար, թե դուռա՞ը, դոչե՞ը, մանավանդ, որ նրան այնպես վատ ազդեցին մեծ-բերան Աբելի խոսքերը, որ կասես, իր հացեյին լինեյին ասված. սակայն վախենալով Աբելի ոճ լեզվից, որ շատ անգամ եր իրեն այրել՝ բարվոք համարեց լռել: Իսկ ժողովրդի մի մասի մեջ ստեղեց հուզմունք:

— Եղ քու անպարտավան լիզվովդ ի՞նչ

կուզես ասել,—հարցրեց Սանոյենց Տրդատի կուսակիցներից մեկը,—պատա՛ծ բերան:

— Են, որ մեր ազգը շատ չէ, որ ենիկ ապա. քարերը յեռև ազգն չեն ունենա, իրարու կուտեն:

Այս յերկրորդ անգամն էր, որ Սքեյը Տրդատի հացեյին այդ տեսակ խոսք էր ասում. նա հազա խոսքից վրդովվեց ու կատաղի գնաց:

— Դու մի՞ շատ մեծ խելքի տեր մարդ ես, որ ուզիշին «քամու ջազաց» կոչես. բռնում քաց տրած բերան... Ինձի գիտե՞ս, յես վեզ եմ:

— Հա, գիտեմ վեզ յես. Սանոյենց թեթթան (թեթեամիտ):

— Վա՛յ յես են քու,—գոռաց Տրդատը. վեր թռավ նստած տեղից:

— Սրտա,—շշնջաց Տեր-Բառնաբասը և Տրդատի վեշից քաշեց ցած, նստեցրեց ու իր պատրաստած մարդկանց աչքով արեց:

— Տե՛ր ասածդ, գո՛ւ ինձի համբերատեն ասա,—տեղում նստելով մոնչաց Տրդատը. իսկ նրա կուսակիցներն սկսեցին բղավել.

— Տրդատին կուզենք, Սանոյենց Տրդատին:

— Զենք ուզի, չե՛նք ուզի. մեր ուզածը թեթթանենց Սքեին և, Սքեյը:

— Որենքով Աբելը ազատակոչ չի կարող լինել,—հանկարծ ճչաց յերիցի մոտ նստողներից մեկը:

— Ինչի՞ չի կարող, խելացի Հակո,—հարց տվեց Աբելի կուսակիցներից մեկը:

— Ենթադրենք, որ Ֆարմասոն է:

— Ի՞նչպես թե Ֆարմասոն է:

— Ենպես. Ֆարմասոն է:

— Աբելը հայի ժամ չի՞ գալ ինչ է, թե հայի ժամին չի հավատում:

— Կուզա, հրամը Ֆարմասոն է:

— Ֆարմասոն է, Ֆարմասո՛ն է,—հանկարծ խմեց մի գել ազմուկ. մենք Ֆարմասոն ազատակոչ չենք ուզե, չենք:

— Լա՛վ, ելի՛ մի՛ք ուզե,—վոտի կոնդնեց Աբելը,—հրամ ինձի են ասեք, թե ես վե՞ր տեղի Ֆարմասոնն եմ :

— Ենտեղի, որ պատ չես արանե ժամի չես հավատում, մարդ որ մեռնի՝ կսես ինչպես որ մնասան՝ չունչը փչեց, վերջացավ, մեր տերտերին բանի տեղ չես դնե, «արհնիա տեր» չես ասե. ել ի՞նչ ելլի՝ Ֆարմասոն են ու կաս:

— Չենք ուզե, չենք ուզե,—թոքերի բարձր ուժով աղաղակեցին Տրդատի համար պատրաստված մարդիկ,—Ֆարմասոն մարդուն ազատակոչ չենք ուզե:

— Կուզե՞նք, կուզենք. մենք անխելք ու թեթև Տրդատին չենք ուզե։

Տեր-Բառնաբասը տեսնելով, որ աղմուկին վերջ լինելու չէ և ժողովը կարող են թողնել հեռանալ՝ բռնեց զանգերի յերկու թոկից և ամուր ձիգ տվեց. կոչնակները ամուր զողանջեցին, որի վրա հանկարծ տիրեց լռություն։

— Ե՛, վորդիք, ախար եսպես չիլլի. ես ժողով ե, թե ի՞նչ ե. ենպես կը ճվաք՝ կսեք չվոի վարժատուն ըլլի. վեվ որ Տրդատին կուզե՝ թող եսդին անցնի. վեվ Աբելին կուզե՝ ենդին։

Այդ հայտարարության վրա. նորից տիրեց աղմուկ, իրարանցում, մինչև անգամ սպառնալիք ու հայհոյանք. քիչ հետո ժողովուրդը յերկու մասի բաժանվեց, ինչպես վոչխարը, հոպ-հոպ անելիս բաժանվում ե իր գառներից։ Աբելի կողմը գնացողները քիչ եյին, իսկ Տրդատի կողմը մնացածները՝ կրկնակի չատ։ Այդ բանը ցնծությամբ լցրեց Տեր-Բառնաբասի հոգին, նա հրճվանքով խոսեց.

— Կլառեանի՞ք վորդիք, բացի մի քանիսեն, համարյա բոլորն ել Տրդատին կուզեն. ասել են՝ «ձայն բարմաց՝ ձայն Աստուծո»։ Ցեսս արձանագրությունը եսպես ել կը գրեմ, վոր ժողովը

միաձայն յերիցփոխ ընտրեց Տրդատ Սանտ-
յանին:

— Գրե՛, գրե՛,—հուզված բացականչեց
Աբելը,—գրե, քանի որ ես ժողովուրդը խա-
վարի թագավորության մեջ է նստած, նրա
իսկական թագավորն ել դո՛ւ յես. գրե,— ա-
սաց ու հուզված հեռացավ:

— Կը տեսնե՞ք, սիրելի ժողովուրդ, ձեր
ֆարմասոնն ինձի ինչպես կանպատվե:

Ամբոխն այլևս ուշադրություն չը դարձ-
ուց յերիցի խոսքերին, քանի վոր Աբելն իր
մարդկանցով արդեն հեռացել եր, ատրաստ-
ությունը և ցրվեց: Միայն Տրդատն
եր, վոր իրեն չը կարողացավ պահել, Աբելի
յետևից կանչեց.

— Դե գնա, սրաքի, ֆարմասոն. խոյ ին-
ձի սթոռակալ չոկեցին:

Ցերեցը խանդավառ շնորհավորեց Տրդա-
տին, յերբ իմացավ նրանից, թե նա իր ընտրը-
վելու «չուրն յերբ եր քաշելու», և ուրախ
դուրս յեկավ դավթից:

Իսկ Տրդատը յերբ հասավ տուն՝ դեղեցիկ
Մաքիտին ավետեց.

— Աչքդ լո՛ւս, կնիկ չան, սթոռակալ եմ:

Կինը նրա յելեխայական բերկրանքը սես-

լուց հետո շուտ յեկամ մյուս կողմի վրա և զատնացած չՀնչաց՝ հիմա՞ր:

VI

Մեծ բերան Աբելը վո՛չ մի անգամ այնքան չեր զայրացել Տեր-Բառնաբասի վրա, նրա սարսելիքյա արարքների համար, որքան բնարանթյան որը, որ նա, այդ խուժանական յերիցը, իր մարդած մարդկանց մինչցով բնարել ուզեց թեթեանալիկ Տրդատին և իրեն էլ այն տեսակ արատ վերագրել ուզեց, որով հեշտանթյամբ ծիտաներ և ագռա ամբոխին իր դեմ դրդուեց... Յեվ իրեն յերեցփոխ դառնալու չար թողեց:

Ժողովից հետանալուց հետո նա շարունակ մտածում էր՝ ի՛նչպես աներ, որ այժմ բնարանթյունը բեկանել տար:

Նա այդ մտածմունքների մեջ էր, որ հեռվյալ տասան տեսակ ժամկոչ Բդրեյին քարոզ գնալիս:

Աբեն խորուն հասկացավ, որ յերեցփոխի բնարանթյան թուղթը տանելիս կը լինի գործակալին: Մի քանի րոպե նրա հայացքը հառած մնաց մի կետի. և, հանկարծ, նրա աչքերում փայլեց ուրախանթյան մի ժպիտ: Նա սթափվեց մտածմունքներից, արագ նեղս

մտավ տուն, հանեց պատի մեջի պահարանից ողու շիշը, յերկու գավաթ իրար վրա կոնծեց, ապա գոմից դուրս քաշեց Սևը:

Ծուլդը դրսի թարմ ոդը շնչելուն պես, մի յերկու անգամ սանձը կրծոտեց, պնչերը լայն բաց արեց, ֆռկաց, ամբողջ թոքերով ոդը ներս քաշեց, ակռանջները սրեց և, դեպի վոզոց նայելով, մի զել խրխնջաց, ապա նոպանքով դրախը թափահարեց:

— Ջա՛ն, ջա՛ն, իմ քեյֆան, ա՛խա քեզի շաքար,—Սևի հետ խոսեց Աբելը և շաքարը դրեց նրա բերանը:

Կենդանին ծամեց անուշ կտորը և կայտռելով ուրախ դիմեց դեպի ասլաքարերը. (վորտեղ տավարին ոգ են տալիս) Աբելը թռավ նրա մեջքին:

Սևը յերբ ուղղվեց գյուղամեջ, նոքից մի ուրախ վրինջ արձակեց, գլուխը բարձրացրեց, լաչը թափահարեց և, պոչն իրանից հետո պարզելով, սրընթաց առաջ սուրաց:

Նրա մաքուր և վոզոկի մարմինը արևի ճառագայթների տակ սկսեց փայլել, իսկ պոչը, գեղյուռի առջև, ալիքաձև փոզփոզալ:

— Իսկ վոր քյահլան և մարդու ձին. ձիտը բարա՛կ, յերկա՛ն, կսես կոնկի ճիտ ըլի,— ասաց հիացմունքով մի գյուղացի:

— Հրապը պզտի գլուխը չես ըսե. ճակատի մեջն ել ռունդ բրշը, կսես ձեռքով վերուցել, դրել են,—հրացմունքով վրա բերեց մյուս գյուղացին:

— Եղ հեռուն եղման պզտիկ կերեվա, մոտիկեն որ աշես՝ կսես սար ըլլի, դոշը (կուրծքը) լե՛ն, յեռեը լի՛քը, կլո՛ր...

— Հրապը քելքը. յես մի հեղմ հեծել յեմ. վրայի մարդը, կսես, ջրի յերեսն ըլլի. հրամը որ փախիկը՝ ել խոյ չի փախի, հավքի պես կը թռնի:

— Տե՛ս, որհնածը կսես ծիծեռնակ ըլլի, մե դախխավ մեջ ո՛ւր հասավ,— խոսեց հինգերորդը, յերբ Աբելն արդեն հեռացել, աչքից կորել եր:

V

Ժամկոչ Բզդեն ճանապարհի կեսը հազիվ եր կարել, վոր Աբելը հասավ նրան:

— Բարո՛վ, Բզդե. եղ ո՞ւր եղման:

— Քաղաք:

— Ինչի՞:

— Գործ ունեմ:

— Ի՞նչ գործ:

— Հի՛չ. ոնական գործ,—ուզեց կոծկել Բզդեն:

«Ա՛, քահանան սրան լավ դաս է տվել, ենպես է ճամբա դրել. հապա փորձեմ կոճակները պուրա գցել»:

— Քաղաքը հեռու է. դադրած կրլլես, Բղդե, արի գավակս:

— Չե, չեմ ուզե:

— Ինչի՞:

Բղդեն մի յերկու րոպե մնաց լռած և մերժելուն պատասխան չը գտնելով խոսեց՝

— Չիդ խլտան է:

— Չե՛, մի՛ վախենա:

— Չե, չե. չեմ ուզե. ոտքով կերթամ:

— Ե՛, դո՛ւ գիտես, հրամը գիդցած ըլլես՝ հոր կարկուտ է գալու:

— Ինչե՞ն գիտես:

— Ինչե՞ն. չե՞ս տեսնի, արեգակն ինչրոդ կը կծե:

— Շիտա՞կ:

— Հաղորդ. յես որացուցին աշել եմ:

— Չե, չե. չեմ ուզե,—գլուխը բացասական թափահարեց Բղդեն:

— Դե՛, դո՛ւ գիտես. յեսև չես, թե Սրեը ձիու գավակը չառավ, թողեց կարկտի տակ,—խոսեց Սրեը և գիտամբ շարժեց ձիու յերասանակը,

— Սպասե՛, սպասե՛ տիրացու Սրեյ,—նրա յետևից կանչեց Բղդեն:

Ի՞նչ և, յեռ կշտապիս, ժամանակ չունիմ։

— Կաես ձիդ խրատն չե՞։

— Զե, կաեմ, ե՛։

Յեվ Բզդեն լուռ նստեց Աբելի դավակը։

— Ե, Բզդե, մեմ պատմե տեսանիմ՝ անուանդ ինչի՞ դարձեց ուստդ յեն դրե։

— Յեռ ինչ դիտեմ. մե հեղմ տերտերի տունը մի մենծվոր եր եկե. եստր խզմաքյարը հանեց փոխնոի պես մի բանմ լցեց ստաքանի մեջ, վրեն ջուր լցեց, քիչմ ել շաքար ու հավիթ խառնեց հետը, զարկեց. զարկեց-զարկե՛ե՛ց, ենքան որ, եդ փոխնդի պես բանը մե տեսակըմ խուս դարձավ. դրեց վեր ու գնաց մենծվորի համար խունչա գնելու. եդ փոխոր հավաս եկավ, մի դդարմ վերցուցի, բերանս լաշեցի... Տա եդ անուերը բերանս տանիր դիտեմ, մե վառեց, մե վառեց, որ չեմ կարա լսե. հետն ել հազա բռնեց, կը հազամ, արտաստքրա ել ոդերի պես աչքերես կը վազե...

— Յեսա։

— Յեթե ի՞նչ. քիչ մնաց մեռնեյի... Հիմի եդ փորձանքը եկել ե գլուխս հերիք չե՝ են կոզմեն ել տերտերի կնիկը, երեցկինը վրա պրծավ՝ ել ե՛չ, ել զամե՛չ, ել գրոզ ու չոռ

ուսեցիր... Մենծվորի դարշիցը պակուեցու-
ցիր... Էլ ի՛նչ ասես, որ չասվ։

— Վերջը՞։

— Վերջը մի քանիմ որ յեռուն բերնիս կա-
չին դուրս եկավ, անցավ։

— Ե, հիմի ե՛ն ասա. ինչի՞ քաղաք կեր-
թաս։

— Հե՛չ. ասն համար այնն-ոյնն ասու-
ուելու։

— Գալեդ առաջ տերտերին տեսա՞ր։

— Տերտերի՞ն,—կակազեց Բղդեն և հա-
րեց,—չե։

«Զե՛. Տեր-Բառնաբասը սրան շատ պինդ
և կոճկե. տեսնե՛նք», մտածեց Սբելը և ձիու
սանձը պահեց։

Նրանք արդեն հասել էյին քաղաք, կոժ-
յենց մանչու՝ Սրտաշի խանը։

Սբելը նախ ինջեցրեց Բղդեյին, ապա ինքը
ինջավ ձիուց, Սևը քաշեց դոմ, չփեց, փոքկա-
պերը թուլացրեց, նրա առաջը խոտ ածեց,
ապա մոտավ մկիտան։

Կեսորն արդեն անցել էր։ Արրոված ի ա-
նուշ հոտը բռնել էր վողջ գինեատունը։

— Անոթի չե՞ս, Բղդե։

— Ըմի՝ կուտեմ, չըմի՝ հեչ,—պատաս-
խանեց Բղդեն և նայեց քուլյայում ոժժացող

խորոմլածին, վորի վրայից թեթև դորբշիա-խառն ծուխ եր բարձրանում, իսկ տակից կաթ-կաթում ճենճը։

«Հըլալը՛դ կուզես. դադրած ե՝ փեշքյաչ դարի», մտքի մեջ խոսեց Աբելը, նա մի դա-վաթ ոդի ինքը կոնծեց, ապա տվեց Բղդեյին և հրավիրեց նրան սեղան։

Կոճկած Բղդեն բացվեց, ինչպես բացվեց և նրա ախորժակը. նա ուտում եր յուղալի խո-րոմլածը, վրայից կոնծում կարմիր գինին։

Ցերկու ժամից հետո Բղդեն արդեն ձգված եր գինեատան անկյունում։

Ցերբ նա սթափվեց, վեր կացավ պառկած տեղից աչքերը շփեց և նայեց շուրջը, հան-կարծ հիշեց, վոր յեկել եր քաղաք թուղթը գործակալին տալու. ձեռքը տարավ ծոցը, վորոնեց, չգտավ այն...

## VI

Տրդատն ամեն րոպե սպասում եր, թե ահա ուրե, ուր չե. կըստացվի իր հաստատու-թյան թուղթը և ինքը կը հասնի իր փափա-գին. սակայն անցնում եյին շաբաթներ, իսկ հաստատության թուղթը չըկար։

Ցերբեմն նա անհամաբաձակ դիմում եր Տեր-Բառնաբասին և հարցնում,—ի՞նչ յեղավ թուղթը,—վերջինս նրան հանգստացնում եր։

— Դու անհոգ կեցի. ես Թիֆլիս շատ բարեկամ ունեմ. կը հատատվիս, անպատճառ կը հատատվիս։ Դու են ըստ՝ թագա բախի ունի՞ս։

— Լա՛վ. քաղքեն են տեսակ բախի յեմ բերե, որ ջեֆդ գա. հրամմե երթանք,—պատասխանում եր Տրդատը և շարունակում հյուրասիրել Տեր-Բառնաբասին։

Սակայն՝ հատատության թուղթը ուշանում եր, ուշանում։

Վերջապես, մեկ որ, քահանայի անյերեսությունից ձանձրացած, զեղեցիկ-Մաքսոր երկանը դառավ.

— Ա՛յ մարդ, ես երկու ամիսն անցավ, մտանք վրա իրեք ամիսը, քու հատատվելու թուղթը յե՞ի պիտի գա։ Ինչ ունեյինք—չունեյինք՝ են անկշտումի վորը լցինք. հերիք ե. ոնեբա հավ ու հավկիթ չը մնաց։

— Ե, յեռե՞,—թարս-թարս կնոջ յերեսին նայեց Տրդատը։

— Հեռե են, որ թուղթդ ըլի որ ել գալու չե, ըլի որ հեչ չեն ել ղրկե հատատության

— Ե՛, հիմի գո՞ւ շատ բան գիտես, թե տեսակը, որ ամամավուրք ե կուլ տվե։

— Դու եղման ըսա ու ամմեն որ ենոր պուտիլկաներով բախի խմցու։

— Հրապը ի՞նչ ենեմ, խելատ Շողո*)։

— Ինչ ենե՞ս.

— Հա՛. ի՞նչ ենեմ, խանում։

— Ինքդ գնը քաղաք, անկիջովդ խմացի, թե ինչը ինչոց է...

— Թե ի՞նչ։

Կինը, վոխանակ պատասխանի, մի քննական հայացք ձգեց ամուսնու յերեսին, վորպես կարծես ուզում էր ասել՝ «վո՞ր քան անապատ ես դու, վորքա՞ն հիմար»...

— Ինչի՞ ձեն չես հանե։

— Ինչ ձեն հանեմ, քանի որ խոսքս լսող չկա,—հառաջեց զեղեցիկ-Մաքիտը։

— Ինչ մի յերևելի բան պիտի ըսես, որ լսեմ։

— Ի՞նչ։

— Հա՛։

— Յես կայնի եղ մոքեն, տանդ ու տեղիդ վրա կեցի։

— Ի՞ի՛նչ,—նոթերը կիտեց Տրդատը,—

*) Խելատ Շողո վիրավորական ածականն առաջ է յեկել Ջավախքում մի գժված, ցինիկ կնոջ անունից։

դիտե՞ս ինչ կը խոսես. յետ կենամ, որ են ճրագն պռկներ, մենծ բերան Սբեկը վրես ծիծաղի՞ի։ Չե՛, նեղող կըլլես. յես ազամարդ յեմ. յես ՝էլուխս վատախս ունիմ ծածկած։

Կինը դարձյալ մի խոսուն հայացք ձգեց մարդու յերեսին ու քթի տակ վորոճաց. «Շիտակ են ըսե, որ քամու ջաղաց ես»...

---

Անցավ եղի յերկու շաբաթ. Տրդատն այլևս հույսը կտրել եր հատատվելուց, մի վոքր ել հավատը կորցրել եր դեպի քահանան, մանավանդ, վոր դյուղում լուրեր եյին տարածվել, վոր իբր կոնխատրիան իմանալով Սանոյենց Տրդատի «քամու ջաղաց» ըլլիը՝ վորոշել եր չը հատատել, մինչև անգամ արժանի չեր համարել թղթին պատասխանելու։

«Ի՞նչպես. քանցիատորն ել ինձի «քամու ջաղաց» ըսե՞ե՞... չուզենա անգամ պատասխան գրե՞... չե՞, չիլլի, պետք և երթամ Տերենառնարատի քով, տեսնեմ ես ի՛նչ բան ե... Գիտե՞մ, եդ ենորն ելի են մեծ բերան Սբեկը կըլլի, հրամը»...

— Անճախ խելքի եկար,—մեղմ նկատեց ուրան դեղեցիկ Մարիամը և ուղարկեց յերիցի մոտ։

Տրդատն ուղղվեց դեպի քահանայի տուն

այս անգամ նա վո՛չ թե գնում էր, այլ վազում էր, միևնույն ժամանակ, կատաղ, չորս կողմից լսում էր, որ վողջ գյուղը՝ մեր-մանուկ, չնչավոր-անշունչ, ողամա՞րդ-կնիկ-մարդ, ծե՛ր-պառավ իր յեռևից «պարոն աթոռակալ, պարոն աթոռակալ» եյին կանչում և. առամները բաց արած ծաղրում... և դրանց մեջ ամենից թունավորը ամենից դառը Սքելի ծիծաղն էր, ճրագե պոկներ, մեծ բերան Սքելի ծաղրը...

— Տերտե՛ր, ես ի՞նչ բան է:

—Ի՞նչ բան, պարոն աթոռակալ:

«Ցա՛հ, ելի՛ աթոռակա՛լ», արյունը խփեց Տրդատի գլուխը, «ես ինչ բա՛ն է, կսես բոլորը խոսքերը մեկ են եղե իմ վրա խնդալո՛ւ»... ու չըգիտեր, թե ինչպես արտահայտեր իր վիրավորանքն ու վրդովմունքը:

— Ո՞ւր է, թե աթոռակալ եմ. սաղ գեղը կը խնդա վրես «պարոն աթոռակալ» ասելով, դու էլ ենոնց պես... Իսկ մեջ տեղը ոնչինչ չը կա. հըլը դեռ լուրեր էլ կան, որ խակի հատատելու չեն», ու քիչ եր մնում ավելացներ թե՝ իմացել են իր անունը «քամու ջաղաց» լինելը, յերբ քահանան վրա բերեց.

— Վե՞վ ըսավ, թե չըպիտի հատատեն:

Քահանան մատնիկոտ աչքերով մեկ յերկու

վայրկյան նայեց նրա յերեսին, ինքն իր մեջ խորհեց ու դառավ.

— Կսեմ՝ արի մեռեղ երթանք քաղաք, մեմ գործակալին տեսնիք, վե՛վ դիտե՛... ենիկ թղթերը գաստ չե գրկե, որ... վե՞վ դիտե, մարդ է, աշխարք է... ինաան բանդ հատ կաթ է ծծի...բուռը բանըմ դնենք...

— Տրդատը մի ճարահատյալ հայացք ձգեց յերիցի յերեսին ու խոսեց.

— Դե որ բանը եդման է՝ երթանք. էլ ի՞նչ ենենք...

— Հըմը գիտե՞ս, Տրդատ աթոռակալ, գործակալ տեսնիլը հանաք բան չե՞, գնր մե ու՞վ պատրաստություն տես, ենպես...

— Մե գառն, մե սերն, մե գունդն կաբաղ, մե գլուխմ պանի՞ր, մե փարչմ մածո՞ւն. հերի՞ք է:

— Մեն էլ մի գլուխմ շաքար, մի գրվանքեմ չա՞յ,—ավելացրեց յերեցը:

— Լավ, շատ լավ, թաքի եդ բանը գլուխ գա:

— Գլուխ կուգա՛. դու անհո՛գ կեցի. միայն թե չը մոռանաս մի քանի մանեթ էլ աջհամբուր պատրաստես:

— Ինչքա՞ն. մի կանաչ իրեքնոցմ հերի՞ք է:

— Մի կապտա հնդնոցմ՝ հերիք է. գրողս ուտի. ավելի չաժե էլ. հրամը դիտե՞ս ինչ. քրիստամը դու մի՛ տա. կը կասկածի՝ չի՛ աշխատի. տու ինձի, ինքս իրեն տամ, հետո էլ ինչ հարկավոր է՝ խոսիմ:

— Լա՛վ, ա՛ռ էս հնդնոցը, պատրաստվի յեղիան մեռեղ քաղաք երթալու:

— Բարի՝,—ձայնեց, քահանան առնելով թղթադրամը դրեց գրպանը:

VII

Արեգակը նոր էր ծագել:

Արուի ճյունապատ գագաթը շառագունած պապակամ էր: Սարերի հովն իջել էր ներքև և էր ալիքներով գուրգուրում էր ցորենի և գարու վոսկեգույն արտերը, վորոնք նազանի կերպով տարուբերվում էին նրա առաջ, «հորանց էյին գնում»: Արտերի թմբերում ու բլուրների ստրոտներում զանազան գույնի ծաղիկներ իրենց գլուխները անդադար ճոճում էյին, կարծես իրար մոտենալ—համբուրվել ուզենալով. իսկ հատած խոտերը, չարունակ վիրավորվելս անելով իրենց անպարկեշտ դրացիներին էյին բամբասում... Արուայրը յերկնքի ոխտը գաթը հատած ճախրում էր հա ճախրում և իր անվերջ յերգը ներքև մաղում. ծոերը իրենք

ծիլ-ծիլը գցել էին, մի տեղից մյուս տեղն էին տուրում. խակ լոբը, այդ ամենից շատ թշնամի ունեցող թեվավորը, վազտլուտ էր ելա-վազտլուտում, իր փոքրիկ ճագուկներին կանչում, իր շուրջը հավաքում. փոքրամարմին ուրուրները քարաբլուրների գլխին թառած, կամ յերկնքի յերեսը բարձրացած, վորս կամ լեշ էին վորոնում, վոր իրենց պարենը տեսնեին:

Տրտրան ու յերեցը գնում էին քաղաք. Տրտրատի ձիու մեջքը լիքը խուրջինի տակ, համարյա ճկվել էր: Տեր-Բառնաբասը մի գրուխ նայում էր խուրջինի միջի իրերին, մանավանդ սիրուն, ապխտակ դառան, վորը գրուխը խուրջինից դուրս հանած՝ տաշած նայում էր, թե ուր էին տանում իրեն այդպես նեղ տեղում խծկած...

Ճանա կողմից լսվում էր հայ հոտարի հայնը, վոր էր յեզ ու գոմեշին վարելու համար տուսվել էր յերգում.

«Հոտարդ, քշե վա՛ր ենե՛ե՛նք,
«Մե ակուն հարգա՛ր ենենք.
«Նաղլու խանումի համար
«Յեկող տարվա բա՛ր ենենք.
«Հո՛տարդ, հո՛, հո՛, հո՛, հո՛, հո՛, հո՛...

Հոտարդի մյուս ընկերներն առնում էին

նրա վերջին խոսքը և կանչում հո՛, հո՛, հո՛, հո՛, հո՛... ու իրենց գրասենները վարում։

Դրան հետևում եր յերկրորդ հոտովիլը.

«Վարե՛-վարե՛ այ գուլթան,
«Ակոս շարի, հա՛յ գուլթան,
«Մեռնիմ յես քու սուր խոփին.
«Ոանչալըրի փա՛յ գուլթան.
«Հոտաղ, հո՛, հո՛, հո՛, հո՛, հո՛, հո՛...

Խումբը կրկնում եր՝ հո՛, հո՛, հո՛, հո՛, հո՛, հո՛...

Այդ ժամանակ գուլթանի մոտով անցկացավ մի գեղջկուհի, վորը հաց եր տանում արտավորին. հոտաղները նրան տեսնելու պես յերգեցին.

«Գուլթանի մաճին մեռնի՛մ,
«Բռնոդի մաճին*) մեռնիմ.
«Արտը հաց բերող չեկ հարա,
«Քու մաս բարուճին մեռնիմ...
«Հոտաղ, հո՛, հո՛, հո՛, հո՛, հո՛, հո՛...

Մի գուլթան, վոր ճանապարհի վրայի արտերից մեկն եր հերկում, յերբ հասավ խճուղուն՝ կտրեց Տրդատի ու Տեր-Բասնաբասի առաջը. Չալխիջին (վերջին զույգը քշողը) յերգեց.

---

*) Մաճա—բարդուկ։

«Ցորը հավեն ինչ հով է՛ է՛...
«Տեսեք անցնողը վեվ է՛.
«Մեռնիմ ենոր ուղուրին,
«Դան*) ու դարմընի ծով է.
«Հոտաղ, հո՛, հո՛, հո՛, հո՛, հո՛, հո՛...

Նրանք կանգնեցրին իրենց ձիերը. քահանան բացեց գլուխը, փողի տեղ իր պահպանիչն տաց, իսկ Տրդատը մի սպիտակ սրտաի նվիրեց:

— Ե՛, սիթուակա՛լ, դրծերս յաչոգ է, դուխնվեր պատահալ:

— Յա՛ Սատվաց,—սրտաբուզիս ձայնեց Տրդատը և մտրակեց ձիուն:

Հազիվ յերկու ժամ անց նրանք արդեն քաղաքումն էյին, Կոժոյենց մանչու պանդոկում:

Տրդատն իր խուրջինը շալակեց, դառը խառնեց առաջ և քահանայի հետ շարժվեց դրծակալի տուն:

— Են յեռնի դռնով, յեռնի դռնով, կըհասկընա՞ս, որ մարդ չըտեսնի. իսկ յես կեր-թամ են չայն ու շաքարը չարու

Չեր անցել կես ժամ, վոր նրանք յերկուսով, նստած եյին գործակալի դիմաց։

Դա մի շուխուռ դեմքով քահանա եր, սարիքն առած, բեխերը տեղ-տեղ չերքած, աչքերը մանր ու շարժուն, այտերը քիչ նեղս ընկած։ Նա մատները շուռ-շուռ տանում եր մուրքի մեջ և մազերը սանրում, հետո եր անհոգ ծխում և ծուխը արվեստորեն ողակ-ողակ թողնում ոդի մեջ. ծխի ողակները երբեմն յեռանից, թեք ուղղությամբ, դեպի վեր սլանում, հետզհետե մեծանում եյին, լայնանում, ապա կտրվում, ցրվել դալիս սենյակի մեջ։

— Ե՞րբ ե ուղարկած թուղթը, Տեր-Բռնաբաս. կըյիշե՞ս թիվը։

— Կըլինի, հայը, եսպես երկու-իրեք ամիս։

— Կըսե՞ս, Վարդապետ,—կանչեց գործակալը գրագրին,—իրեք-չորս ամիս յառաջ։ Թղթերի տակը տես, կամ ան գզրոցի յեռանը, անկյուններում. տես մի տեղ ընկած մնացած լերսի։

— Աչեցի, չկա,— ձայնեց գրագիրը։

— Մի լա՛վ աչե,—նորից հրամայեց գործակալը և նորից ծխի ողակները շարեց ոդի մեջ. —շատ անպիտան ե. ո՛ր չի անցնի, որ մի թուղթ չըկորցնե. խոյ աչքը գործին չե. տես-

ներկու մանեթ ռոճիկ կառնի, կենա աչքը ան դռանն է, թե վո՛վ ինչ ընծա կբերի, որ մի բան ալ ինքը վերցնե. ա՛յ հիմի որ յես ատեղ նըստած շըլլե՛ի՝ աթոռակալի բերածի կեսը ինքն եր վերցնելու... ու ինձ ալ հավատացնելու, թե կիսատ են բերի... Գտա՞ր, ծո՛:

— Զե՛, չկա,—դարձյալ լսվեց Վարդադարի ձայնը:

«Վարդազարը վոր բերածի կեսը էլ վերցնե եր վերցնելու... ու ինձ ալ հավատացնելու, թե մոքի մեջ խոսեց, Տեր-Բառնաբասը:

— Վարդազար, միգուցե ուզարկել ես. մեկ ելյալ գործերի մեջ աշե:

— Աշել եմ, չկա:

— Հըպը ո՞ւր գնաց, ա՛յ մարդ:

—Ինքս ել չիտեմ: Ամեն որ ձեր ծառան կրմանի ետեղ մաքրելու, ինչ ասես կը վերցնե, կըբանեցնե. յերեկ ել կանխատրիայեն յեկած չըչաբերականն եր առե, չեքը դրե, թե «բարակ թուղթ ե, պապիրոս չինելու պետք կուգա»:

— Հայ անիծվի՛ եղ Զաքարը, հայ, որ չի անցնի, որ մի բան չըասրքե: Գիտե՞ս աթոռակալ, կապելու խելառ ե. հրմբ իրեն գործին արի. իրիցկաս հետ յոլա գնացող: Ըսենք ծառա

ընածդ քիչըմ խելքեն պետք է թեթև ելլի, ոտքեն չուտա... Գոտո՞ր, Վարդապար։

— Չե. ինչպես կերևա՝ կորել է։

Մինչդեռ մի կողմից Տրդատը զայրանում էր, թե ինչո՞ւ համար գործակալն իրեն, մյուսների պես «պարոն աթոռակալ» եր ասում, կասես դիտմամբ՝ ծաղրելու համար, քանի վոր թուղթն անգամ չըկար, մյուս կողմից գործակալ ու գրագիր են հավատին եյին, թե թուղթը, արդարև, իրենց մոտ կորսել է... Տեր-Բառնաբան ել արձանի պես գործակալի դիմաց նստած մտածում եր այն մի գլուխ շաքարի ու մի ֆունտ թեյի մասին, վոր փոխանակ գործակալի տուն բերվելու, արդեն իր խուրջինումն եյին, վոր գյուղ տարվեյին, իր իրիցուհուն ու զավակներին բաժին դառնային... Այդ միջոցին հանկարծ հարևան սենյակի դուռը բացվեց և մատուցարանը ձեռին ներս մտավ Զաքարը, մատուցարանի վրա շրած յերեք գավաթ սուրճ։

Զաքարի հեռուից ներս մտավ հաստամարմին, խոշոր աչքերով, խիստ կարմիր թշերով մի կին. նա բաղի նման կողքե-կողքի ընկնելով շարժվեց առաջ։

— Ասի՞կ է փերի դառն ու մեկալ բաները, տերտեր,—հարցրեց նա իր ամուսնուն։

— Այո՛, իրիցկին, ա՛ռ և, պարոն աթոռակալը,—խոսեց գործակալը և գլխով ցույց տվեց Տրդատին:

«Ե՛լի աթոռակա՞լ... յա՛հ. ես ի՞նչ է. չըլլի՞ ձեռք կառնեն...

— Ե՛, ախպար, բարով ես եկե, ինչի՞ ապես ուշ-ուշ կուգաս, թեզ-թեզ արի:

«Ցես եսոնց տուն յե՞փ յեմ եկե, որ թեզ-թեզ գամ»... զարմացավ Տրդատը:

— Ախար մենք բարեկամ յենք,—շարունակեց գործակալի երեցուհին,—հալա՝ յեթե չեմ սխալի՝ տերտերի կողմեն ալ՝ ազգական...

«Ցես գործակալին ազգակա՞ն... յա»... Բոլորովին շշմեց Տրդատը. «չըլլի՞ թե՞»...

— Հա՛, կարծեմ մեր պապերը Թորթանից, Կարապետ յեպիսկոպոսի որով որ յեկել են՝ էրարու ազգական պիտի եղած ըլլան,—կնոջ տուն աշխատեց կոճկել գործակալը:

— Անո՛ր համար ազգես համով ասեր ու կարագ ե վերե... Հայ ապրի՛ս, պարո՛ն աթոռակալ, պանիրն անմամն եր, մածունը՝ սերն երեսին. գառն ալ անպես գեր եր, անպես գեր, որ սալթ յեղ, ըսի մորթեն:

«Հըպը չայն ու չաքարը», մտքի մեջ հարցրեց Տրդատը, «եղանց անունը խակի չըտվե՛ց»:

— Տեր-Հայր, նեղությունն երա, որ յեռանի դուռը փակ էր, են մեկել դռնով նեռ ելա,—խոսեց Տեր-Բառնաբասը և նայեց Տրդատի յերեսին, վորպեսզի ցույց տա նրան, վոր թեյն ու շաքարը մյուս դռնով է ներս տարել, դրա համար էլ Տրդատը այն չե նկատել...

— Վնաս չունի, Տեր-Բառնաբաս, դու տան մարդ ես: Զրդատ՞ր Վարդապետ,—այս անգամ բարձր կանչեց գործակալը:

— Զրկա. էլ ծակ ու ծուկ չըթողի, ամեն տեղ աշեցի,—փոշոտ ձեռքերը թափ տալով գործատնից դուրս յեկավ Վարդապետը և ուզեց հասկացնել գործակալին, վոր եդ բանում ինքը մեղավոր չե:—Ելի են Զաքարի բանը կըլլի, թե չե,—և ուսերը թոթվեց:

— Ե՛, Տեր-Բառնաբաս, հիմի աս վոր-ձանքը պատահել է. ինչ կարող ենք անել: Գնա դեղ, ելի անպես մի թուղթ գրե, գեղացոց կանչե, թաքուն ստորագրել տու, իբր թե ելի ան թուղն է՝ գրկե ինձի՝ յես խակուն կը ճամբեմ Թիֆլիս:

Այդ լսելով Տրդատը մի խորը հառաչեց, վոր մինչ որս իզուր անոգուտ պատել է, որանից հետո էլ, Աստված գիտե, դյուզացիք կըստորագրե՞ն... Յեթե ստորագրեն էլ՝ իր մասին

այնտեղ—թիֆլիսում—աննպաստ կարծիք են կազմել... Կարող են չհաստատել:

Ցերեցն ուրախացավ, որ թեյի ու շաքարի հոտը դուրս չեկավ, քրթամ տալու հինգ ռուբլին էլ մնաց իր գրպանում...

Իսկ զորձակալն էլ ուրախացավ, որ թղթի կորավիլը հրապարակ չի գա, ճաշին էլ վիրավոր խանումի հետ գառան խորովածք ուներ ուտելու, վրայից էլ նոր նվեր ստացած կարմիր գինի կոնծելու...

Սրդեն սուրճը խմել վերջացրել էին, որ դերուկ տիրուհին նազանի քայլվածքով յելավ դուրս: Քիչ հետո ներս մտավ խենթուկ Զաքարը (ինչպես կոչում էին նրան) և չգիտես ինչու՝ բոլորի յերեսին մի տարորինակ ժպիտ գցեց, յետո ծիծաղեց, ապա գավաթները շարեց մառուցարանի վրա ու հրահրատով վազեց դուրս:

Կեսրը մոտ էր, որ Տրդատն ու Տերբառնարատը վերադարձան Կոժոյենց մանչու՝ Արտաշի խանը:

Նրանք քաղց էին զգում, գյուղ գնալը դեռ շատ կուշանար:

— Ե, աթոռակալ, մի բան չուտե՞նք:

— Ուտե՞նք. ինչի՞ չե,—նրան պատասխանեց Տրդատը և մտավ պանդոկ:

Տրդատը վարքան էլ բարկացած լինեը թուղթը կորավելու վրա, այնուամենայնիվ զգում էր, որ զրանում Տեր-Բառնաբասը մեղք չունի. ընդհակառակը նա իրեն ցավակից էր։

«Են–են–են–են են, Վարդազարը, են զակ-ցի լակոտը, յե՛ս ենոր են... Զուր տեղը տասվերկու մանեթ ժալումի կառնի, որ թուղթ կորցնե... Զըլլի՞ թե են ել... Հա՞», հանկարծ դուրս թռավ բերանից։

—Ի՞նչ չըլլի, խորովա՞ծ, Տրդատ աթո-ռակալ,—հարցրեց քահանան և շեղակի նայեց նրա յերեսին։

— Զե, (խորովածը) քաբաք ինչքան ուզես կա. ե՛դ չե։

— Հըլալը ի՞նչ. դինի՞, բախի՞. կա՛–կա՛, անհոգ կեցի, ինչքան ըսես... Հրամը ըսենք չըլլի ել յես յոլա կերթամ, յես ենպես մե շատ ուտողմ չեմ։

— Զե՛, տերտե՛ր Ջան, մեզա՛ Աստծու. եղ ի՞նչ խոսք է։

— Հըլալը ի՞նչ է։

— Կսեմ՝ չըլլի՞ են Վարդազարը է, ինչ զատ-ողբախ յե, մախսուզ թուղթը պահել է, որ մի բան ել իրեն առաջը ցքենք։

Ցերեցի աչքերը փայլեցին. նա բիբերը

խաղացրեց բների մեջ, ինչ վոր վորոշում կայացրեց մաքում ու հարեց։

— Են վե՞ր նզովվածն ե ըսողը, թե դու «քամու չաղաց» ես... Կարդս վկա՝ քեզի պես խելք ու հասկացող մարդ ես սանչղի մեջ մեմ ել դու յես։

— Ի՞նչպես,—վոչխարի աչքերով նրա յերեսին նայեց Տրդատը։

—Ո՞ւմ մաքով կանց կենար եդքան տեղը մտածելը, թե Վարդապարը եդ բանը մախսուզ էլենե, որ մե ոսկում ել իրեն առաջը ցքենք... Պա՛հ, քու տունդ Սատված չինի, աթռուակա՛լ մարիկ երա, ե՛, են որ զործակալը պատմեց, թե «նատած աչքը են դուանն ե, տեսնի, թե վե՛վ ինչ ընծա կըբերի, որ մի բան ել վրայեն ինքը վերցնե», հիմի հասկացա... Վանց ճրագի պրոկներ Սրբել, քու հերդ անիծվի, վա՛յ Փարմասն, նզովվի՛ս դու, որ ես տեսակ հասկացող մարդուն «քամու չաղաց» կսես... Նախանձեն, գիտե՞ս, Տրդատ աթռուակալ, նախանձեն... Հիմի ենիկ ենուեղ տրաք-տրաք կուգա, որ դու ենուեղ աթռուակալ յես դառնալու, ինքը ենուեղ, գեղացոց մեջ Փարմասն ե կնքվե...

Այդ հաճոյախոսության հանդեպ Տրդատը յոթերորդ յերկնքումն եր. նա, չիմանալով ինչ կերպ հայտնելու իր շնորհակալությունը,

չուռ յեկալ դեպի Կոժոյենց մանչն ու կանչեց։

— Արսա՛ շ, թեզ, սուֆրա ցգ՛է. քաբաբ, բախի, գինի, կանընչի, պանիր, թաց մեյվա, ինչ ունիս՝ բե։

— Շիտակ է, բաածդ է. են զակցի մանչու առաջը մի բան քցելու յե... Ախտոս որ ուշ բիր։

— Եսոր և յեթ եդ բանը պիտի ենենք. վե՞վ դիտի, բալքի թուղթը լուս աշխարք ընկնի։

Ֆուֆրեն արդեն գցած եր, տաք խորովածի գոլորշին բարձրանում եր ափսեյի միջից. խորովածի շուրջը շարված եր թարգա հացը, ողին, կարմիր գինին, մատղաշ սոխը, պանիրը և նոր յեկած բալը։

— Ինչքա՞ն և պետք. մի իրեքնոցը հե՞րիք է,—ցածր հարցրեց Տրդատը, վոր Կոժոյենց մանչը չիմանա։

— Իհարկե, հերի՛ք է. ավել էլ չաժե. դրո՞զ ուտի. համ թուղթը կոբցնե, համ էլ իրեքեն ավել առնի՞ի՞...

— Տո թող գանի, թող առնի, հալալ ըլլի, դարձյալ ցածր խոսեց Տրդատը և յերեք ռուբլիանոցը սողացրեց քահանայի բուռը։

Տեր-Բառնաբասի աչքերն ուրախությունից փայլեցին. նա փողը դրպանը դրեց և կոնծեց մեծ գավաթով ողին։

Նրանից հետո նույն բաժակով կոնծեց Տըրդատը և ապա յերկուսով հարձակվեցին խորովածի վրա. նրանք չեյին ուտում, այլ լափում էյին. Տեր-Բառնաբասը դեռ ձեռի պատառը չվերջացրած մյուս կտորն էր ընտրում, ավելի փափուկը, ավելի յուղալին. նա, վորպեսզի իր սիրած բոլոր կտորները կարողանար ուտել՝ բերանինը կուլ էր տալիս, գրեթե, առանց ծամելու, վրայից կոնծում էր ողին, բողկը տանում բերանը, վոր ախորժակն ավելի գոգվեր:

Յերբ վոքը չիշ ողին վերջացրին՝ նրանք բաց արին կարմիր գինին. այստեղ արդեն Տեր-Բառնաբասը խմում էր վոչ թե գավաթով, այլ թեյի բաժակով... Սգահաբար ուտելուց վոչ միայն նրա ընչացքը, այլ և ձեռքերն ու մորուքը թաթախվել էյին ճարպի ու գինու մեջ. խորովածի մանր կտորները թափվել բաղմել էյին նրա խրտ, տափանի նման, մորուքին. ճարպը ծորում էր նրա մատների արանքով, և նա մի գլուխ ուտում էր ու կոնծում:

— Ե՛ֆ, ե՛ֆ, ե՛ֆ ե՛ֆ... Ես մեր Տեր-Հիտուսի անարատ արյունն է, Նոյի քամածը, հայի հավատը. թուրքը չիտակ է ասե, թե՝ «գինի՝ եմանքն գինի»... Ո՛հ, քու աստղծողիդ մեռնեմ, կարմիր գինի. դու խոյ մենակ խը-

միշտ չեմ, դու մեզի համար երկնքից իջած ցող ես, ցո՛ղ...

— Լա՞վ գինի է, տեր-հայր. կը համնի՞ս, — հարցրեց Կոժոյենց մանչը:

— Հրաշալի յե, հրաշալի. կատարյալ մեղոն:

— Աղ գնեցեն մի անգամ ալ շատ խնդրեց ձեր գեղացի Բեթանենց մանչը, Աբելը, անոր համար բացի, կարծեմ ձեր գեղի ժամկոչի հետ եյին եկե. խմցուցի. հիացան. հրամը լավ ալ հարբան. իլլաքի ան ժամկոչը, որ հեռաստաց՝ ավանակի պես ձգվավ առ թախթի տակը մինչի իրիկուն:

Կոժոյենց մանչու այդ հայտարարության վրա Տրդատն ու Տեր-Բառնաբասը մնացին քարացած. նրանք ծամելն անգամ դադարեցրին, և շշմած նայեցին իրար յերեսի:

«Ի՞նչպես. ժամկոչ Բզդեն... Մեծ բերան Աբելը միասի՞ն...»:

— Ինչպես, թե «ավանակի պես ձգվավ», — յերեսի գույնը գնացած հարցրեց Տրդատը:

— Անքան որ գինին լավն եր, — վրա բերեց Կոժոյենց մանչը:

— Վա՛յ, նզովից արմատ, վա՛յ չար Հուլիանոս, վա՛յ իժի ծնունդ, վա՛յ սայլուկ Բզդ-

պե,—վրդոված ասաստանեց Տեր Բառնաբասը։

— Ադ գինեցեն ալ ունեմ, ա՛յ, կամենա՞ք,—խոսեց Կոժոյենց մանչը, կարծելով, թե քահանայի բարկանալը Բզդեյի վրա նրա համար է, վոր նա բոլոր լավ գինին խմած կըլիներ, ու պնաց դեպի նոր յեկող մուշտարիները։

— Են Աբելը խմցուցած կըլլի, են ոձի ձագը. ո՛—ո՛—ո՛ ենոր լեզուն որ կա՝ Հիրովդեսի աղջկա լիզվեն ել սուր է. մարդու գլուխ կտրել կուտա,—ասաց քահանան և գլուխը տարուբերեց։

— Հայ գարշից ուտող չան լակոտ,—քահանային կարեկցելով արդար զայրույթով հայհոյեց Տրդատը։

— Ցես ենոր հալատարիմ մարդու տեղ ընդունեմ, պահեմ, հաց տամ, որ ենիկ երթա են Ֆարմասոնի հետ ընկեր դառնա՞...

— Ե՛դ ըսա, ե՛դ։

— Ա՛յ դու ուրացող Վասակ, Հուդա խակարովասցի, սպասե դո՛ւ...

— Գեղ երթանք՝ մե լավ դասասանդ տես։

— Կուզե՞ս, աթոռակալ, մե լավմ «զոբս դու պատվիրեցեր ենեմ»։

— Հըլալըթ կուզեմ։

— Որ եղման է՝ ես պուտիլկի պես յես ենոր գլուխը ջախջախելու յեմ,—և ի ցույց Տրդատի, Տեր-Բառնաբասը ոյնպիսի մի ուժով գետնով ավեց լիքը շիշը, վոր նրա փշրանքները գինու կաթիլների հետ շատ ավելն պանդոկի շորս կողմը:

«Բարեկամն եղման կըլլի, ա՛յ», վոգևորված մտքում խոսեց Տրդատը:

Կոժոյենց մանչը, վոր այդ ժամանակ մի ուրիշ տեղ ուրֆուս յեր գցում, չիմանալով, թե բանն ինչումն է՝ մտքում ասաց. «ասոնք ալ շատ խմելեն խելքերը թռուցին», և հիշեց այդ բոպե, թե վո՛ր քան ջուր ու ոդի յեր խառնել իր «անարատ» կոչված գինու մեջ:

Տրդատը Կոժոյենց մանչու հաշիվը, մեկին-յերկուս, մտքելուց հետո ձի նստավ, շտապեց Տեր-Բառնաբասի յեռեից, վոր դյուղ գնային և այնտեղ ընտրության թուղթը նորից ստրքեին...

---

# ԱՆՄԵՂ ՀՈԳԻՆ

## I

Նա էր մոր միակ որդու զավակն էր, նրա հույսն ու ապավենը, վոր մեծանար, լույս քաշեր, հոր տան ու տեղին տեր դառնար, չը թողներ նրա ոջախը մարելու։

Նրա մարմինը վոսկեզույն էր, գանգուր, այտերը թխլիկ, աչքերը խաժուժիկ, ժպտուն, շրթունքները նուրբ, վարդագույն, վորոնք նրա կանանավոր քթի հետ մի հազվագյուտ ներդաշնակություն էին կազմում և տեսնողի ուշադրությունը գրավում։

— Ես տեսակ եր ոունդ տղա. կասես հրեշտակ ըլի։

— Ասումած մորը բաշխե. մեծրնա, հոր տան ու տեղին տեր դառնա։

— Խեղճ մեր ջահել-ջահել նստավ, մարդու շրջնաց, վոչ ել տան վրա մարդ բերեց, հույս դնելով իրեն մեկ հատ վրա։ Ասումած պատվեն ենե։

Հաճախ խոսում էին իրար մեջ դրացի-

ները և ուրախանում փոքրիկ Սուրիկի, (այսպես էր մանկան անունը) աճելուն ու մեծանալուն:

Սուրիկը մոտ ութ տարեկան էր, վոր մայրը մի ձմեռ, Թոնրատան խիստ ցուրտ լինելու պատճառով, վորոշեց իր զավակին զոմի ողայում քնեցնել. իսկ ինքը իր յերկու փոքրահասակ աղջիկների հետ մնաց Թոնրատանը. և վորովհետև Սուրիկը կարող էր վախենալ՝ այդ պատճառով պատվիրեց իր տան մշակ Համբարին, վոր նա այլևս չգնա իրենց տուն, այլ մնա դիշերը Սուրիկի մոտ քընելու:

Համբարը, թեև դժգոհ այդ բանից, յենթարկվեց տանտիկնոջ հրամանին և Սուրիկի հետ սկսեց քնել զոմի ողայում:

Համբարը ամեն յերեկո տեսնում էր, թե ինչպես զորովագութ մայրը պառկեցնում էր տեղաշորում իր գուրգուրած զավակին, փաթաթում նրան վերմակով, աղոթում նրա համար, խաչակնքում չար աչքից ու չար սատանայից ազատ մնալու համար, համբուրում և բարի գիշեր մաղթելով հեռանում, նախապես պատվիրելով իրեն—Համբարին, վոր լավ նայե իր աչքի լույս միակ վորդուն, պահպանե նրան:

Կարճ ժամանակից այլ տարիներով մի-մյանցից տարբեր մարդիկը՝ Սուրիկն ու Համբարը դարձան լրջամիտ ընկերներ. մոր հեռանալուց հետո մինչև քնելը Սուրիկը վեր էր կենում վերմակի տակից, նստում անկողնի մեջ և Համբարի հետ զրույց անում: Համբարը պատմում էր նրան յերբեմն հեքյաթներ, վոր Սուրիկը սիրում էր և հափշտակությամբ լսում, յերբեմն զվարճալի բաներ, յերբեմն էլ առասպելներ չարքերի ու դևերի, սատանաների ու չվոռների, խոռթլաղների ու փերիների մասին...Սուրիկն էլ իր կողմից բաժին էր հանում նրան այն քաղցր պատառներից, վոր մայրն, իբրև բացառություն, տալիս էր նրան, շատ անգամ դնում բարձի տակը:

Այսպիսով անցնում էին որեր, շաբաթներ, նույն իսկ ամիսներ:

Սուրիկը առավոտները միշտ վեր էր կենում անկողնից, հագնվում, սպասում մոր գալուն, նրա «բարի լույս» մաղթելուն և ջերմ համբույրին:

## II

Ձմեռվա վերջն էր:

Մի առավոտ յերբ մայրը, ըստ սովորականին, դարձյալ յեկավ վորդուն տեսնելու, բարևելու, համբուրելու՝ տեսավ, վոր Սու-

բիկը տակավին քնած եր անկողնում, ինչպես այդ հաճախ պատահում եր ուրիշ անգամ: Նա մոռեցավ զարթեցնելու, կռացավ զավակի վրա, հանկարծ նկատեց, որ նրա դեմքը դարուկ եր, աչքերը կիսաբաց, բիբերը ապակիացած: Նա ձայն տվեց, շարժեց նրան, բայց վոչ մի ձայն չլսեց. շոշափեց, տեսավ, որ նրա մարմինը սառել եր...Նա մի սարսափելի ճիչ արձակեց և փռվեց հատակին:

Ճչի վրա ներս թափվան դրացիները, տեսան՝ մայրը ուշագնաց ընկած հատակին, որդին մեռած-պառկած անկողնում: Վողջ գյուղն իրար խառնվեց. նրա համար ստեղծվեց մի տեսակ հանելուկ, մի վողբալի տեսարան. բացն ու կոծը, հառաչն ու կսկիծը, հեռաքրքրությունն ու հարց ու փորձը, թե ինչի՛ց և մեռել մանուկը, իրար խառնվեց...մանավանդ մի այդպիսի անապատելի ու սարսափելի մահ, որ գիշերը պառկին քնելու և առավոտյան տեղից չըվեր կենան՝ մխիթարելի ծերերին, այն ել զառամյալ ծերերին ու պառավներին և պատահում, վոչ յերեխաներին:

Հավաքվածները չգիտեին ինչ ասեին, ի՛նչ անեին. սպանության վոչ մի հետք չկար, վոչ ել խեղդած լինելու վրա և նշան, որ յուզարաշին ու նրա հետ եկած մի քանի համ-

բանները կարողանային մի բան հեռացնել, մեկին կասկածել. կասկածել հենց ասենք Համբարին, վոր Սուրիկի հետ գոմի ոդայում քընելիս և յեղել... անգամ յեթե կասկածեցին էլ՝ ի՛նչ եյին անելու. ասելու եյին, թե «Սուրիկին դո՛ւ յես սպանել». բայց ի՛նչպես ասեյին, քանի վոր մեջտեղում վոչ մի ապացույց չկար. ուրեմն էլ ինչ հիմունքով մարդու մեղքը առնեյին...

— Չե՛, չե՛. եսանց ոնչովի մեղքը չիլլի,—վրա եյին բերում շատերը, մանավանդ Համբարի ազգականները և նայում նրա յերեսին, վորի գույնը թանի գույն եր դառել:

— Իմ էլ խելքս ենպես կը կտրե, որ եսիկ մարդու երած բան չե. եսիկ Աստծու իրեն բանն է,—իր կողմից կարծիք եր հայտնում յուզբաշին:

— Տեսեք ոդեն (Համբարը) վախեն ու կսկծեն ինչպես յերեսի գունը ցդել է. կսես մեռելի յերեսի գուն ըլլի:

— Դժար է հաստատ բան ասելը,—հարակցում եյին հատակավորները և վերջ տալիս խոսակցությանն:

«Սակայն, ինչի՞ց եր առաջ եկել մահը, շատերին զցում եր այդ հարցը մտատանջության մեջ, քանի վոր մանուկը վոչ տկար և յե-

լել, վոչ հիվանդ, վոչ էլ նախընթաց յերեկո-
յան զանգատվել և վորևե բանից, այդ յերեկո
էլ նա այնպես և համբուրվել մոր հետ, մտել
անկողին, ինչպես մյուս յերեկոները, հապա
ուրեմն ի՞նչպես և պատահել, վոր յերեխան
այդպես, հանկարծ, մի գիշերվա մեջ ձեռքից
գնացել է»...

Վոմանք ասում էին, վոր սատանաներն են
խեղդամահ արել, դրա համար էլ մարմնի վրա
մատերի վոչ մի հետք չե մնացել, մանավանդ,
վոր հանեյենց զոմը գյուղում հայտնի եր իր
«սատանաներով». վոմանք պնդում էին, վոր
«գևերն» են նրա անմեղ հոգին տարել, վոր
իրենց զուլ ենեն, ծառայեցնեն, վոմանք էլ ի-
րենց գլխին զոռ էին տալիս, թե «Սուրիկը
շատ գեղեցիկ, հրեշտականման լինելու պատ-
ճառով «Աստծուն» պետք է եղել («Աստծուն
լավերը միշտ պետք են»), դրա համար էլ
Աստված տարել է նրան իր մոտ, վոր հրեշ-
տակ դարձնի, «հրեշտակների գունդը խաս-
նի»...

Բայց և այնպես այդ բոլորը գյուղի համար
մնում եր անբացատրելի

Ցեվ այդ բացատրություններից վոչ մեկը
չեր բավարարում վորդեկուրույս մորը. և նա
իր զավակի թաղումից հետո, (վորպիսի թաղ-

ման մատնակցեց ամբողջ դյուղը. և ինչով կարող եր, աշխատեց մխիթարել նրան) հաճախ լացակումած աչքերը ուղղում եր դեպի Համբարը և հարցնում.

— Համբար Ջան, ախպեր ի՞նչ եղավ, որ մի դիշերվա մեջ բալես ձեռքես գնաց. դու քովն էյեր, ոնչինչ չիմացա՞ր...

— Ոնչիչ, Նազլո՛ւ խանում, ոնչիչ,—պալկացած դեմքով հազիվ արտասանում եր Համբարը:

— Հըպը ի՞նչպես պատահավ. հե՞չ բան չը տեսար:

— Ի՞նչ պիտի տեսնեյի, խանո՛ւմ,—յերկյուղած վրա եր բերում Համբարը և լռում:

— Բալքի դիշերը մենակ թողել, գնացել ես տուն, նշանածիդ քով, չիտա՞կն բան:

— Զե, չե՛, խանում Ջան, չե. եղ ի՞նչ ենելու բան է. խոյ ուրա չեմ,—հայացքը Նազլուցից (այսպես եր մոր անունը). վախցնելով բացատրում եր Համբարը:

Ու այն որից, յերբ մահացավ Սուրիկը, Համբարը հրաժարվեց Հանեյենց դռան ուրտում մենակ մնալուց—քնելուց, պատճառ բերելով, վոր նախ Սուրիկն այլևս չկա, յերկրորդ՝ մենակ քնել վախենում է:

Ցեղ մի այն առավոտները, այն էլ շատ ուշ,

յիրը արդեն բոլորովին լուսացած էր լինում, հակառակ դյուզական սովորության, վոր լույսը դեռ չը բացված ճրագով հոգում են ա-նասունները, նա—Համբարը դալիս էր Նազլույենց տավարը հոգալու:

Ցեվ Նազլույի այն հարցին, թե ինչո՞ւ յի նա այնքան ուշ դալիս, Համբարը պատասխա-նում էր, վոր շատ խորը քնած է լինում, չի կարողանում ժամանակին զարթնել...

## III

Մի քանի որ անց, հանկարծ, դյուղում լուր տարածվեց (գեղում վոչինչ ծածուկ չի մնում), վոր Համբարը քունը կորցրել է, դի-ջերները քնի մեջ բղավում է, տեղից վեր է թռչում, զարթեցնում է կնոջը, ճրագը վառել տա-լիս, ինչ վոր անորոշ, անկապ խոսքեր արտա-ստանում, տարտրինակ շարժումներ անում, յեր-կար այնպես մնում, ապա, յերբ հոգնածու-թյունից ու անքնությունից թուլանում է, թմրում, մնում է մինչև լույս:

Կին ու տնեցիները այդ յերևույթի առաջին տեսքը Համար տանում էին նրան ժամ, քա-հանային նրա յերեսին սվետարան թափ տալ տալիս, կամ յերեցին կանչում էին տուն՝ նրա վրա նարեկ կարդալու, և կամ տանում էին

նրան մոտիկ սրբերը, մոմ վառում, խունկ ծխում, մոտաղ անում, մինչև անգամ վախ ունեցող Շարլին Սուրտայից կանչում, վախը ընկել տալիս:

Սակայն վոչինչ—վոչինչ չեր ազդում. քանի գնում Համբարն ավելի նիհարում եր, դալկանում և սարսարի (ցնդած) դառնում. նրա աչքերում հետզհետե մարում եր կենդանությեան հուրը, ախորժակը կորսվում և նա դառնում եր մի տեսակ վերանա, ցնդված...

— Անպատճառ Սուրիկի կսկիծեն կըլլի,— բացատրում եյին վոմանք,—չունքի Սուրիկին շատ կըսիրեր:

—Սուրիկի մահի շորշոփը հասած կըլլի,— ավելացնում եյին մյուսները:

— Վե՛վ գիտե, ըլլի որ մի ուրուշ բան է,— կասկածելով վրա եյին բերում ուրիշները և անկարող լինում իմանալ Համբարի այդ տեսակ դառնալու պատճառը:

## IV

Մանկան թաղումից անց եր կացել յերկուսերեք շաբաթ:

Գարունն արդեն բացվել եր:

Հաբաթի կենսաբեր հոգին անցնելով դաշտերի ու հովիտների վրայով՝ զարթեց-

նում, հարուածյուն էր տալիս մայր յերկրին. ծրում էր ձնծաղիկը նրան հեռանում էր մանուշակը, բանում էր խոտը, դարարում գետինը, վոտներ եյին արձակում ծառերը, թփերը, հալված ձյուններից գոյացած ջրերը մի կենդանի կարկաչով թափվում եյին բարձունքներից ներքև և շտապով վազում խառնվելու գետակներին ու գետերին. գոռում էր ամպը, վայրառակում վայրակը, քնած տեղից դուրս էր գալիս գորտը և սկսում իր կռկռացը, ուրում էր նոր վերադարձած սարյակը, ջրերի մեջ, նամանավանդ Սամփերեանց Մատյի ջրարբի գլուխը, գանդաղ ու ուշադիր քայլերով մոնում էր գալիս արադիրը և կեր վորոնում, յերկնքի սխատը գոմեշով վերադառնում էր կռունկների շարանը:

Ամեն ինչ հարուածյուն առած, նոր կյանք ստացած իրենց գլուխները հողի տակից ու իրենց տներից-բներից հանած դուրս եյին յեկել:

Յերկրագործը նորոգերով իր արորն ու սափանը դուրս էր յեկել գաշտ սերմն ու հուր հողին՝ Աստծուն հանձնելու, վոր նրից մեկին տար յեռ գառնար իրեն, ամբարն ու շտեմարանը լցնելը. կարերում ու մորգանոցներում մակարում եյին նորածին գառների ու հորթերի վոբրիկ հոտերը, խակ կովերի նո-

խիզն ու ձիյերի իլխին, հետո տեղ քաշված, սրածում էյին դարար խառը:

Այդ բոլորի մեջ Նազլուն էր, միմիայն Հանէյենց Նազլուն, վոր վշտահար, խելքն ու հույսը կորցրած, պատրաստություն չէր տեսնում դաշտ դուրս գալու, մանավանդ, վոր իր տան միակ մշակ Համբարը հիվանդ էր, անընդունակ վարելու—ցանելու: Նազլուն փրնտրում էր նոր մշակ. այդ էլ դատել էր նրա համար բավականին դժվարին, բան վորում շատերը վախենում էյին նրա տատանելով համբավավոր գամից և Համբարի գլխին յեկած փորձանքից, նրա տացած տարբինակ հիվանդությունից...

Նազլուն, տրված էր ծանր վշտով, ամեն տեղ գնում էր վորդու շիրիմը այցելություն, յերբեմն մնում այնտեղ, ապրիք անում, համբուրում մինուճար որու զավակի գերեզմանը և արտասուքների մեջ խեղդված վերադառնում տուն:

## V

Այն որից, յերբ այդ յերեխայի—Նազլուի հաճախ վորդու գերեզմանն այցելելը—նկատեց Համբարը՝ ավելի վատացավ նրա դրությունը

թյունը։ Նա բոլորովին կորցրեց իր հոգու հանգիստն ու անդորրությունը։

Մի օր երբեք նա, բան ասելուն մի բառ անկողին քնելու, հանկարծ յերկինքը թխկեց, բարձացավ մի անասելի փոթորիկ. անձրևն սկսեց վերևից թափվել կժերով. ամպերի վրայից յերկիրն սկսեց դղրդալ, ինչպես չրաղցի հատիկը յերդիցնաքարի տակ. փայլակը սոսկալի կերպով սկսեց փայլատակել և կայծակն անխնա կերպով սկսեց հարվածել համբերատար մայր յերկրին։ Դ... դյուղը, վորի մեջ ապրում էր Համբարը, յերբեմն լուսավորվում էր աչք ծակող ուժեղ լույսով։ Յերկնքի և յերկրի մեջ առնվում էր մի զժոխք, մի անասելի վիճակ նրանց մեջ յեղած բուսական և կենդանական աշխարհի համար։

Համբարը յերբ այդ բոլորին լույսն նայեց՝ հանկարծ նրա մտքի առաջ անմեղ մանկան—Սուրիկին, և ամբի գոռոցի հետ մեկին լսեց նրա այն խոսքերը, վոր նա արտասանեց այն գիշեր, «Համբա՛ր ախար, հասի՛, սատանանքն եկան խեղդելու»... Նա մտապատկերեց այն չարաբաստիկ յերեկոն,—ո՛հ, անիծած յերեկո,—ինչպես նա, վոր մուշտակը շատ աված հագավ, գլխին ծածկեց մի տարբինոն

բրդոտ փոքրոջ, յերևոյն քսեց մոռը, նոխտոպես վերցրած ոչխարի ծխնելուղի զուռոմից, նախ զոմի մի անկյունից սկսեց Սուրիկի համար տարտինակ ձայներ արձակել, ապա փոքրիկ կոչտեր գցել դեպի նա, և ապա, յերբ Սուրիկը սկսեց հազիվ լսելի ձայնով կանչել «Համբար ախար, հասի, ստամենամանքս եկան խեղդելու», հարձակվեց ներս՝ զոմի ոգա և մի չնչով հանդցնելով ձեթի ճրագը իր տարտինակ ձայներն սկսեց շարունակել... Հիշեց, թե ի՛նչպես այդ ժամանակ մանկան ձայնը քանի գնաց նվազեց ու նվազեց, ապա սկսեց խռխռոցը... նա ղղջաց իր արած սխալը և սկսեց խոսել, «յես տա՛ս յեմ, Սուրիկ, մի՛ վախենա, յես հոս յեմ», սակայն արդեն ուշ էր, մանկան խռխռոցն արդեն ընդհատվել էր և ձայնը խորտակվել...

Նա շշմեց նրան, տեսավ, որ անդամալույծ է էր... Ճրագը վառեց տեսնելու, հույս ունենալով, թե վախից նրա լեզուն բռնված կլլինի, սակայն վա՛յ քեզի յեղավ նրա սարսափը, յերբ նկատեց, որ Սուրիկը այլևս չէր շնչում. նա մեռած-անշնչացած էր իր արած կատակից...

Համբարը ինչ որ սարսափից, սարսափ, որ նրան հայտնի չէր՝ վախից էր, թե խղճաքից, ինքն իրեն կորցրեց, արագ-արագ հանեց մուշտակը, մի կոպմ շպրտեց փոքրոջը, զոմի

գոլ մեջ լվաց ձեռները ու յերեսը, և ծածուկ գնաց իրենց տունն և մյուս որը շատ վաղ, յերբ լուսը դեռ չեր բացվել և տանտիկինը դեռ վերկացած չեր, խակ գլխավորը, վոր զուրաբ վոչ վոք չըկար, նա սրտագոգ յեկավ Հանեյենց տունն՝ մալը հոգալու։

Նա մոտպատկերից այդ բոլորը և մի սարսափելի, սուր ճիչ արձակեց.

— Եկա՛վ, եկա՛վ, ելի եկավ...

— Քա վե՞վ եկավ. վե՞վ,—քնից վեր թռչելով հարցրեց նրա սոմուռինը և վառեց ձեթի ճրագը։

— Ենի՛կ, ենի՛կ,—ինքն իրեն կորցրած խոսեց Համբարը և աչքը ձգեց վառված ճրագին։

— Հիսո՛ս ու Քրիստոս, ձայնեց կինը և հավատով խաչակնքեց յերեսը։

— Զա՛րման, Զա՛րման, ես վե՞ռեզ եմ յես. մեր տո՞ւնը, հա՞, թե Հանեյենց զոմը։

— Մեր տունը, մեր տունը. քեզի ի՞նչ եղավ, քա մա՛րդ։

— Մեր տո՛ւնը, հա՞... ունչինչ, ունչինչ..

— Սխալ եզ վե՞ր չունն է, որ կուզա... Յես եզ եկոզի են անկվի կոթին...

— Չե՛, չե՛, մի՛ լաե. եզ եկոզը չուն չե... Եզ եկոզը են է՛, են...

— Հրապը ի՞նչ է. վե՞ր դրոշի տարածն է, որ...

— Ոնչի՛չ. ոնչիչ... Քիչ չա՛ր տու։

Զարմանը մոբշապայով չուրը տվեց նրան։ Համբարը առավ և մինչ նա պատրաստվում էր խմելու՝ հանկարծ այդ ժամանակ, փայլակը նորից փայլատակեց, դրա հետ ոնմիջապես տվեց կայծակի ճայթյունը։

Կայծակի այդ հարվածը, կատաղ, Համբարի գլխին իջավ. նրա ձեռքերը դողացին, ոոշպան վայր ընկավ ձեռքից, չուրը թափվեց նրա վրա և անկողինը թրջեց։

— Հիսո՛ս ու Քրիստոս. եդ ի՞նչ չար և յեռեդ ընկե, մա՛րդ... ես ի՞նչ բերիր մեր դրախը։

— Հե՛չ մի չար չըկա... չըկա... ենպես... ձեռներս դողաց կեծակեն, կարծեցի թե ինձի դիպավ...

Զարմանը մաքրեց նրա վրան. դոշակը շուռ տվեց, նաչինպես և վերմակը և սկսեց հանդարտացնել մարդուն։

Համբարը քիչ դադարից անհանգստությունից և, գրեթե, ուշագնաց ընկավ տեղաշար և մինչև լույս մնաց այդ դրության մեջ։

Հետևյալ առավոտ վաղ վերկացավ Համբարը, ավելի տատիկ Ջարդված, քան մայր յերկիրը յերկնքի հարվածներից. նա անընչմաբելի դուրս յելավ դյուղից, իր քայլերն ուղղեց դեպի Խամիներենց Մատրի Ջաղացը, նայեց նրա վերևը, տեսավ, թե ինչպես ուռի ծառը մխոյնակ կանգնել էր նրա դլխին, բանդի մոտ, ինչպես այդ ուռի ծառից քիչ հեռուն, մի գյուղի դլխին դրված քնի մեջ, մի վառի վրա, կանգնած էր արու արադիլը թռչնաց նաված մարի արադիլի մոտ, ինչպես ուռճացած առուն շտապով հոսում էր դեպի Ջաղացի նավը, ապա ուժգնությամբ վիժվում –թափվում ցած և այնտեղ, Ջաղացի հատակում, ահագին իրարանցում առաջ բերում:

Համբարը մի լոպե նայեց նավի բերանին, աչքը դցեց նրա միջով արագությամբ հոսող Ջրին. Ջուրը տարավ նրա աչքը, քիչ մնաց, թե նրան իրեն էլ տաներ, սակայն, կատես, մի անյերևույթ ձեռք, այդ վայրկյանին յետ քաշեց նրան... Նրա վառքերն սկսեցին դողալ. նա վայր ընկավ և հոգիով կարոդացավ արտասանել.

— Զե՞մ կըրա, չե՞մ կըրա...

Եվ զրուցեցան մեջ մի քանի բոպե մնալուց հետո նայեց նա իր շուրջը, որ չլինի, թե որևէ մեկն իրեն նկատեր, տեսավ, որ ոչ ոք չկար. վեր կացավ տեղից, նայեց կապուտակ լերկնքին և տեսավ, թե ինչպես լերկնքի հավքերն անխուլքի սրտով եղին վճիռ լերկնամարի տակ, ճոլռում, այս ու այն ուղղությամբ ճախրում հեռանում... ապա նա նայեց հետո՝ լեռներին, դաշտերին, տեսավ, թե վորքան զվարթացել եր գիշերվա լերկունքի տակ լեզած լերկիրը, ու նոր դուրս լեկած արևի վառկե շողերի տակ հրճվում... Դիտեց, թե ինչպես խոտերն ու ծաղիկները իրենց գլուխները մխաթար տանում-բերում եյին, կատաղ մի խաղաղ լերգ—մանի տում և իրենց հոլյար գիշերվա տանջանքից չը կորցրած՝ ապրում, կյանք վայելում...

«Ի՛նչ. լես և չե՞մ կրա եզոնց պես գտա—նա». մոքի մեջ խոսեց նա և մի նոր հուլսով ներաշնչվեց:

Նա լերեսը շուռ տվեց դեպի մյուս կողմ և տեսավ, որ տղեն լերևում են չինա—կանները արտ գնալիս, ուլերի ու դառների փոշը լերամակները, վոր փոքրիկ մանուկնե—ը, առանձին-առանձին քշում եյին դեպի ա—ռտ. նկատեց գյուղից հեռացող նախրի բա—

ռաշը, կայսրաց ձիյերի—իլխիի—զվարթ վրին-
չը, մանավանդ նորածին քուռակների սրար-
շավ վազքը, այդ բոլորը դիտեց, հետո յերեսը
շուռ տվեց դեպի արևելք՝ արևը, խաչակնքեց·
արևի վոսկե ճառագայթների մեջ տեսավ վոսկի
թևերով բզզացող մեղուներին, մանավանդ
այն՝ ուղիղ արևի կողմը թռչող մեղուներին,
վորոնք գնում էին դեպի այն դյուղը, վոր-
տեղ տպրում էր իր հեռավոր ազգական Տեր-
Թամալոնը. հիշեց նախնիներից մնացած ավան-
դը, թե ամեն մեղք ներելի ու քավելի է, յեթե
այն, սրտից խորքից, խոստովանես յերեցին,
վորը Աստծու և մարդկանց միջնորդն է, և,
յերեցը թողություն խնդրե յերկնավոր միրա-
չից... Հիշեց և քայլերն ուղղեց դեպի Հարե-
վան Գ... գյուղը:

«Անպատճառ ենթիկ ինձ թողություն կը
խնդրե ասածներս կը ներե ինձի ու կը փա-
րատե ես ցավը... Ենթ՝ կ, մեննակ ենթիկ, Տեր-
Թամալոնը. գլխավորը՝ ենթիկ ոնչովի ոնչիչ չի
բան... Չե թե մեր դեղի Տեր-Կարապետը, որ
ասում բարկանա, անիծե, ասի դեղի մեջ դա-
վոր զանոնա գրկե, ինչպես՝ մե հերամ չամ
էրավ, են ել ծարրուծանակով մե հարբեմ խոս-
տովանանքը, թե ենթիկ պոտ և կերե... Ո՛, չե՛,
եղ, եղ ոնկարելի և, եղ սարսափելի է»...

## VII

Այդ մութերի հետ էր Համբարը, որ հասավ Գ... այն ժամանակ, երբ շեն գյուղի հարյուրավոր կտուրներից քուրա-քուրա բարձրանում էր թոքոնների մուխը և խառնվում նախ շվաքի մեջ մնացած չղարշանման ողի հետ, ապա վոսկեզոծվելով արևի ճառագայթների տակ բատրային գույն առնում, յեթե նում վեր՝ ոգու յեթերում ոգու բոգբու և հալվեր-ձուլվելու բնության հետ, նրա ծոցում:

Հազիվ իրեն պաշտպանելով գյուղի դամբուն և բրդոտ շներից, վորոնք խիստ նախանձախնդիր են գյուղի միջով, իրենց մոտով անցնող վորևե ուտարականի, պատահեց Տեր-Շմավոնին, որ նոր էր դուրս գալիս գյուղական փոքրիկ, խրճիթի նման, ժամից, վորի կտուրին հազիվ էր յերևում նրա յեռանկյունաձև գանգակատունը իր ծղրտացող յերկու նիհար գանգակով և տարյակների յերամով, վորպիսի յերամը, ինչպես սև մորեխ, ծածկել էր նրա գանգակատան թեք մակարդակը:

Քահանան իր յերկայն գավազանը վարտեալով առաջ էր գնում վոգևորված այն բանից, որ այդ որը ավելի արտանց էր կատարել իր պաշտոնն ու պաշտամունքը, քան վ-

բուժ՝ այդ ատամոտ սովորականից ավելի շատ մարդ կար յեկեղեցում, ինչ արած թե այդ շատը մեկ-յերկու ծերով ու պատռված եր, և շատերում եր նա իր ծխերից մեկի հետ նրա տուն մի զավաթ ոգի խմելու և գյուղական թեյը վայելելու, համեղ կաթի ու սերի հետ, յերբ Շամբարը հասավ նրա ձեռին.

— Որհնիա՛ սեր. աչդ տու համբուրեմ:

— Շամբա՛ր, դո՞ւ յես,—հանկարծ նկատելով նրան աչը տվեց յերեցը,—Ասավա՛ծ որհնե:

Շամբարը ազահությամբ նրա աչը համբուրեց, նախ վայր առնելով փափաղը:

— Եղաես ատամոտ վաղ վո՞ր տեղեն:

— Մեր գեղեն:

— Ձեր գեղը վե՞ր ն է, ջանո,—կարծես դիտմամբ հարցրեց ուղեկիցը:

— Դ... նրա յերեսին հաղիվ նայելով արտասանեց Շամբարը:

— Դ՞... Ղո՞ւրթ ե, որ ձեր գեղի մեջ ատամնեատանք տղա յեն խեղդե:

— Վե՞վ գիտե, տիրայու Բարսեղ,—վրա բերեց յերեցը, ատամնեատանքն յեն խեղդե՞, թե վերևե վոճրագործ... Ցես եղ տեսակ անուր բանեքու չեմ հարքատա:

— Մ՛հ,—խորը, բայց լուռ հառաչ քաշեց Համբարը և անիծեց ժամը, բոլեն, որ նա վառք կոխեց այդ դյուղը. «ինչի՞ համար, որ էդ տեսակ գեշ բան իմանայի»...

— Գեղի մեջ գո՞րծ ունիս, ի՛նչ է,—հարցրեց քահանան:

— Չե՛, գեղի մեջ չե...

— Հրպը՞:

— Հրպը,—կրկնեց Համբարն ու կարմրեց: Նա խիստ ծանր զգաց, մինչև իսկ անկարելի; ասելու յերեցին, թե ինչո՛ւ համար եր յեկել նրա մոտ... Յերկյուղն ու սարսափը նրան պատեցին և նա համարձակությունը կորցրեց հայտնելու, թե ի՛նչ հույսով եր յեկել Տեր-Շմավոնի մոտ... մանավանդ, որ յերեցի մոտ կամ մի ուրիշ անձնավորություն, «զոնե ենիկ չըլլիր»...

— Հրպը ի՛նչ պատճառով յես եկե եղպես վաղ:

— Ենպես. կանցնեցի, ասի քեզի հանդիպիմ, սուրբ աջդ առնիմ:

— Սպրի՛ս, զրանա՛ս:

Համբարը համարձակությամբ ներշնչվեց յերեցի այդ յերկու խոսքերից, սիրտ առավ և, կարծես, մի բոլե պատրաստվեց խնդրել նրան յեկեղեցի մոտերը, որ իր տեղիքն տար, սա-

կայն սարսափեց նրա աչքերից, վորանք այդ վարկյանին ինչ վար քնեալան հայացքով նայեցին ուղիղ իր բերանի մեջ:

— Ա՜խ, չե՜, չեմ կարա,—հազիվ ձայնեց նա և յերեսը շրջեց միւս կողմ:

— Ջանիկս, դարդած (հոգնած) կըլլես. հրամմե մեր առն, երկու բրդուճ հաց կե:

Համբարը հուզմունքի մեջ ընկած հազիվ թեց բարի ծերուկի հրավերը և անզգայաբար սրտառանց.

— Շնորհակա՛լ եմ. կշտացի:

— Այդ ինպես մի առանձին բանրմ չունեցիր ըսելու. հա՞,—նրա աչքերի մեջ նայելով նորից հարցրեց յերեցը:

Հուզմունքի և յերկյուղի ալիքը տվեց Համբարի յերեսին. նրա սիրտն սկսեց ուժգին բաբախել յերեցի քննական հայացքից և «մի առանձին բանմ» առած խոսքից: Այդ բայե Տեր-Շամալոնը նրան թվում եր մի տեսակ խուզարկու վարիկան, վորն զգալով Համբարի գործած վոճիրը՝ նրան փորձելու համար եր հարցեր տալիս:

«Գիտե՛, գիտե՛, ասում՝ա՛ծ ջան, ամեն ինչ գիտե. ի՞նչ ենեմ», ասրսեց նա:

— Ձերանք ի՞նչպես են, լա՞վ են. հարքուրը, անամեր Շոժոն,—իր ճանապարհը շարունա-

կելով նոր հարց ավեց քահանան, վորին Համբարը խելուն պատասխանեց.

— Սուրբ աջդ յեն համբուրե:

— Ել ուրիշ ի՞նչ կաելիր:

—Ե՞լ...ել ոնչիչ,—խոսքը կոճկեց Համբարը յենթադրելով, վոր քահանան դիտմամբ եր խոսք բաց անում, վորպեսզի հայտնե իր դիտցածը, ապա՝ բարկանա, հայհոյե, անիծե... իր արած վոճիրը սաղ աշխարքի մեջ տարածե և իրեն սաղ-սաղ դերեզման դնե...

— Չե՛, չե՛,— քթի տակ խոսեց նա,—եդ բաելու բան չե...և ինքն ել չիմացավ, թե ինչպես այդ բառե հեռացավ նրանից. կարծես մի անտաելի ձեռք տարավ, տարավ նրան հեռու, հեռու...

## VIII

Այդ որը Համբարը չվերադարձավ գյուղ. վոչ վոք չգիտեր, թե ո՛ւր և գնացել նա, և վոչ ել հարևան Գ... գյուղից յեկող յեղավ, վոր հայտներ, թե նրան տեսել և իրենց գյուղում:

Ցերկար նրան սպասեցին տնեցիները. և յերբ տեսան չկա՝ դուրս յեկան գյուղի շրջակայքը վորոնելու, թե նա արդեոք վերևն տեղ ուշադնաց յեղել չէ՞ մնացել...կամ թնդան սատանայաբ յեղել...«մեղա՞, ֆեզ տեր, մեղա՞»

...և մոչ մի հեռուներից չը հասնելով, հույսերը կորած վերադարձան տուն, վորոշելով, վոր հեռեյալ առավոտ վաղ վեր կենան, գնան սիրելի հեռուները վորոնելու, մինչև անգամ հարևան գյուղերը գնալու, հարցնելու...«խեղճուած, սրտերն բնկած չըլլի՞...» մի գուշտ, կարծես, խոսում էր նրանց մեջ...

## IX

Մառաղ գարնան կիրակի առավոտ էր:

Լուսը նոր էր բացվել:

Դ...գյուղի թորոններից ծխերը պարարարար նոր էին վեր բարձրանում, վոր ձիերի էլխին կայտառ կերպով արտա շարժվեց. նրան հետևեց կովերի նախիրը. Դրանից հապիվ էր անցել յերկու ժամ, վոր, հարամու պես, գյուղ թափվեց տավարի յոլը ոգ ուտելու:

Վաղջ գյուղն արդեն զարթնել էր. շինականները վոտոցներով խառն անց ու դարձի մեջ էին:

Գարնան այդ սիրուն պահին, յերբ կանաչ տավանը մարմանդ կերպով ծփում էր մեղմ զեփյուռի առջև, յերբ կապույտ յերկինքը իր լուրջ ու վճիռ դեմքը ծիծաղուն կերպով ցուցանում էր արևի շողքերի մեջ վերևից, յերբ ամեն ինչ բնության ծոցում ցնցվում ու հրճ-

վում էր, որ Նազլուն ելի գնացել էր իր վերջին զերեզմանը այցելության. նա չորած գունավակի շիրիմի կողքին՝ լուռ հեկեկում էր. նրա դլխի ու փոքրիկ քարշ ընկած ծայրերը գետնյուռի առջև փոփոխում էին. նրանք. կատու, իրրև ապառալի ու թիկնը, իրար գիրչերով ոդի ծուխեր էին տալիս...

Այդ յերևույթը գիտեց Համբարը. Համբարը, որ ամբողջ գիշեր մնալով գյուղի ափին յեղած բլրին, մի քարի տակ, կուչ յեկած, չեր համարձակվել գյուղ մտնելու, տուն մտնելու; որտեղ նրան, կատու, ինչ որ բան հարձող կար...

Նա վողջ գիշերը մնացած այստեղ, ինքն իր տարածի մեջ զարթված, չեր համարձակվում այլ ևս ուրիշ աչքերով ընկնելու... Ա՛հ, որքան նա բաղդավոր կլիներ, որ հեռու քաշված լիներ մի այնպիսի տեղ, հեռո՛ւ-հեռո՛ւ, որ վոչ-վոք, վոչ-վոք իրեն չը տեսներ, չլսեր, չը ճանաչեր, չգիտենար իր ով լինելը, մանավանդ իր գյուղացիներից, որպեսզի այդպիսով մոռացության տրվելով վողջ գյուղի կողմից, մոռացության տար և իր հոգու մեջ յեղած, իրրև զարթված ու ոձ նստած, այն տանջանքը, որ ամեն որ նրան հարձում ու հեռևում էր...

Ո՞ւր գնար. ի՞նչ աներ. գլուխը մահի՞

տալը, թե մի այլ բան, մի բան, վոր իրեն կամ բռնեցին, տանեցին, տանջեցին, սպանեցին, կամ, թերևս, խոշտանգեցին, ներեցին, քանի վոր նա Սուրիկին դիտմամբ չեր սպանել, այլ, այլ ...ենպես...կատակով...հանուքի համար... Ու չէ՞ վոր Համբարը Սուրիկին սիրում էր և ինքը նրա մահվան համար այժմ ավելի շատ եր ցավում ու ցավակցում, քան մյուս դրացիները, թերևս Սուրիկի մոր՝ Նապրուի շատ, Նապրուի, վոր, այժմ, այնտեղ սպավոր այնպես գլխին ու արևին և տալիս...

«Ա՜խ դե՛ կնիկ, խա՜ղ դե՛ կնիկ», հանկարծ դուրս թռավ նրա բերանից...

Ա՛հ, յեթե այդ բոլոր մի հոգեկան, անտանելի կապով Նապրուն գրար, թե Համբարը վո՛ր քան ցավակցում, խղճում և նրան, վորքան ուրիշ պատասխ և թաղել Սուրիկի համար, վոր խղճ՛ւր-խղճ՛ւր զոհ գնաց իր հիմարության... ոհ, յեթե այդ ամենը իմանար Նապրուն...

Բայց՝ ինչո՞ւ, ինչո՞ւ մենակ Նապրուն իմանա, ինչո՞ւ վոչ վալջ գյուղը, բոլորը, արար աշխարհը, վոր Համբարը մի այդպիսի մեղք և գրծել, մեղք, վոր դիտակցությամբ չե, այլ անգիտությամբ, իբր կատակ...և թող այն ժամանակ ապ աշխարհը դատե, դատապան անե ինչպես կամենա, թեկուզ Սիբիր քշե, թեկուզ

ապանե...մխայն թե դիտենան այդ գարունքը, մխայն թե ինքը եղ կրակից ազատվի...

Համբարը այդ մտածմունքների մեջ էր, վոր տեսավ Նապլուսին իր վորդու շիրիմի կողքից վեր կենալիս և երեսը հոգաբրության քարերին ու կոշտերին քսելիս. այդ ժամանակ նկատեց, թե այդ Ջահել-Ջիվան, վարդի նման քացված կնոջ յերեսը ինչպես թառամել ու ինճիներով ծածկվել, խամրել ու թարշամել էր...Նապեց Նապլուսի խուլ հեկեկանքը վոր մինչև նրա տոգու խորքն էր թափանցում և տեսավ, թե ինչպես այդ վշտահար կինը իր շալե գոգնոցի կոշտ վեշերով, սրբում էր իր հոգի արտասուքը...

Կասես, այդ բոլոր մի անցելուցի ուժ քաշում էր նրան դեպի Նապլուն, մի անտեսանելի ձեռք առաջ քշում ու նրա ականջին փսփսում՝ «յեր, ել ինչ յես նստե, վեր կաց, գնա Նապլուն, քամ, ենթ առաջն ընկի, խառամանի ենթ քամ արածդ մեղքը և թոգություն խնդրե»...

Համբարն այդ հոգեկան վարանումի մեջ էր, վոր Նապլուն հուշիկ քայլերով հեռացավ վորդու շիրիմի մոտից և կորավ գյուղի խառնուցների արտերի յեռանում:

Համբարը աշխատեց հասնել նրան, նրա յետևից գնալով նա արդեն մոտ էր գյուղամեջ,

փոքրերից, իսկույն, այլևս նրան թողել չեին տալիս դուռ գալու... նա էլի մի քանի քայլ առաջ գնաց և տեսավ մի հին. գյուղի համբարները նոսած մի զով շարժախոտ տակ, նրանց մեջ յուզբաշին, տերտերը, եկեղեցականը, գյուղական ուղղիան, ծխականները և իրար հետ խաղաղ զրուցում անում։

Համբարի յերեսը նրանց բավական տարբերնակ թվաց. նրանցից մեկ յերկուսը պատրաստվում եին բարևելու, նրա հետ խոսելու, հարց ու փորձ անելու, թե այս քանի որ է նա վո՞ր տեղ է, վոր Համբարը առաջ սողաց նրանց մեջ, հոքեց գետնին, փափաղը վայր առավ, ձեռքերը դեպի վեր պարզեց ու հեկեկաց.

— Դուռ ու դրկից, ձեր ոջախն յեմ ընկե, ոգնեցեք ինձի, ազատեցեք ինձի ես զուլումեն, ես տանջանքեն, որ կրակի պես ինձի գիշեր-ցորեկ կը վառե... յես ել չեմ կարա դիմանա, չեմ կարա, ոգնեցեք ինձի, կապաչեմ ձեզի...

— Ի՞նչ է, Համբար ջան, քեզի ի՞նչ է եղե, — խանդաղատանքով մոտեցավ նրան նոր տարած գեմքով, նիհար, տարիքն առած մի գյուղացի, — վե՞ր տեղ կլցավի։

Մինչ այդ արդեն ամբոխը Համբարի շուրջը շաղակրատ եր, վերջը լսելով նրա լուրը

ընկնելը, գլուխ ընկնելը, յեկել եյին տեսնելու, գիտելու։

— Մեռնի՛ գնա։ Շարը գարկած կրլլի,— շշնջաց մի գեղջուկ մյուսի ականջին և տեսավ, թե ինչպես հորդ արտասուքն սկսեց հոսել Համբարի աչքերից։

— Եսա՛ գա, եսա՛ գա,—ձեռքը սրտին տանելով աղաղակեց Համբարը,—հուր ու կրակ է դարձե, ինձի կը վառե ու կը խորվե...

— Սիրտս խղճի։ մեմ տեսեք, թե ի՛նչ որն է ընկե։ յերեսի գունը գնացել է, մեռելի գուն է դարձե։ աչքերը վոս են ընկե, ես մե շաբաթվա մեջ գալնել է, հալել՝ ինչզոր մոմ, վրայի կաշին ու ոսկրոն է մնացե...

— Թանամ սարսարի (ցնդած) է դարձե,— ավելացրեց յերկրորդ խոսակցին յերրորդը։

— Կանցնի՛, կանցնի՛, բան չկա,— սատանեց նիհար գեղջուկը և սկսեց մխիթարել նրան,—ամուսդ սատանեն մի՛ կտրե։ կանցնի։

— Սատա՛ն...ո՞ւր է սատանը, ասեք, ո՞ւր է ենիկ։ ես որ քանի որ է՝ յես ընկել եմ սարերն ու ձորերը ենոր մանն կուզամ, որ տեսնիմ, գարդս բանեմ, չեմ գտնի... չկա... սատանը ինձեն հեռացել է...

— Վա՛յ անիրավ, վա՛յ Հուգա խակոբյան-ոցի,—այս անգամ կուրծք ծեծեց տեր Կարապետը,—մեմ տեսեք, թե ի՞նչ տեսակ մեղք բաներ կը խոսի...

— Յես մեղավոր յեմ, մեղավոր,—կանչեց Համբարը,—յես սիրիրական եմ, սիրիրական, ...յե՛ս, յես...

— Ինչի՞, Համբար ջան, ինչի՞ համար եղ-ման կը խոսես,—ուզեց նրան կոնդնեցնել նրա ազգականներից մեկը:

— Ենոր համար, որ յես, յես...

Եվ այդ րոպե Համբարն այնպես բարձր գոռաց, կոծեց ու արտասուքի մեջ խեղդվեց, վոր նրա կոկորդը ճնշվեց, ձայնը կտրվեց. մարմնով նա թուլացավ և այլևս անկարող յե-գավ շարունակել:

Մինչ այդ, նրա տանեցիք, տունը լուր, վոր նա մոել և գյուղ, մոտեցել եյին նրան: Նրանք մոտենալով նրան ուզեցին թևերից բռնել, վեր բարձրացնել, տանել տուն:

— Թողե՛ք, թողե՛ք, ինձի եստե՛ղ թողեք. իմ տունս էլ եստեղ է, տեղս էլ, ոթևանս էլ, գերեզմանս էլ...իմ իմ գուռ ու գրիկին յեն... թո՛ղեք—թող եստեղ ինձի գառատան ենեն:

— Համբար ջա՛ն, եղ ի՞նչ կրխոսես,—ու-զեց ընդհատել նրան մեծ յեղբայրը:

— Ի՞նչ... Սուրիկին յե՛ս յեմ սրպանե, յե՛ե՛ե՛ս,—պրեթե երգեց նա,—գիտցեք, իմացեք, յե՛ս յեմ սրպանե...

— Ի՞նչ, ի՞նչ, ի՞նչ... ինչ բա՞ռ... սրպանել ե՞... Սուրիկին ինքն ե սպանե՞,—ամբոխի մեջ բարձրացավ մի չեզած շիրթ, ազմուկ և բոլոր նատողները, տեղներից վեր կենալով, խառնվեցին իրար:

— Հա՛, հա՛. յե՛ս յեմ սրպանե, յե՛ս. հիմի, ես սահմին ձեր առաջն յեմ, ձեր դատաստանի առաջ, ինչդ կուզեք՝ եման դատատան երեք, չես հոժար յեմ, մեռնակ, թե ինձի ես կրտկեն սպատեցեք... մեզա կուզամ երածիս համար, մեզա՛, մեզա՛, հազար բերան մեզա՛... Ա-ա՛խ, յարարան ատամած,—մռնչաց հանկարծ Համբարը և ձեռքը տարավ գլխին:

Այդ բոլոր գյուղացիները մնացին քարացած, յերբ Համբարն սկսեց իր գլխի մազերը փետել. նրանց վրայով մի սարսուռ անցավ, մի անսովոր սարսուռ, կարես նրանց մարմնով սկսեցին մրջյուններ մուն գալ:

Նիհար ծերունին բռնեց նրա ձեռքերը և նաշխան թաշկինակը տանելով նրա յերեսին, սկսեց սրբել նրա սրտատաքը:

— Տեսա՞ք,—յես որ են վարար կանցի, թե Համբարն երած կըլլի, եդիկ ենոր բանն և, չե-

յիր Հոգիս, ուր կրծքունեցիր... Հիմի ան-
ա՞ր, ունկնդրիդ խնացա՞ր,— զայրույթով
խոսեց մի դեռատի դեղջուկ, վոր Շամբարեանց
հետ ինչ վոր արտի գործ ուներ:

— Հրամ չե՛, չե՛... Ենոր յես չեմ արդարեն.
յես քեզ ձեռնոցս դատի չեմ արդարեն...վախե-
ցուցել յեմ, վախեցուցել. ատանայի կերպա-
րանք մտել, վախեցուցել յեմ...եստեղ ոդի
սիրար պատռել է,....վախեն պատռել է...
Ախ, անիծած գիշեր, որ քանի միտքս կըգնի,
գլուխս խուփը կը վերնա...

—Տեսա՞ր, խնա՞ցաք անտեղի երդը.. լա-
ւեցի՞ր, թե անաստվածը ինչ հեթանոսական
բան է երե, ինչպես որ Հերոդեսը մանուկներ
կոտորեցուցեց,—իր մոտ յեղածին ասաց քահա-
նան և ուզեց միջամտել խոստովանության: Բայց
նրան հերթ չը տվեց նիհար ծերունին, վորը
վեհ կերպով դառավ.

— Դրկիցներ, ես անբարդ ոդեն, որ ան-
մեղ արտով մե անմեղ երեխի մահվան պատ-
ճառ ե եղե՝ ինքն ել ենքան անմեղ ե, ինչքան
անմեղ ե ինքը սպանվողը, Սուրիկը...Ցեսա եղ
տեսակ մարդ արդանելը, իմ կարծիքով, են տե-
սակ մարդ սըպանել չեմ համարե, որ դատի
սիրահ կառնին, կերթան ուրիշին սրբանելու.
եսիկ են տեսակ մարդասպանություն չե, եսիկ

փոքանք է, եթէ անհասկացողութեան հետևանք է... Մենք, յետ են տեսակ կրկարծեմ, որ պետք է մեր կողմեն եւոր ներենք, խնդրենք յերկնավոր տիրոջեն, որ են եր վերդիյեն նեբե։

Սմբատը մի պահ լռեց, ինքով խոհերի մեջ և ապա մեղմ շշնջաց.

— Շատակ կաս Սարգիս—ամին, շատակ. մի մարդ, որ իներն յուսով կուգա եաքանի քով էլխատավանի իրեն երածը՝ ենիկ ներելու արժանի է, են էլ եղ տեսակ երած բան, որ ծուռ մարդ, թշնամութենով չե երե... հիմարութեան պատճառով...

— Ի՞նչ. ներե՞լ,— հանկարծ բարձր գոռաց մի այլ միջատի դյուղացի, վոր յերկար էխաում եր տեղի ունեցող յերևույթները, ու ինքն իրեն տալիս ու առնում,—Ներե՞ե՞լ... եղպիտուն Սիրիր քշեն էլ քիչ է, Սիրիր քշեն էլ... յես ե՛ս սահաթիս ձիս հեծնելու, երթալու յեմ քաղաք նաչա՛ ենիկի քով, ասելու, որ մեր գեղը մարդ սրպանող կա, եկեք, թևերը կապեցեք, բերդը բերեք... Ե՛ս սահաթիս երթալու յեմ...

—Տարե՛ք, տարե՛ք, յես հոժար յեմ, բերդը չե՝ կուզեք Սիրի՛ր տարեք. յես մեղավոր յեմ։

— այլ խոսքերի վրա հառաջանքով ասելու՝ Շամբարը։

— Լավ կան Արթենը. եղ տեսակ հանցանքը տասնաբանյան պատվիրանները խախտել է. յոթը մահացու մեղքերեն մեկն է. եղ տեսակ մարդուն յա ոխտը տարի ժամի դուռը պիտի կայնեցնես, յոտներն ել բռնվիկ, որ վեվ տեսնի՝ Երած մեղքը յերեսին տա, որ կարենա իրեն հանցանքը քավել, յա թե չե Սիրիր պիտի քըշես, որ երթա, ոսկրները վիթին, ուրիշին որինակ դառնա,—իր ալեխառն մորուքը շփելով խոսեց Տեր-Կարապետը։

— Ի՛նչ, ի՛նչ, ի՞նչ... յա ոխտը տարի ժամի դուռը, յա Սիրիր, — հեգնանքով հարցրեց մեկ ջահել դյուղացի.—ինչ ասի՞ր։

— Հըլը թե չիտակ կուզես իմանալ՝ եղ տեսակ մարդը ոխտը ժամ պիտի չինե, որ կարենա հանցանքը քավել։

— Ոխտը ժա՛ա՛մ,—յերկարացրեց մի ուրիշ խոսք,—եղ քիչ չի՛ լա՛։

— Հըմբա՛, ոխտը ժամ,—պնդեց յերեցը,—են որ մեր նախնիքը մի կատու ոտներու համար ոխտը ժամ պիտի չինեյին, որ իրենց հանցանքը քավեյին, հրամը մարդ որպանողը վո՛ր-ըան...

— Տերտեր յես, տերտե՛ր. ճերմակ մրր-

քեզ ու կարդեմ ամբնչեմ. մենք որ ուզենանք
ես տեսակի խելքն ու ոչխանձը կորուցած մար-
դուն պատիժ տանք՝ դու պիտի չը թողնիս, ոնչ
թե եսքան ժողովրդի մեջ եդ տեսակ բաներ
բաես...

— Դու որ մեր քիշրմ տասվածարանու-
թենեն հասկոնայիր՝ են վախտը կիմանայիր իմ
բանի միտքը:

Այդ ձևի խոսակցութիւն թերևս յեր-
կար չարունակվեր, յեթե այդ բոլե, դունչ ու
բերանը սև բազմայով փոթոթած, մոտ չը գար
Նապլուն: Նա հանելով ամբոխին և տեսնելով
Համբարին ժողովրդի մեջ չոքած, արյուն կրա-
ված, արտասունքի մեջ կորած աչքերով, չիմա-
ցավ ի՞նչ ասեր, խփեր, հանդիմաներ, հայ-
հոյեր անիծեր թե մեղքանար, խղճար, նե-
րեր:

— Ա՜հ, Նապլո՛ւ խանում, Նապլո՛ւ խա-
նում, յես քու գառնը չունը...ներե ինձի, ներե.
յես չեմ կարա տանի քու լաց ու կոծը. յես
բանի կը տեսնիմ, որ դու Սուրիկի գերեզմանը
կերթաս՝ ամեն ու ամեն տարտարի կը գա-
նում. կսես, եսանց, արտես մեջը մեն բանմ նրա-
ված ինձի կուտե ու կրատնչե. յես մեղավոր յեմ
քու տամչը, մեղավո՛ր...ներե՛ ինձի, ներե.
մեմ ել յեսի ելի երթամ գերեզմանները՝ խնդրե

Սուրիկին, որ ենթակ էլ ինձի նեղե, ամեն անգամ չըգա, աչքս առաջ չըկացի ու չաե, «Համբարը ափսար, հաստ՝, սատանեսատանքն ելան ինձի խեղդելու»... եգ ձենը, ա՛խ, եգ ձենը գիշերցորեկ յանկչիս մեջն է, ինչըզ որ ինքը՝ Սուրիկը գիշեր-ցորեկ աչքիս առաջն է... ա՛խ, նազլու խանում, ի՛մ մեր, ի՛մ քուր, էլ խուջ չեմ զանի սրտիս միջի եզածը քեզի թարիֆ ենելու, թե ինչքան կը տանջվիմ յես... յերանի՞ Սուրիկի տեղ յես մեռնեյի, քանց կենդանի մնայի ու ես որին հատնեյի... ներե՛ ինձի, նե-ր՛ե՛. տե՛ս յանեզ ընկած կարաչեմ,—և Համբարը մտանելով Նազլուին բանեց նրա գոգնոցի փեշը սկսեց համբուրել...

Նազլուն ծանր հեկեկանքի մեջ ձեռը գրեց նրա գլխին ու հազիվ լսելի ձայնով չչնչաց,— որ չընեիմ, էլ ի՞նչ կարամ ենե...

Տիրեց մի քանի բոպե խորը և խորհրդավոր լռություն, յերբ մարդիկ, կասես հաչմացած, կակաչն իրենց սրտի հետ խոսել, իրենց խղճի հետ խոսել, առանց մի բառ ասելու արտասանել կարենալու...

Յեվ գյուղը նեբեց նրան:

Բայց Համբարի Ֆիզիքական կազմվածքը անկարող յեղավ տանել նրա հոգեկան ծանր տագնապները ու տառապանքները, ինչպես մի

թույլ տուն թե, որ չի կարողանում պահել իր մեջի յեղած թունդ հեղուկը, արտքսում է, այնպես ել Համբարը անկարող յեղավ տանել այնքան հոգեկան տանջանքներն ու զանազան յա-վերը. նա, ինչպես մի կապերտի կտոր, նախ հենվեց իր մոտի քարին, ապա փռվեց գետին...

Նա ուշաթափ յեղավ...

---

# ՆՈԽԱՁԸ

*«Եկ են տարին եր, յեփ աղքատ ելբակը
քար քաշեց գեղի ագի վրա».*

## I

1905 թ. Հուլիս ամսի սկիզբն էր։

Սոսուտա կապ-կապույտ յերկինքն այնքան էր մեծացել, լայնացել ու բարձրացել, վոր չը-գիտեիր՝ վո՛րտեղ է հասնում նրա սահմանը։

Մի ջուրեյի փոքր, յերկաթի նման չիկացած արևն այնպես էր կիզում յերկիրը իր շեշտակի ճառագայթներով, այնպես այրում, վոր կա-սես, էս է, ամեն ինչ վառելու ու խորովելու է։

Ոչը հանո՛ւս կանգ էր առել. նրանում վոչ մի հովի չունչ, գետինի վոչ մի շարժում չեր նկատվում։

Նոր հասած խոտերն ու հացահատիկները ինչ վոր թագուն փոփոխ էին արձակում. իսկ նրանց հատակում մոր մորեխներն ու մյուս զեռունները կասես, ոգոյներ առած, անվերջ ինչ վոր բան էին ասում։

Որվա այդ պահին տիլիֆցի Ոհան ապերը

ապիտոց, գլխին մի սպրուխ փախթոթած, ուշի-ուշով կրում էր բանջարանոցը և ուշադրութեամբ դիտում, թե ինչպես պղտոր կուրը ոձի նման փրփրանելը կտրվելով նոր փորած նեղ, ծուռ ու մուռ տոմի միջով հոսում էր դուրս։

Նրանցից քիչ հեռու նրա կինը քաղհանք էր անում և ձեռքին հավաքված անպետք խոտերը բանջարանոցից դուրս շպրտում ճամբու վրա, որոնք նույնպես դատապարտվելու էին թառամելու ու թարշամելու, ինչպես իրենցից առաջ դուրս շպրտվածները։

Այդ ժամանակ, դեռանդին ուսին, մոտեցավ նրանց մեծ փորին, փորի յերեսը զարմանք պատճառեց հորը։

Ոհան ապերը կանգ առավ աշխատելուց, յերկու ձեռքը դրեց բահի կոթին ու հարցրեց.

— Յա՛. ե՞ղ ինչ բան է,—ու աչքերը շռեց փորդու յերեսին։

Փորդին անպատասխան նայեց հոր յերեսին։

— Ինչի՞ չայլերը թողել, եկել յես։

— Մնայի ի՞նչ ենեյի,—հորը պատասխանեց նա։

— Ի՞նչպես թե «ինչ ենեյի»,—մի վատ բան գուշակելով նոքին կլուսեց Ոհան-ապերը։

— Յարեկ—հայի ժամանակ Տեր–Մելն հայ լեզուց շայիրը իրենց գերդնդվորներին. յեր տեսավ, որ իրենց հասած վիճակը քիչ է՝ դարձալ ասելից, թե «ձերը շատ է, մերը քիչ է. վիճակ ցքելու ժամանակ դարձուցեն եք նրե, նորեն պիտի վիճակ ցքենք»:

— Եռե՞, —բարկանալով նեղքեի ծնողը վեր ու վար անելով հարցրեց Ոհան–ապերը.

Եռև բոլոր վիճկիմարները մեկ լեզան, խոսք մեկ երին, շըմոդին քաղեու:

— Կը տեսնես իդի լծի մերուք մարդ շըմանածին, —վրդովված մեջտեղից Ոհան–ապը կինը, վար մինչ այլ մոտեցել էր նրանց, — տերտեր տեղովը ինչեր կենե:

— Ե՛, դո՛ւ ինչ եյիր, դո՛ւռ՛ւ, —վրդովվեց գոռաց Ոհան–ապերը, —չեյիր կարա ախպրատանցդ իմաց տա, գային Տեր–Մելն բանծիր գլուխը ոխտը տեղե չարդեյի՛ն...

— Ուր է ախպե՛ր: Առավոտ կանուխ գնացին տե՛ղ՛ Ճերմակ աղբրի արտը քաղելու: Մինչի երթայի՝ մութը կրնկնիր:

— Հայ հարա՛մ ըլի են հայը, որ դու կուտես, հարա՛մ, —զայրացած վրդովեն Հանդիմանեց հայրը և սկսեց հագնվել:

Վրդովեն տեսնելով հոր հոմառ՝ իր տատ-

ծի բնավորությունը այլևս վոչինչ չասաց, չարժվեց դեպի տուն:

— Դե թող ենիկ ինձի մոտ տա, թե յես ենոր հախեն չըգամ,—հազնվելով մոնչաց Ոհան-ապերը:

— Իլլաքի են կոթով հայլի կնիկը, որ որչ տաս հեղ մե դուժինմ չալ գլխուն կառնի, գեղի մեջ կընկնի, ման կուգա, կաես կնեազի կնիկ ըլլի,— իր կողմից հարեց Ոհան-ապոր կինը.—ես երկրա ել չվթեն իմ գլխուս չալի ոչես մե չալմ ե գնե, գլխուն կառնի ման կուգա, որ ինձի տրաքեցնե... Այ հողը գլխուդ...

— Հա՛յդե,—շորերը հագնելուց հետո, դառավ կնոջը Ոհան-ապերը, և թույն կտրած նրա հետ ուճտպարեց տուն:

## II

Վորդին նոր էր հասել տուն, կընկկոխ նրա յետևից ներս մտավ հայրը:

— Մոթե՛,—կանչեց նա:

— Ի՞նչ ե:

— Չխու տյարը գա՛րկ:

— Ո՞ւր պիտի երթաս:

— Ֆեգի կսեմ «գարկ», գարկ. ել մի երկնցընե:

Վորդին լուռ շարժվեց դռան:

— Դու ել,—դառավ նա կնոջը, տես կա՝ մե զունդրըմ կարագ, մե հատում սեր, գլուխմ թուշի պանիր դի խուրջինը, տանիմ քաղաք:

Կինը խորհրդավոր նայեց ամուսնու յերեսին և մտավ քիլար (մառան):

Կես ժամից Ոհան-ապերը արդեն ձիու վրա եր, բռնած քաղաքի ճամբեն:

«Ցես Սարդարենց Ոհանն ըլիմ, սաղ գեղը ինձեն քաշվի, վախենա, Տեր-Մլեն իմ ճամբու վրա կայնի՛... Ենիկ ինձի գեղի մեջ հանդիպի՛... իմ տանս պատվական միսաֆիրներին... (հյուր) իրեն տունը քաշե... ենիկ ինձի վիճակ ընկած չայիրը չըթողնի քաղե՛ւ...

Սակայն Ոհան-ապոր վրդովվելու պատճառը այնքան նրա խարդախ կերպով ձեռ բերած չայիրը չեր պատճառը, վոր նրան չեր թողել հնձելու Տեր-Մլեն, վորքան այն մի շարք հանգամանքները, վոր իրար վրա կիսավելով Ոհան ապոր համար դառել եյին մի անհանդուրժելի դեզ.—

Առաջ քանի Տեր-Մլեն մենակ եր, իր յերկու-յերեք մատաղահաս զավակներով, իսկ Ոհան-ապերն իր հինգ-վեց, հասակն առած, ածդահա վորդիներով՝ նա թակում եր Տեր-Մլեյին, ինչպես կուռկուռ (տատրակ) թա-

կում և իր ձագին, ու Տեր-Մլեն յենթարկվելով գյուղի որենքին, այսինքն կոպալին, (վորը հաճախ նրա գլխից արյուն էր հոսեցնում) լռելյան տանում էր. սակայն, այժմ, յերբ Տեր-Մլեյի վորդիները մեծացել մի-մի ծառեյին դարձրել, մի-մի մահակավոր, (վոր գյուղի համար վկայական ունենալ է) իրենց մահակի ուժը ցույց եյին տվել Ոհան-ապորը՝ մանավանդ այն առաջին որը, յերբ Ոհան-ապոր հորթը մտել էր իրենց (Տեր-Մլեյենց) աղբինը և ՏերՄլեյի ամենափոքր վորդին կոպալի մի հարվածով տեղն ու տեղը սպանել անաստանին, Ոհան-ապոր վորդիները, ըստ սովորականին, հարձակում գործելով Տեր-Մլեյենց վրա ուզեցել եյին նրանց պատժել, սակայն՝ փոխանակ պատժելու՝ իրենք եյին լավ թակվել ու քայտառակ կերպով փախուստի դիմել... Այդ որվանից Ոհան-ապոր աչքի ճիճուն կոտրվել էր և նա դարձել էր մի թունավոր ոձ, վոր գյուղում յերևան էր յեկել մի ընբռստ մարդ, վոր վոչ միայն իր բռի ու բռնի ուժին չէր յենթարկվում, այլ և գյուղացիներին էր իր դեմ գրգռել և իր աղայական իրավունքներն էր վոտքի տակ տալիս... այն էլ մի քահանա, վորը ի պաշտոնե պարտավոր և հնազանդ լիներու...

Այդ ամենը տեսնելով Ոհան ապերը՝ մենից առաջ Տեր-Մլեյի դեմ զինել էր գյուղի աղին, հայոնի արյունարբու բայբուրթին, այն բայբուրթին, վոր գյուղացոց իրավունք չեր տալիս անգամ իր հողի միջով հոսող ջրից ոգտվելու, և վորպիսի հանգամանքի պատճառով գյուղի յայոնի աղքատ ու արհամարված Ելբակը քար եր քաշել նրա վրա և քիչ եր մնացել նրա կարկաժը ջախջախեր... Սակայն դրանից էլ (աղային զինելուց) վոչինչ չեր դուրս յեկել, ըստ վորում ճարպիկ քահանան, յերբ գործը հասել եր գավառապետին՝ Տեր-Մլեն իբրև ապրարային հարց հարուցնող՝ ասել եր. «տուք ըզկայսերն կայսեր և զաստուծուն՝ աստուծոյ»:

Ոհան-ապոր բարկությունը իր գագաթնակետին եր հասել մանավանդ այդ որը, յերբ Տեր-Մլեն խառնվել եր չայերի գործ մեջ, իր ձեռքի շաղ պատառը խլել... և արդեն ժամանակը հասած եր համարել ու վորոշել եր, ի՛նչ գնով էլ լիներ՝ տեր Մլեյին պատժել տար, ինչպես ինքն եր ասում՝ «ոձը բնի մեջ խեղդեր», վորի համար ձի հեծած գնում եր քաղաք ...մանավանդ, վոր առիթ կար և այդ առիթը այնքան էլ հնացած չեր, ընդամենը մի քանի որվա բան (վորի մասին, ընթերցողի ական-

ջին ծածուկ սուտ՝ Ոհան–ապերն ըստ իր սովորության, գաղտնի դանուս եր արել նաչալնիկին), թեև վողջ գյուղի թախանձանոք ու վորոշմամբ, Տեր–Մլեն թաղել եր սայլի տակ ընկած մի մարդու դիակ, առանց մարմնավոր իշխանության գիտության ու թույլտվության:

Այդ մաքերի հետ եր Ոհան ապերը, վոր հասավ քաղաք, կանգնեց մի հարկանի շինության առաջ (այդ քաղաքի բոլոր տնեքը մի հարկանի յեն), ձիուց իջավ, ձին տվեց նեքս քաշելու հայաթից դուրս յեկող ծառային, ինքը խուրջինն առավ, մտավ նեքս:

Նրան դիմավորեց մի դեր մարմնավ, կարմիր թշերով, խոշոր աչքերով, դեռատի կին, վոր այդ ժամանակվա պործակալի կինն եր, փոխանորդ վարդապետի լավ բարեկամը...

III

Գյուղը խառնվել եր իրար:

Հոգևոր իշխանության կողմից յեկել եր քննություն կատարելու փոխանորդ վարդապետը և պարզաբանելու այն հանցանքը, վոր կատարել եր հանդունդն քահանա տեր Մլեն:

Գյուղը թողած իր արտ ու արոտը, հավաքվել եր Ոհան ապոր տան շուրջը տեսնելու, իմանալու, ականատես լինելու այն դատին ու

պատժին, վոր տեղի էին ունենալու հանձին տեր Մլեյի։ Գյուղը սիրում է այդ տեսակ թատրաշաներ։ Մեծ ու պստիկ, ծեր ու յերիտասարդ, կնիկմարդ ու տղամարդ ահագին բազմությամբ հավաքված իրար մեջ խոսում էին։

— Հիմի տեր Մլեյին պատի՞ճ է տալու. հա՞։

— Կըտեն։

— Տո էդ են վարպատեսը չե՛, որ սիրեկան կըպահե։

— Ի՛նչ սիրեկան. իրեն փոքրավորի կնկան կըսիրե։

— Կտեն, թե էդ սիրեկանի համար տուն և դնե. հա՞. դո՞ըթ է։

— Են է որ կա. դատը մատնու տակը։

— Ըլի որ շատ զանգին է։

— Հըլալըթ զանգին կըլլի. ենքան աչհամբուր ու ուշատ կառնի ո՛ո՛ր...

— Ե՞նդի՛ն աշեցեք. դուռ եկավ։ Են ինչքան մեծ փոր ունի՛...

— Ըսել են՝ սար ու ձոր իրիցու փոր։

— Ես ցախվերով են պոպոդին մե եման տուս որ...

— Ինչըվ որ աղքատ Ելոակը քարով ավեց պեղի աղին։

— Այդ, քեյֆ, պոպոզ· իրար լավ գտել են:

— Տեսեք· խաչակընքեց:

— Քա՛, ելի մտավ նե՛ս:

— Հրապը կայնիր, որ քեզի սե՛յր եներ, ծիծաղեց խառող գեղջկուհու վրա մյուսը:

— Տերտերին նես կանչեց:

— Տերտերը փիրոնը վրեն տուավ, եման նես մտավ:

— Ցես ենոր տեղն ըլրեյի՝ հեչ չեյի նես երթա:

Զեյիր երթա հրամը...

— Հրամը ի՞նչ... հեռատեսց խոյ...

## IV

Ոհան ապոր յազլղում (ամառվա համար նստելու տենյակ) տհագին բազմություն եր հավաքվել: Երանցից վոմանք Ոհան ապոր բարեկամ էյին, վոմանք ազգական, վոմանք գյուղի ջոջերը, վոմանք էլ հետաքրքրության համար էյին յեկել տեսնելու, թե փոխանորդ վարդապետը ինչպես եր դատելու տեր Մլեյին:

Սաղրի (անշարժ թախթ) վերի ծայրում, բարձին թիկն տված, նստած եր վարդապետը, հագած ծաղկյա վերարկուն, կրծքին քաշ տրած լանջախաչը· վարդապետի կողքին գյուղի աղեն՝ յայանի Բայբուրդը, որ անվերջ գան-

գաներով լցրել էր Ա... քաղաքի դատարանը իր վիճելի հողերի վերաբերմամբ և գյուղացիներին մաշկել, այնքան, որ տուգանք էր առել նրանցից. Բայբուրթի մոտ Ոհան ապերը; ապա գյուղի հլա-հլա բեխերով յուզբաշին, որ առաջ Բայբուրթի տուբաշին էր (տասանորդ հավաքող), ապա նրա ոգնությամբ գյուղին յուզբաշի դառած իր աղվեսի պոչ գլխով՝ կոլոտ Պապիկով, որի արտաքինը տեսնելով չըպիտեյիր գայրանայի՞ր, թե զարմանայիր, այնքա, որ տարորինակ ու միևնույն ժամանակ այնքան լպիրշ էր նա... և ապա նրատած էյին շատերը, որոնց մեջ ողու հատ և մեծ դավաթը շրջան էր կազմում Ոհան ապոր փոքր որդու ձեռքով. հուսկ յեռե, դռան մոտ, իրար հանդեպ կանգնած էյին՝ վարդապետի հետ թիկնապահի պաշտոնով յեկած Շվոտ չափառը և հիշված կոլոտ Պապիկը, որոնցից առաջինը որքան բարակ ու յերկար բոյով էր իր նեղ՝ վարունգի նման յերեսով, որ կասես շարունակ ծխախոտի ծուխ էր ներս քաշում, յերկրորդը՝ կոլոտ Պապիկը, այնքան հատ ու կարճ բոյով ու ուռած թշերով, որ կասես անվերջ զուռնա էր փչում. իսկ այս վերջիններիս մոտ Ոհան ապոր տարիքն առած վորդիները, բացի

ամենամեծից, վորը նստած եր ժողովրդի մեջ՝ իբրև հոր անդրանիկը՝ նրա իրավունքների մի մասը վայելողը:

Դրանք—դռան մոտ կանգնած վորդիները—շարունակ յերթևեկության մեջ եյին, ուղի, մազա, ջուր, չախլամա (մածնաջուր) մատակարարելով, հաճախ և դրսից լուրեր և տպավորություններ հաղորդելով, թե ինչ և կատարվում, խոսվում այնտեղ ամբոխի մեջ:

Հանկարծ յաղլղի դռան մոտ հավաքված ժողովուրդը ալիք տվեց և նեղս մոտավ տեր Մլեն:

Դա մի ալեխառն դեմքով, մոտ հիսուն տարեկան քահանա եր, բարակ, յերկար այծի մորուքի նման մորուքով, փոս ընկած, սև, շարունակ բների մեջ խաղացող, աչքերով, դուրս ցցված ոյտերի վոսկրներով. մինչև բոյով: Նա տուպչ շարժվեց, ձեռքերը կրծքին դրեց, մատերն իրար մեջ հյուսեց ու վարդապետին խոնարհ գլուխ տվեց:

— Վոչի՛ւն, վարդյերես, հեղնարեն նրա բարեն ընդունեց վարդապետը և բարկությամբ նայեց նրա աչքերի մեջ.—ապա՛, պատմիր տեսնեմ՝ ի՛նչպես թաղեցիր սայլի տակ ընկած մարդու դիակը:

— Պատմե՛մ, հայր,— լուրջ պատասխանեց տեր Մլեն։

— Բայց ապատի՛ր դեռ... դու գիտե՞ս, վոր քո պատճառով հոգևոր կառավարությունը վիգովոր (հանդիմանություն) ստացավ նահանգի կողմից. գիտե՞ս, վոր դյուղից նահանգի՛կին իմաց եյին տվել ապորինել թաղածդ մեռելի մասին, եդ պատճառով ել կուզեյին քեզ պատժել, փիլոնդ վրայիցդ վայր առնել, մորուքդ խուզել, քեզ ել կարգալուծ անել, Սիրբիր քշել... գիտե՞ս...

— Սիբի՛իր,—լավեց մի զարմացական շշուկ նստողների միջից։

— Հլալ՝, զրկի և. նահանգինը ինձի ել կանչեց հարցուց, թե զո՛ր թ և ձեր տերտերը եդ տեսակ մեռել և թաղե. ու յեկի իմացավ, որ զրկի և, յես իրեն իմաց չեմ տվե՝ ինձի «դուռակ-սաբակ» ըսավ... վրա բերեց յուզբաշին։

— Հապա՛, Սիբիր,— վոգևորված իր շարախնդությունից կրկնեց վարդապետը և հազիվ յերեսի հատա մասները շարժեց իրարու ժպտալու նշան։

— Վո՛չ, չրգիտեմ,— չոր պատասխանեց տեր Մլեն։

— Վոր չիգիտես՝ դե հիմի գիտցիր... Հա՛,

մեկ էլ իմանալու,—շարունակեց քննիչը,—դու գյուղի մեջ քեզ հանգիստ չես պահում, փոխանակ խաղաղություն քարոզելու, վոր մեր Քրիստոսի փոխանորդների պարտակա-նությունն է, ժողովրդի մեջ չարություն ես սերմանում, ինչպես նոխազ, վոր ընկնում և վոչխարի տուրուլի առաջ եռևից մահ ածում, քո եղ իծի միրուքով ընկել ես գյուղի առաջ՝ հոգային հարց ես հարուցանում և ամբոխին գրգռում գյուղի ագի դեմ: Եղպե՞ս է, Կարապետ ագա,—դառով նա դեպի Բոյ-բուրթը:

— Բոյբուրթին հեշտ է:

— Հայը տուրբ,—աչքերը հառեց տեր Մլեն,—բոյբուրթի՛ն ճիշտ չէ:

— Բա ես պատվական մարդը տուտ և խոտ՛ում—,ընդհատեց նրան քննիչը:

— Բայց վոր եղ պատվական մարդը զարդանքներ բերել ուզեց գեղի վրա, կռիվ ցքեց, գեղեն մե մարդըմ մեռավ, մի քանի հոգի էլ վիրավորվեցին՝ եղ ճի՛շտ է:

— Հըլը մեմ իդի մոլլի կերած ապրին աչեցեք,—բղավեց գյուղի ագեն:

— Սանձի՛ր լեզուդ, անզգամ,—ձեռն ոդում շարժելով ազաղակեց վարդապետը:

— Մեր կրոնը մեզ ճշմարտություն խոսել և տրվեցուցե:

— Ճշմարտությո՞ւն է, վոր դու առանց իրավունք հարցնելու արդելված մեռել յես թաղե՛, ասա՛, ճշմարտությո՛ւն է:

Այդքան նախամտածված և նախապատրաստված հանդիմանությունը այնպես ծանր ազդեց տեր Մլեյի վրա, վոր նրա մեջքին, կատես, կացինի հարված հասցրին, այդքան հատարակության առաջ, իր թշնամու տան մեջ... «ինչո՞ւ. ինչպե՞ս. ի՞նչ. մի՞թե վարդապետը հաջորդը, իշխանավոր լինելով մարդ էր, ինքը՝ Տեր-Մլեն վո՛չ, վոր այդպես ծանր վիրավորեր նրան, առանց նախապես իմանալու գործի պատճառն ու հանգամանքը՛...

Տեր Մլեն մի վարկյան պատրաստվեց պորթկալու վարդապետի երեսն ի վեր, բղավելու, ասելու, վոր նա իրավունք չուներ ի տարապարտուց, առանց նախապես հանցանքը քննելու—իմանալու, իրեն այդպես վիրավորելու. նա ուզեց փոխանորդի ասած խոսքերը իրենց տակռով նրան վերադարձնել, սակայն բարվոք համարեց առժամանակ լռել, նախ պատմել գործի յեղելությունը և ապա, յեթե իր ասածը նրան չբավարարեր՝ ասեր—աներ այն, ինչ վոր իր սրտում դիզվել եր:

Նա ուսերը վեր թոթվեց, քիչ հոգոց, կո-

կոլտը մաքրեց, ինչպես նա մաքրում էր ոչն իր քարոզ տալուց առաջ, ու սկսեց.

— Հա՛յր սուրբ, կըխնդրեմ ձեր բացատրապատվութենեն քիչ համբերություն ունենանք ինձի լսելու, գործի յեղենը իմանալու, ապա ձեր անելիքը հայտնելու:

— Ասա՛, կըլսեմ, հանդուգն:

— Վարդևորի որեբն էյին. շո՛ք. յերկնքեն կրակ կըթափիր. ինչպես ռամկորեն կսեն՝ «քեալի գլուխ կը հոտիր»: Տարվա են որեբն էյին՝ յեփ գարին ու ցորենը գլուխ կը քշեն, յեփ ծաղկները հունդ կբռնեն, յեփ փեթակը ձաղ կուտա, յեփ կովը, վոչխարը բոլ-բոլ յեղ ու պանիր կուտան, յեփ չայիրն ու սրոտ քաղող կը կանչեն, յեփ...

— Ինձ բանասաեղծություն հարկավոր չե. դու բանի եյությունը ասա,—սեր Մ լեյին ընդհատեց վարդապետը:

— Տես, թե ինչպես խոսքը սարերն ու ձորերը կը գքե ինձի միրուքը, տես,—գյուղի ագի ականջն իվեր փսփսաց Ոհան-ապերը:

— Եղ ժամանակ ռանչպարի են որեբն յեն, որ գուբանը կըլծեն, հերկ կանեն, ասուն կըծածկեն, սելը կը լծեն քիրա կրատանեն, հա թե չե մեչեն կերթան փեռի:

— Իմացա՞նք, իմացա՞նք,—արհամարան-քով ձայնեց վարդապետը,—եաև՞:

— Եղ ժամանակ մեր գեղեն մեքանիմ սելվոր գնացել եյին մեշեն փետի. եղ սելվորներու հետ ել գնացել եր Դամբջոնց Մանչը, Սարդիսը. մա՛ա՛նչ, ի՛նչ մանչ,—վոգևորված բացականչեց տեր-Մլեն,—ես յազլղը չեր մանի. կսես չինարի ծառ ըլլեր. յոռ՛ենդ, բոյո՛վ. մի սաղ աշխարքմ կաժենար:

— Ցեառո՞, յեառո՞,—այս անգամ համբերությունը հատած գոռաց փոխանորդը,—վերջապես պիտի պատմե՞ս, թե չե:

— Պատմեմ, տեղովը պատմեմ, որ լավ հասկացնեմ: Անցել եր չորս-հինգ որ: Սելերը հաստ-հաստ գերաններ, վերի վրա մեկ, վերի վրա երկու-երկու,—յետ դարձան գեղ. մեմ ել անկարծ գեղը բոթ ընկավ, թե սելի տակ մարդ ե ընկե: Սաղ գեղը իրար խառնվավ. ամեն մեկը վազեց դեպի սելվորները տեսնելու, թե վե՛վ ե ընկնողը. իրենցեն խոյ չե: Տեսան՝ Դամբջոնց Սարդիսը լերդին պառկեցուցած փետերու վրա: Իջեցուցին ցած: Մեռելը ուռե՛ե՛լ, այլանդակվել եր. կսեյիր ես ե՝ թոքի պես տրաքելու յե: Զորս կողմն ել մի հոտ եր բռնե, մի շան հոտ, որ, որ, որ... Ասաված հեռու տանի: Եղտեղ պատմեցին, թե

ինչըղ Սարգիսը մե կեռման տեղմ ուղեցել է սելը սապոնե. մե խրատան աչառմ են ունեցե՝ անունը Դալո. եդ Դալոն սելը մե կողմի վրա է քշե, ցքել է Սարգսին սելի կնտի (անիվ) տակ, սպանել: Հա՛յ, անտե՛ր մնար եդ խելառ աչառը, հա՛...

Այդ վերջին խոսքի վրա վարդապետի զայրույթն իր գագաթնակետին հասավ. նա վեր թռավ նստած տեղից, վոտքը զարկեց գետին ու գոռաց,—վերջապես պիտի պատմե՞ս, թե մեզի ձեռք յես առե:

— Քավ լիցի, հա՞յր,—զգաստանալով իր վոգևորությունից պառավ տեր-Մլեն,— յես ինչպես ըլլիլը կր պատմեմ, որ լավ հասկրցնեմ:

— Դե շո՛ւտ:

— Եդ ժամանակ Դամբջոնց տնեցիք են տեսակ մի սուդ ու շիվան բանձրցուցին, են տասակ մի լաց ու կոծ, որ ասուած թշնամուցուց չը տա, ենպես որ՝ «քեաֆիրն իմանի կուգար»: Եդոնք ընկան մեռելի վրա, կուլա՞ն, կողբան, քիչ կը մնա, թե մեռելը պատռանեն. իլլաճ չրկա հեռացնելու. իլլաքի Սարգսի են խելառ կնիկը՝ Ֆլոն...

—Յեսի որ գեղացիք տեսան չիլլի՝ եդ բանը շատ պիտի քաշե, եկան յախես բռնեցին, թե

մեռելը պիտի թաղես. ինքը մեռելն էլ և մեղք. հայ քրիստոնի մեռել և, թուրքի մեռել իսոյ չե, ոնեցիք էլ են մեղք, լալով մեռան:

— Ու դու էլ թաղեցիր:

— Վոչ, չըթաղեցի. ըսի՝ «ինձեն անցուցեք եդ դառնության բաժակը», ինչպես տերն մեր Յիսուս-Քրիստոս խնդրեց յերկնավոր տիրոջեն: Հրամը հնար չեղավ. չըլսեցին. ոծեալ կարդը վկա, տուտ չեմ խոսի, չըլլսեցին, թե ունպատճառ պիտի թաղես եսր—եսր տերտերս, քու պարտականությունդ մեռել թաղելն է. պիտի թաղես: Ա՛յ, կուզես եդոնց հարցու,— դառնալով քահանան դեպի դրսի ժողովուրդը ու դեպի ներսը նստածները,—թող եդոնք ըսեն: Հրամը ինչի՞ եդ բոլորին, Ոհան-ապերը, ինքն էլ եր ենտեղ, իրեն մանչերն էլ եյին գնացե փեսի. ինքը ամենքեն լավ գիտե:

— Ոհան-ապերը քու մեռել թաղելեդ խարտ չե,—ցատը, բայց վարդապետեն լսելի դարձնելու չափով մոմոաց նա:

— Դու են բան, հա վերջը թաղեցի՛ր:

—Հրամանք յես, վերջը թաղեցի: Թողնեցի մեռելը կը հոտիր. ոնեցիք էլ սիրտ կարելու չափ կուլային, գեզացիք էլ ենքան զուռեցին, որ ստիպած...

— Ուրեմն ե՛ղ եր արդարանալդ, անպատկառ,—նրան ընդհատելով գոռաց փոխանորդը:

— Եղ ք՞իչ ե,—շատ լուրջ վրա բերեց Տեր-Մլեն:

— Ցեվ դու դեռ ասում ես խիլ, լիրբ:

— Իմ գիտցածով ես վատ բան չեմ երե:

— Դու «վատ բան չես երե», նզովված, դու որինազանց ես եղե, դու մեզի վիգովոր ես տալ ալե, ու քիչ եր մնացե, որ գայլն կրնքած գերեզմանը բանային, մեռելը տեղեն հանեին... դու «վատ բան չես երե՛»...

Տեր-Մլեն, համբերությունից դուրս եկած, այս անգամ գոռաց.

— Ի՞նչ հանցանք. Սարգսին խոյ ես չեմ սրպանե:

— Դեռ կը համարձակվիս ազազակե՛ լ, անիծից արմատ: Շո՛ւտ, վե՛ր առ փիլոնը,—եվ ազազակեց վարդապետը ու վառով արտեց հատակը:

Տեր-Մլեն գայրույթի արտայայտող աչքերով շեշտակի նայեց վարդապետի յերեսին, մի յերկու անգամ խորը շունչ քաշեց ու դառավ. Եղբան բանեն յեռև որ դու բանի եյուբեենը չես հասկընա՝ առ,; քեզ ըլի. ինձի հարկավոր չե,—ու վայր առնելով ուսից փիլոնը շպրտեց վարդապետի յերեսին:

— Ի՞նչպես ես համարձակվում, չո՛ւն,—

ատամները կրճտացնելով ճչաց վարդապետը։

— Կը տեսնի՛ք իտի խելառ լրբին,— թունավոր կերպով խոսեց Ոհան-ապերը,— թոկով կապելու է։

Տեր-Մլեն մի կատաղի հայացք գցեց վարդապետի յերեսին և չը գիտեր այդ րոպե ինչպես արտահայտեր իր սրտի զայրույթը այդ պատժի ու վիրավորանքի հանդեպ։ Նրա համար այնքան ցավ չեր փիլոնից զրկվելը, ըստ վորում՝ նա առանց փիլոնի ավելի ազատ կզգար իրեն ամեն տեսակ կաշկանդումից և համարձակ կասեր, կաներ այն, ինչ վոր կըզգար, ինչ վոր կը կամենար... այլ ցավ եր այն վիրավորանքը, այն անարդար պատիժը, վոր ի տարապարտուց հասցնում էին նրան, այն էլ հասարակության առաջ։ Նա նորից նայեց իր լշխանավորի յերեսին ու բարձր ձայնով կանչեց ինչպես դուքանի հորովել.

— Անարդարությու՜ն...

— Ցես քու կարգը վեր կառնեմ, մորո՛ս, քեզ բռնել կուտամ, խե՜նթ,— բոլոր թոքերից աղաղակեց վարդապետը։

Այդ խոսքի վրա Շվոտ չափառն ու կրոտ Պապիկը իրենց բազուկների մկանունքները լարեցին, պատրաստվեցին. մեկը իր մտրակը վեր քաշեց, մյուսը ճիպոտը։

— Ինչի՞. ենոր մեղքն ի՛նչ է,— ամբոխի միջից խոսեցին մի երիտասը,—որ պատժես. մենք խնդրվել ենք՝ են ել թաղել է. եդաեղ թե մեղք կա, եդ մեղքը մերն է: Ի՞նչ եներ. հրամը թողնիր, որ մեռելը հոտի՞ր, թաղքի քաղքեն դոխտուր գար... Հերու ել Գանձա ելի եդման մե բանմ պատահավ, մինչի դոխտուր եկավ՝ մե շաբաթըմ անցավ. մեռելը լիրխել եր,—ասացին ու վեր կացան նստած տեղերից:

— Դո՛ւք ինչի մեջ կընկնիք. ձեզի՛ վեվ իրավունք տվեց հայր տերբի գործերու մեջ խառնվելու, ենիկ զակոնը չիտե՞,—իր ձայնն ու մտրակը բարձրացրեց գյուղի յուզբաշին, վորի հետ իր ճիպոտը բարձրացրեց կորոտ-Պապիկ:

— Ինքը ճշմարտությունը,—աղաղակեցին խոսող յերկու գյուղացին և դուռը չբրիկացնելով յելան դուրս:

—Հայ ոչրտա շանվորդիք,—նրանց յետևից թունավոր հեգնեց գյուղի աղեն,—մոլիկ երեք, է՛, սոցիալիստ յեն դարձե,—այնպիսի տոնով արտասանեց նա, վոր բարկացած վարդապետի ծիծաղն անգամ շարժեց:

— Կորի՛, լիժի ծնունդ, կորի՛,—քահանայի վրա գոռաց փոխանորդը:

— Որ կեան գնա, գնա, ել մի կայնի,— իր կողմից նրան դառով յուզբաշին:

— Վո՛ւն, առաուզվա, պաժառնի,— իր կողմից հարեց չափառը:

— Կերա՛ր, իծի միրուք,— իր կողմից հեռնեց կոլոպ-Պապիկը և մատ դեմքին մի չար ժպիտ խաղացրեց, հիշելով այն մի անպամվա նախատինքը, վոր տեր Մլեն իրեն տվել էր յուզբաշուն տուտ վկա դառնալու համար:

— Փիլոնը առնիլը քիչ է. եզոր իծի միրուքը պիտի խուզես, իծի միրուքը, որ մեմ ել սեյիսի (նոխազ) պես տաղ գեղի առաջ չընկնի, գեղացոց իրեն յեռևեն ման չածե,— իրեն հերթին թելադրեց Ոհան-ապերը:

— Ցես Գ...Վարդապետը չըլինիմ, թե յես եզոր կարգը լուծել չրտամ,— Ոհան-ապորը հուսադրեց վեղարավորը:

Տեր-Մլեն իրեն կորցրած յելավ դուրս, և զգաց, վոր սրտում ինչ վոր վախ, ինչ վոր քեն աճում էր և ուռճանում ու վրեժ լուծելու ձև վորոնում վարդապետից, Ոհան-ապորից ու այդ կոմպանիայից:

Նրա կուրծքը արագ-արագ յելնում-իջնում էր. աչքերում յեռում էր բարկության հուրը. սիրտը ուժգին բաբախում էր, կասես են՝ ու-

դում եր տեղից դուրս թռչի... Նա չեր հասկանում, թե այդ բոպեին ինչ եր կատարվում իր մեջ, իր շուրջը. պետինը կասես նրա վոտքի տակից յետ-յետ եր փախչում...

Նա ընկավ ծանր խոհերի ու մտքերի մեջ։

Այդ բոպե նրա ուղեղի մեջ, կարծես, մի բան ընկավ, մի միտք, մի սարսափելի միտք, վոր իրեն առաջին նվաղ տակալի թվաց. սակայն վոխակալության թույնը այն սառիճանի գրթել եր նրա մեջ ու զարգացել, վոր այդ մտքի սարսափելիությունը վոչինչ համարվեց վարդապետի այն անպատվության հանդեպ, վոր հացրել եր իրեն։

Այդ հուզված և ալեկոծված դրության մեջ նրան շրջապատեց գյուղական ամբոխը և սկսեց հարց ու փորձը, մանավանդ, վոր նա առանց փիլոնի եր դուրս յեկել։

— Ցեռ որ ձեզի կըխնդրեյի, կաղաչեյի, թե մի՛ք զոռե, մեռելը մի՛ք թաղել տա, ինձի անկաչ չերիք, տեսա՛ք հիմի ինչ եղավ։

— Ի՞նչ, ի՞նչ, Տեր-Մլե։

— Տեր Մլեն խայտառակված, Տեր-Մլեն անպատվված, Տեր-Մլեն վիրավորված...

— Վա՛յ յես եռոնց են,—ամբոխի մեջից հանկարծ աղաղակեց աղքատ Ելբակն ու հասավ քարի։

— Չե՛, քարի վախտ չէ. դու արի ինձի հետ։

Ցեվ նա այլևս չլսելով ամբոխի ասածնե-ին՝ Ելբակի հետ գնաց գյուղից դուրս տա-նող ճանապարհով։

Արդեն արևը մայր էր մտել և աստղերը պապզում էին ամառվա լուրջ յերկնքի յերե-սին։

V

Ոհան-ապերը հասած էր բաղճանքին, վոր վերջապես Տեր-Մլեյին խայտառակել ու պատ-ժել էր ավել, են էլ գյուղի առաջ, մանավանդ, վոր դրան հետևերու էր նրա կարգալույծ լի-նելը։

Գյուղի աղեն ուրախացած, վոր իր հա-կառակորդը ընկճվել էր և այլևս գյուղի վի-ճելի հողերի մասին վեճ հարուցանող չէր լի-նի ի վնաս իրեն, վոչ էլ Ելբակի պես ողքատ զատոն իրեն վրա քար կրքաշեր։

Վարդապետը վոգևորված, վոր իր սիրելի գործակալի, մանավանդ նրա սիրեցյալ երի-ցուհու խնդիրը կատարել էր Տեր-Մլեյին պատ-ժելով (համաձայն Ոհան-ապոր աղաչանքի, վոր արել էր գեղեցիկ տիրուհուն) ևս առավել ուրախացած նրանով, վոր չար աչհամբուրի հոտ էր գալիս։

Գյուղի յուզբաշին յերկնքի ոխտը զաթը հասած, վոր առիթ եր ներկայացել իր ծառայությունը մատուցանելու Ոհան-ապորը, նրա հետ և գյուղի աղին (մանավանդ, վոր նրա միջոցով յուզբաշի եր դառել), նամանավանդ, վոր այդ որը լավ ուտելու և լավ տուզվելու յեր:

Կոլոպ-Պապիկն ու Շվոտ չափառը ցնծության մեջ, վոր իրենք այդպիսի զորեղ տերեր ու իշխանավորներ ունեն... այդ որը ողին չրի պես խմելուց զատ ուտելու եյին և համեղ պատառներ:

Քեֆ եյին անում, մի չեզած քեֆ. ուտում եյին նոր մորթած թուշի գառան միսը, վրայից խմում կարմիր գինին, վայելում կարագն ու սերը, ձուն ու մածունը, մեղրն ու սերուցքը... Վերջապես խրաճխանքը հասավ այն աստիճանի, յերբ ճրագներն արդեն վառել եյին, գրասում ձեռք ու վոտքը քաշվել, նրանք կանչել տվին աչուղ Սիյայուն ասղ ածելու և վարդապետը յերգեց իր հարինած յերգը՝

«Ո՛վ կուլյա նազելի, հերիք ինձ տանջես»... Իսկ Ոհան-ապոր վիրդիները (բացի մեծից, վոր լատ կանանի, յերևելիների հետ նստած եր սեղան) և հարանները մի գրուխ լիք ամանները նեղա եյին բերում և գառարկները դուրս տանում:

Մի քանի գյուղացի էլ, ներսը մնացած աչքի պոչով շալուռնակ նայելով լիքը սեղանին, յերբեմն-յերբեմն մի-մի բաժակ ողի ու բրդուճ առանալով, թքերը կուլ տալով, անվերջ դիտում էյին, թե ինչպես գայլի նման յափում էյին գյուղի առաջավորները, կոնծում էինին ու ողին և ափեղ-ցիեղ խոսակցություն անում:

Ապա խնջույքի վերջին Ոհան-ապոր կինը, իր զանավոր շորերը հագած, հյուրերի առաջ բերեց իր ձեռով պատրաստած տաք հալվան:

Ցնծությունը կատարյալ էր:

Ներսը յեղած մի քանի գյուղացի հյուրերն արդեն գնացել էյին, մնացել էյին միայն առաջավորները, վորոնք քիչ առաջ յեղածը մոռացության տված, անձնատուր յեղած իրենց մարմնական վայելչությանը՝ յերգում էյին ու պարում...

Հանկարծ այդ ժամանակ լսվեց շների մի տարտինակ կաղկանձյունով հաչոց, դրանից հետո ինչ վոր քաշքշոցի ձայն, վորից հետո ինչ վոր մոխրագույն բան շպրտված Տեր-Մելի առաջնորդությամբ ներս ընկավ յոգլոգ աղքատ Ելպակը, քրտինքը յերեսին, բեռան տակ կուչ յեկած. ներս մտնելուն պես նա մեջքից բեռը շպրտեց գետին, վորից հետո Տեր-

Մլեն թուն դարձած աչքերով շեշտակի նայեց վարդապետի յերեսին ու գոռաց.

— Կասեյիր հանցանք եմ գործե, հա՞, որ մեռել եմ թաղե. ահա՛, ստացի...

— Ահա՛ ստացի,—հեգնանքով կրկնեց աղքատ Ելբակը և չարախինդ կերպով ծիծաղեց։

Յերկինքը կասես փուլ յեկավ փոխանորդի գլխին. բարկությունից ու հուզմունքից նրա աչքերը մթնեցին, նա կատաղության գագաթնակետին հասած բարձր գոռաց.

— Սիբիրակա՛տ՛ա՛ն,—և սկսեց իր մաղերն ու մխրուքը փետել։

Մյուսները քարացած մնացած այդ անապատելի ու ցինիկ յեղերության առաջ, չըգիտեյին ինչ անեյին, ինչ ասեյին։

Մինչ նրանք ապշած դրության մեջ եյին, տեր-Մլեն աղքատ Ելբակի հետ թողեց յաղլըղը հեռացավ։

---

# ԽԱՆՈՒՄԸ

## I

Ինչպես յենթադրում եր Խաչոն, թե Մանանդենց տան գործը թեթև կըլինի՝ (ինչպես նրան հավատացրել եյին վարձելու ժամանակ), այնպես դուրս չեկավ, ընդհակառակը, քանի գնաց ավելի ծանրացավ: Ամենադժվար բանը, վոր նրան տանջում եր՝ դա նրա ձորից ուսով ջուր կրելն եր. սկզբից քանի Մանանդենք եշ եյին պահում՝ նրա վրա չորս կուժ բարձած Խաչոն ջուր է բերում, բայց յերբ եշը սատակեց՝ այդ պարտականությունը ամբողջովին ընկավ նրա վրա:

Բացի այդ՝ Խանումը (այդպես եր նրա տան տիկնոջ անունը) հետզհետե այնքան մաքրասեր եր դառնում, վոր քիչ եր մնում, թե տան վառելափայտն անգամ լվանալ տար. իսկ ամեն լվանալը, առավոտ-յերեկո ինքնայեռ դնելը, կոշիկ սրբելը, կովը կթելը, նրա հորթին նայելը, դուքան-բազար գնալը, սենյակի հատակն որ-մեջ լվանալը իրեն կարգին...

Այդ բոլորն այնքան եյին ծանրացել Խաչոյի վզին, վոր չըգիտեր ի՛նչ աներ, ինչպես ազատվեր, մանավանդ, վոր նա իրեն համար մի տեսակ վիրավորանք եր համարում՝ ակտին (լծակ) ուսին, ժամացույցը կրծքին, (վոր նա հաճախ, տեղի թե անտեղի, կրծքի գրպանից հանում, նայում եր) ձորից ջուր եր կրում։

Բայց ի՛նչ աներ. նրանք—հայր և վորդի մոտ հիսուն ռուբլի պարտք ունեյին գեղի աղին, վոր արել եյին մաղթին տալու, մասամբ ել Խաչոյի հարսանիքը անելու համար (հարսանիքը, վոր գյուղում առանց ծախքի ու առանց պարտք չե լինում) պետք եր մի կերպ, յեթե վոչ բոլորը միանվագ, գոնե մաս-մաս վճարեյին, և այդ անելու միակ հնարը Խաչոյի քաղաք խզմաքարության մտնելն եր աշնան և ձմեռվա ամիսներին, մինչև վոր գարունը կը բացվեր և դաշտային աշխատանքները կսկսեյին, այլապես՝ մուրհակի ժամանակը կըլրանար, ելի աղեն կըգար գլխներին կրկանգներ ու կըկանչեր.

— Ցեղո ախպեր։

— Հրամմե։

— Ետոր պարտքիդ ժամանակն է։

— Աղա ջան... աղա...

— Ինչ աղա՛, աղա՛...

— Զլկա՛,—հազիվ է շշնջում Խաչոյի տայրը՝ Ցեղոն:

— Զլկա՝ ինձի՛ ինչ. կովդ ծախե, տու...

Այդ մտածմունքների մեջ թաղված եր նայելը խոհանոց մտավ տանտիկինը:

— Խանո՞ւմ:

— Ի՞նչ է:

— Եսոր չարտուն մի լավ եշմ եյին բերե:

— Ե՞շ:

— Հրամանք ես, եշ:

— Ե. ի՞նչ ընեմ:

— Ըսի սապռ երեք երթամ խանումիս իմաց տամ. աղունցս եշը սատկել է, ըլլի որ առնեն:

— Քաջ է, թե որց:

— Որց:

— Ե, աս ըշալը լավ չե:

— Ինչի՞, խանում, մեկ չե՞. եշը եշ է:

— Հըլպըտ որ մեկ չե:

— Եանի ինչի՞:

— Քաջը քուռակ կըբերե, լակոտ, քուռակ:

Խաչոն չիմացավ ինչ պատասխան տալ խանումի այդ դեպի իրեն արհամարանքով վերաբերվող ու վիրավորական վարմունքին,

Խանումը նկատելով այդ ակամա դառով.

— Վե՞ր առեղի եշ ե։

— Վաշիանու։

— Վաշիանու եշերը լավ չեն ըլլի,—խոսքը կոճկելու համար վրա բերեց խանումը։

— Ինչի՞ խանում. զաթեն Վաշիանու եշն ու շաղկամը գովես, թե չե մարդը հեչ՝ նավթը վրեն ըլես, ըսպիչկեն տակը տաս։

— Չե, դու սխալ յես,—ձայնեց խանումը, և մտքում շարունակեց, «ըշտը ինքդ եշ. կրե՛... ձմեռ ժամանակ մեմ ալ իշու ծախք»։

Խաչն պարզ հասկացավ, վրը Մանանդենք եշ գնելու արամադրություն չունին, բռեց և նորից ընկավ մտածմունքների մեջ։

## II

Զատիկը մոտենում էր։

Գարունն իր լայն թևերով վրա էր հասել. հողմը անցնելով հարավից հյուսիս փըշրում էր ձմեռվա ամուր կապանքները. առուները, արձակված ձմեռվա սառույցներից, մեղմ կարկաչով փութկոտ հոսում էին դեպի գետակներն ու գետերը. աղբյուրներն իրենց զըրնգոցն էին շաստացրել. արեգակը հեզիկ նայվածքով վերևից քնած յերկրին ու նրա ծոցում թմբեր մտած խոտին ու ծաղկին, կար-

ծեռ, ասում եր՝ «վե՛ր կացեք, ի՞նչ եք քնած մնացել. տեսե՛ք, յես պարձյալ այստեղ եմ, ձեր հավիտենական բերեկամը ձեր կյանքն ու արևը»...

Զնծաղիկն իր պլուխը ձյունների փեշերի տակից հանած նայում եր վեր, նազանի վողջույն արձակում այնտեղ մայր արևին. խոտերը նոր բողբոջներ արձակած աշխատում եյին յերկրի յերեսը ծածկել-զարդարել իրենց թավշյա տերևներով. զարնան ամեստաբեր արագիլն ու ասպյակը նոր վերադարձած իրենց բները՝ կարկատում եյին այն՝ ձու ածելու, ձագ հանելու պատրաստություն տեսնում. մեղուները նոր դուրս յեկած իրենց փեթակներից դաշտ եյին թռչում ծաղիկ վորոնելու, մեղր դնելու. ձմեռվա դորշ և ժայռի նման սև-սև ամպերը այժմ ճիպ-ճերմակ դարձած, ինչպես բամբակի քուլաներ, ազատ-արձակ լողում եյին կապույտ յեթերում, ամեն տեղ հասնելու, ամեն տեղ անձրև թափելու, յերկիրը վառոգելու, փափկացնելու, վարի ու ցանքի համար պատրաստելու:

Մայր յերկիրն իր կուրծքը փափկացրած սերմացան եր կանչում. յերկրագործն իր արորի ու տափանի պատրաստությունն եր տես-

նում, վոր դաշտ դուրս գար, իր սերմը հողին, իր հույսը ասածուն հանձներ, ձմեռվա համար պարենի պատրաստություն տեսներ։

Յաչոյենք էս դուրս եյին գալու դաշտ իրենց մի–յերկու կտոր արտը վարելու–ցանելու. սակայն Յաչոյի հայրն արդեն հասակն առած, ծերացած մարդ լինելով անկարող եր դաշտային ծանր աշխատանք կատարել՝ մաճրոնել, հարկավոր եր, վոր Յաչոն վերադառնար գյուղ իր մի զույգ յեզը միացներ իրեն պես չքավոր մի ուրիշի մի լուծք յեզան հետ, իր ցանքն աներ։

Բայց ի՞նչպես գնար Յաչոն, քանի վոր մի քանի ամիս է ինչ ծառայում եր Մանանդենց մոտ, իր վարձի միայն մի մասն եր ստացել, մյուս մասը մնացել եր ստանալու, և վորքան աշխատել եր նա իր վարձը ըստ աշխատանքի չափի ստանալու՝ վոչինչ չեր դուրս յեկել, ըստ վորում նրա և տղայի բանավոր պայմանն այդպես եր յեղել։

Այժմ հասել եր այնպիսի ժամանակ, վոր Յաչոն ուզենար–չուզենար, պետք է գնար. հարկավոր եր մի այնպիսի հնար գտնել, վոր մնացած հախը ստանար ու բոլորովին հեռանար այդ անհամ տնից։

Եվ մեկ որ նա թախանձանք խնդրեց Խորենին (այդպես էր Խանումի ամուսնու անունը), վոր իր հատանելի ռոճիկը լրիվ տա.

— Հերս խաբար է երե, մաղթին կուզեն— թե չըտանք՝ կովը կըծախեն...

— Կը ծախեն, թող ծախեն, ինձի՛ ինչ:

— Աղա՛ ջան, ճիտս գարկած մի՛ թողնի:

— Զիլլի, չե՛:

— Կուզես բերնես գիր տամ:

— Գիրն ի՛նչ կենեմ, պայմանը պայմանն է,—վրա բերեց Խորենը և յերեսը շուռ տվեց մյուս կողմ:

— Խանո՛ւմ տալա,—Խորենի գնալուց հետո նա դառավ տանտիկնոջը,—ոտքդ պագեմ, յես խնդրեցի մերժեց, դո՛ւ խնդրե աղիս մնացած հախս տա, գեղ դրկեմ, քանի գեղեն մարդ կա:

— Ցես որ աղիդ բան կաես՝ խիստ կընեղանա, թե «իմ գործիս մի՛ խառնվի»,—կարճ կտրեց Խանումը և մտավ սենյակ:

Խաչոն մնաց շվարած, մինչև իսկ հուսահատության մեջ, ի՞նչ աներ ինչպես աներ, վոր այդ վիճակից դուրս գար. մտածեց-մտածեց ու մեկ որ ել սկսեց կաղել:

— Խաչո՛,—առավոտ կանուխ խոհանոց մտնելով կանչեց տանտիկինը:

— Հրամմե, խանում։

— Ադ ինչի՞ յես նստե, չրի չես երթա։

— Ի՛նչըդ երթամ, Խանում, ոտքս խակի չեմ կարա շարժե...

— Ի՞նչ ե եղե։

— Ցավիկը։

— Վոտքիդ վե՞ր ոտդը կը ցավի։

— Զուկը։

Զուկը վե՞րն ե, ծո խեբա՛ռ...

— Այսի իլիկիս յեռելը,—արնգի ոտկի հատա մկանունքը ցուլյց ուվեց Խաչոն։

— Ինչի՞։

— Զիտեմ։ Կսեմ ոտով շատ չուր կրեցի, ենդիցյ ե։

— Տաք պահե՛, ոտք, կանցնի. քան չրկա. հերու ալ ադպես ադիդ վոտքը ցավավ, ոտք պահեց, անցավ։

— Վա՛յ-վա՛յ-վա՛յ,—հանկարծ ձայնեց Խաչոն և վոտքը բռնեց։

— Ի՞նչ եղավ, ծո՛. մարդ ալ ադպես ուրչի պես բռնա՞։

— Սգուն ելի բռնեց, Խանում։

— Հիմի մի դենումում (նվագ) չուր չիպիտի՞ բերես։

— Իսկի՛ հնար չունեմ,—կտրուկ վրա բերեց Խաչոն և քաշվեց մի կողմ։

— Կըտեսնի՞ս աղ մուտքին,—բարձր խոսեց Խանումը և շարժվեց դեպի ննջարանի դուռը ու բաղխեց,—մեմ ասա՛ղ արի, ասա՛ղ։

Նրա ձայնի վրա ննջարանի դուռը բացվեց և մտավ Խորենը։

— Աղ ի՞նչ ե։

— Ալ ի՞նչ ըլի· որը եկել ցորեկ և դարձե, դեռ չրի չե գնացե։

— Ծո փո՛ւչ, ինչի՞ չրի չես երթա։

— Ցանի թե վոտքը կրցավի,—վրա բերեց Խանումը և շարունակեց,—յես քեզի ա՛ն գլխեն ասի, թե գանձացի խզմաքյար մի՛ քունե, սուտ խոսող, մատրաբազ յեն· էրլնեցիր· հիմի տեսա՞ր, խոսքս թաղավորացավ· դե՛, գնա տեսնիմ հիմի ի՞նչ պիտի անես· որն եկե ցորեկ և դարձե, տունը պուտըմ չուր չկա··· Ու,—ֆշշացրեց նա,—գեղացի ըսածիդ քոքը կտրի, քոքը···

— Խանում, ինչի՞ կընեղանաս, ոտքս···

— Հիմիկվա ժամանակ արի ու աղպխներուն լավութեն արա, խզմաքյար բունե,—նրան հերթ չըտալով վրա բերեց Խանումը։

Խորենը տեսնելով, վոր զոռով վոչինչ չի լինի, մանավանդ, վոր Խանումի համբավը քա-

ղաքում յելած եր՝ «տարին տասերկու խրդ-մաքյար փոխող», և. յեթե սա—Յաչոն—ել դնար՝ դժվար թե շուտով նոր ծառա կարողանար ճարել՝ ցածր ձայնով կնոջը դառավ.

— Գլուխը քարը, թե կըցավի. սուճուն որական երկու-երեք դապեք կուտանք, կըբերե, թա՛քի մնա, չըգնա,— և ուղղվեց դուրս Չրկիրին իմաց տալու:

—Զաթեն դո՛ւ յես դո՛ւ ադոր յերես տըվողը,—նրա յետևից ազաղակեց Յանումը և բարկությամբ դրսի դուռը շրխկացրեց:

## III

Չրկիրի Ջուր բերելը չոգնեց Յաչոյին մնալուն:

Զարչարանքի շաբաթին՝ մի որ, Յաչոն պառկած մնաց տեղաշորում (յեթե այն չուլ ու չափուկը, վորոնց մեջ քնում եր նա՝ կարելի յե տեղաշոր անվանել), և յերբ Յանումը մտավ խոհանոց, նրան տեսավ.

— Յանում ապլա:

— Սլի ի՞նչ ե:

— Գեղ պլտի երթամ:

— Ինչի՞,—այլայլված հարցրեց տանտիկինը:

— Ոտքիս յախուռ ցքել տալու:

— Ասաել յախտ ցքոլ չըկա՞, ի՛նչ և։

— Մեր գեղը մե կնիկըմ կա, անունը Հանե, լավ յախտ կըցքե, համ ել լավ պոչ կըշիտկե։

— Ի՞նչ, խոյ քու պոչը չե՛ ծռե։

— Զե. ոտքս... յաման կըցավի։

— Կանցնի. բան չըկա. տաք պահե, կանցնի,—աշխատելով խոսքը կտուրը գցել կոճկեց Խանումը։

— Զե՛, Խանում, եսպես մնա ոտքս կըսախթի. մեղք եմ։

Խանումը, վոր յերկար ժամանակ իր բարկությունը զսպել եր, այս անգամ այլևս անկարող յեղավ պահել.

— Հըլպըթ, հիմի կերթաս, անոթի փընտ... շունքի վրադ-գլուխդ թաժժացավ, մարդ դարձար...

— Խանում, ինչի՞ կըհեռատես. հրալը խոյ չեմ թողնի ոտքս փչանալու։

— Երթաս, որ ալ չըգաս, հա՞. պիտես, թե յես քու սատանութենդ չե՛մ հասկընա... Զիլի՛, չե։

Խաչոն դառնությամբ նայեց նրա յերեսին և խիստ զայրացավ, վոր չի կարողանում մի կերպ եդ տանից, եդ ընտանիքից ազատվել։

Նա նորից նայեց խանութի բարկությունից կարմրած դեմքին ու մտքում վորոճաց.

«Ինչ կուզի խոսի. յես երթալու յեմ»:

Այդ ժամանակ խանութից ոուն եր վերադառնում Խորենը. նա լսելով կնոջ կատաղի հայհոյանքները՝ հարցրեց.

— Կենա ի՞նչ է պատահե:

— Ալ ի՞նչ ըլլի. հիմի ալ կայնել է, թե «գեղ պիտի երթամ»:

— Գե՛ե՛ղ,—յերկարացրեց Խորենը և հայացքը ուղղեց դեպի Խաչոյի կողմը:

— Աղա՛, երթամ, լավնամ, գամ:

— Սո՛ւտ կըխոսի, մի հավատա. միտքը ան է, որ երթա ու ալ չըգա... Առանց քոքն ու ջինը վար անցնի:

— Առածու խերը, չե,—յերդվեց Խեչոն:

— Քա՞նի որով իզին կուզես,—հանդիսատանով հարցրեց Խորենը, նկատելով Խաչոյի վճռականությունը և ուզենալով մեղմությամբ դրավել նրա սիրտը:

— Ավելի չե. երկու շաբաթ:

— Կիմանա՞ս,—մեջ ընկավ կինը:

— Զե՛, երկու շաբաթը շատ է. մի շաբաթըմ հերիք է:

— Ցնդե՞լ յես, ի՞նչ է,—ամուսնու գլխին

ձեռքով բռթեց Խանումը,—կը մտածե՞ս ինչ կըխոսիս։

— Վնաս չունի։ ազիզ որեր յեն։ նոր պատկած ջահել տղա է։ մի շաբաթով թող երթա,—կնոջն ուզեց հանգստացնել Խորենը։

— Դե լա՛վ, դու ինձի անկաջ մի՛ ընե, իզին տու։ վնաս չունի։ ասուած տա՝ չըգա, ան վախտը կըտեսնես հալը,—խմուանու վրա ճրդճրդաց Խանումը և դժգոհ հեռացավ։

— Հըմը՝ գաս, հա՛տ։

— Գա՛մ, գա՛մ։

— Հաստա՞տ։

— Են կանանչ մեռանը։

— Լա՛վ, հացըդ կե, յել գնա։

— Երթամ հըմը... աղա,—ծոծրակը քորեց Խաչոն։

— Ի՞նչ հըմը,—նրա յերեսին հարցական նայեց Խորենը։

— Ինչո՞վ երթամ։

— Ինչո՛վ կուզես՝ գնա։

— Ոտքս գետին չեմ կարա դնե։ ճամբու ծախք չունիմ։ գեղը հեռու...

— Ե՛ ի՛նչ անեմ, թե չունիս։

— Են մնացած մե ամսվա հախս ել է տու։

— Զե՛, չիլի,—կտրուկ վրա բերեք Խո-

բենը և ուզեց հեռանալ, ոձիքն ազատել։

— Ոտա՛ցդ մեռնեմ. իլլաձս դո՛ւ յես։

— Պայմանը պայման է. մե ամսվա հախը իմ վրա է մնալու։

Խաչոն մեկ-յերկու վայրկյան մտածկոտ աչքերով նայեց Խորենի յերեսին և հանկարծ վճռական ձևով դարձավ։

— Սահաթս քովդ ռեյին կըդնեմ։

— Ռեյի՞ն. սահա՞թդ,—մեքենայաբար կրկնեց Խորենը և ուշադրությունը դարձրեց Խաչոյի կրծքից քաշ արած թեզանուն, վորի ներքև, նրա կրծքի փոքր դրպանում, հանդչում եր նրա ժամացույցը։

Խաչոն այդ նկատելով հանեց ժամացույցը, իբր նայելու ժամը քանիսն է, և նորից դրեց դրպանը։

— Լա՛վ,—ձայնեց Խորենը, հանեց ծոծից փողի քսակը, մի յերեք ռուբլիանոց ավեց Խաչոյին և առնելով նրա ժամացույցը յերակ դուրս։

Մի ժամից Խաչոն, վեր կացած տեղից, լռնել եր գյուղի ճամբան։

## IV

Անց կացավ վեց-յոթ, վերջապես տան որ։ Խաչոն չեր յերևում։ Այդ հանգամանքը վրքան Խորենի համար մտածմունքի առարկա յեր, այնքան ել Խանումի համար բարկանալու առիթ, մանավանդ, վոր այդ շաբաթ, այդ ա-զիզ որերին, չափից շատ եր աշխատել։

— Տեսա՛ր, դըմբո, քեզի որ կըսեյի, թե «չի գա», չեյիր հավատա. դե հիմի գնա տեսնեմ ի՛նչ պիտի ենես... Ըսենք քեզի համա՞ր ի՛նչ. իմ հոգիս թող դուս գա... Դուք արզրումցի տղամարդիկդ լավ կնիկ չարչըրել գիտեք։

— Կուգա՛, կուգա՛. համբերությունն ունեցի. բավ «երկու շաբաթ»։

— Դու ադ հավտին կեցի, թե կուգա... խելքի տոպրակ. խզմաքյարն անգամ քեզի կըխաբե։

Արդարև, անց կացավ յերկու շաբաթ, մտան յերրորդը, Խաչոն դարձյալ չեր յերևում. Այլևս կասկած չըկար, վոր Խաչոն նրանց խաբել եր։

Խանումի բարկությունն արդեն գագաթին եր հասել. նա կատաղած ման եր գալիս տան մեջ և կատվի նման ֆշշացնում եր.

— Ան եշ գեղացին իրեն հալվը գա իմ

քովս, տարով խզմաքյար մանի, տարին չլմնցած երկու շաբթով իզին խնդրե գատկին տուն երթալու, հախը թամամ առնի, երթա ու ալ չըգա՞ա՞... Մարդ սաղ-սաղ մեռնի լավ չե՞... ա՛խխ, մարդ, քեզի ինչ ասեմ, որ...

Նրա բարկությունն ավելի ևս սաստկացավ այն ժամանակ, յերբ իրենց միս բերող մսագործի գործակատարից իմացավ, վոր Խանոն վոտով և գյուղ գնացել ինչպես տղոչ մարդ, առանց կաղելու...

— Իմացա՞ր. քեզի որ կսեյի, թե մի հավատա, ինձի չեյիր լսե. հիմի խոյ անկչովդ իմացար, որ սուտ թոփալ և ձևացե... լա՛վ, բաեանք, թողիր, ի՞նչ ասիր բոլոր հախը տվիր. մեմ ինձի չը հարցնեյիր, մեմ չը մտածեյի՞ր, թե արածդ ին՛չ է:

— Ցես մտածել յեմ, մտածել,—ուզենալով զարմացալին վերջ տալ, կնոջը ընդհատեց Խորենը,—դու անհո՛գ կեցի:

— Ի՞նչ յես մտածե,—հարցական ամուսնու յերեսին նայեց Խանումը:

— Ան, որ սահաթը քովս ռեյին յեմ առե:

— Ի՞նչ. ռեյի՞ն. սահա՞թը,—աչքերում ուրախության ժպիտը փայլեցնելով ճչաց Խանումը. կարծես, նա այդ բոպե, մի գյուռ արած լիներ,—զո՞ւրթ կաեա:

— Հլպը՛. խելքդ ի՞նչ կըկորեր. առանց ուեյինի յես անոր փարա՛ կուտայի՛...

— Վույ, հոգո՛ւդ մեռնիմ, մարդ, աղ ի՛նչ լավ բան յես արե,—ուրախացած խոսեց նա և փարվեց ամուսնու վզով.—աղ սահաթ ինձի՛ տու:

— Ի՞նչ պիտի անես:

— Պետք է:

Խոլենը հարցական նայեց կնոջ յերեսին, ուզենալով իմանալ նրա ժամացույցը խնդրելու պատճառը:

— Կուտա՞ս, հա՞:

— Լա՛վ,—ձայնեց Խոլենը, մոտեցավ իր անդկին, վորտեղ իր փողերն ու հարկավոր թղթերն եր պահում, այնտեղից՝ հանեց ժամացույցը և տվեց կնոջը:

— Դե հիմի տապ երա դու, ե՛շ գեղացի, տապ երա, թե քու գլուխդ ինչ ոյին եմ բերելու. հելալբթ կուգաս,—չարախինդ ինքն իրեն խոսեց Խանումը:

## V

Անցել եր եռ մի քանի որ:

Մի առավոտ Խոլենն ու Խանումը տեղաշրջից նոր եյին վեր կացել, վոր դրսի դուռը թակեցին:

— Վե՞վ է,—գոգնոցի գոտին կապելով և չանթերը վոտքերը գցելով դեպի դրսի դուռ շարժվեց Խանումը։

Դուռը բաղխողը ձայն չրհանեց։

— Կը հարցնեմ վե՞վ է,—այս անգամ դռուց Խանումը,—ձա՛ն հանե։

— Ցես եմ,—հազիվ լսվեց մի մաշված և անհամարձակ ձայն։

— Դու վե՞վ ես։

— Ցես, յես... կըմկըմաց բաղխողը։

— Թե՛զ, թեչե չեմ բանա։

Այդ խոսքերը յերկու կրակի մեջ դրին բաղխողին. ի՞նչ աներ. ասե՞ր իր ով լինելը, թե չասեր. յեթե ասեր՝ կասկածում եր, թե դուռը կբանային. նրան կընդունեյին. յեթե չասեր... Բայց ի՞նչպես չասեր, քանի վոր ասելիք ուներ և այդ ասելու համար եր, վոր յեկել եր. վերջապես նա յերկյուղը սրտում թոթովեց,—գեղացի։

— Գեղացի՞,—ինչ վոր իրեն համար անհասկանալի զարմանքով կրկնեց Խանումը։

— Հրամա՛նք յես։

— Ի՞նչ կուզես։

— Իմացել յեմ խզմաքյար չունես, մանչա բերել յեմ քովդ խզմաքյար տալու։

— Խոյ Գանձացի չե՞ս։

— Չե՛, Խանում. Ասելա՛ծ չենք։

Այդ հայտարարության վրա Խանումը դուռը բացեց և նրա առաջ արձանացավ մաշված, կնճիռներով ծածկված դեմքով մի կարճահասակ ծերունի, վորի մորուքը, գրեթե, բռնել եր նրա ամբողջ յերեսը։

— Ի՞նչ կսես, ախպար,—արխալուղի կոճակները գցելով մոտեցավ նրանց Խորենը։

— Աղա՛ Ջան։

— Ի՞նչ ե։

— Գեռե՛ս ինչ,—ձայնեց ծերունին և ծոծրակը քորեց։

— Ի՞նչ։

— Շիտակն ասեմ։

— Ասա՛, ի՞նչ ե։

— Մանչա... մանչա...

— «Մանչա, մանչա»... ի՛նչ մանչդ,—հեգնելով նրա վրա բղավեց Խանումը,—ասելու յես ասա, թե չե ել մի յերկնցնե...

— Ի՞նչ. մանչդ հեռդ չե՞ս բերե։

— Չե՛, բերել յեմ։

— Հլպը ալ ի՛նչ։

— Մանչա... Խաչոն ե։

— Խաչո՛ն,—այս անգամ այնպես ճչաց Խանումը, վոր քիչ մնաց առաստաղը վեր

բարձրանար: Խորենն ու գյուղացին այդ ճիչի վրա ցնցվեցին:

— Դու համարձակի՞ ես, ե՛ հ գեղացի,— փրփուրը բերանին աղաղակեց տանտիկինը. —ինձի խաբելու, ասելու, թե գանձացի չես, որտով դուռս բանալ տա՞ս...

Այդ հանդիմանության վրա ծերունին քարացավ. նրա լեզուն պապանձվեց բերանում: Այն փոթորիկը, որ նա սպասում էր՝ պայթեց:

Ինչի՞ յես եկե. ասա՛ շուտ, միտքդ ինչե— նրա լռությունը տեսնելով վրա տվեց Խանումը:

— Խանում ջան, մի նեղանա, ուզում պա— գեմ,—հազիվ թոթովեց ծերունին:

— Իմ վուրքս պագել հարկավոր չե. ասա՛, ինչի՞ յես եկե,—այս անգամ վուռով գետինը ուրուփեց խանումը:

— Եկա...մանչս ղրկեց:

— Մա՞նչդ..մանչդ ի՞նքն ինչի՞ չեկավ:

— Վախենալուն...ինձի ղրկեց:

— Քեզի ղրկե՞ց. ինչի՞:

— Որ սահաթը տանիմ,—հազիվ արտասանեց ծերունին, կասես այդ արտասանածը իրեն համար մի հանցանք համարելով:

— Որ սահաթը տանիս,—կրկնեց խանումը և շարժվեց ներս։

Ծերունին ուրախացած նրա հեռանալուց՝ սիրտ առավ ու քիչ համարձակ դառավ Խորենին.

— Աղա՛ ջան, հոգուտ մեռնիմ, ներող եղի. աղքատ ռանչպար մարդ ենք՝ վար ու ցանքի ժամանակ է. ինքս եխտիար, դործ չեմ կարա ենե. մանչա եկավ, որ տանս գործը եոլա տանի...Դո՛ւ գիտես, ոտքդ յեմ ընկե. աստծու են անունը վկա, սուտ չեմ խոսի,—փափաղը գլխից վերցրեց ծերունին և վերև նայեց,— տվեք սահաթը տանեմ, եսև ելի...

Մինչ Խորենը պատրաստվում եր նրա հետ խեսելու, մի միջին ճանապարհ գտնելու, հանկարծ, ժամացույցը ձեռին, դեմքի կրքոտ արտահայտությամբ դուրս յեկավ Խանումը.

— Որ սահաթը տանի՞ իս...

Ծերունին մի վատ նախազգուշացումով ու կասկածանքով նայեց նրա յերեսին։

— Փարան բերե՞լ ես. հա՞։

— Փարե՞ն,—խոսքը բերանում կիսատ մնացած կրկնեց ծերունին։

— Հա՛, փարան, փարան...

— Չ...չե։

— Որ չե՛, սահաթն ալ չե։

— Խանում ջան, ախըր մանչս...հախը...

— Դո՛ւս, աստեղեն, մատռաբազ շուն, դուս՝—զոռաց նրա վրա Խանումը և ուղղվեց դեպի դրսի դուռը։

Ծերունին անարգված ու անպատվված, կլխավորը՝ իր նպատակին չը հասած, սրտաբեկ ուզում եր հեռանալ, յերկյուղ կրելով համարձակ ասելու, վոր իր վորդին այն վերջին յերեք ռուբլին, վոր ստացել է՝ ժամացույցը գրավ դնելով՝ դա նրա մի ամսվա ռոճիկն է, վոր վոչ մի պարտք չունի. ուրեմն ժամացույցը իզուր յեն պահում...

Այդ ժամանակ խանումը, վոր արդեն փողոցի մայթին եր և այնտեղից տեսել եր քիչ հեռուն կանգնած Խաչոյին հորն սպասելիս, վորպիսի յերևույթը նրան խելագարության եր հասցրել, փրփուրը բերանին նորից մտավ ներս ու զոռաց.

— Ա՛յ դու անամոթ. ճերմակ մազերդ ալ չես ամընչե, մանչդ բերել անտեղ կայնեցույց յես, ինքդ ալ եկել յես հոս, ատեն դուռը կըծեծես, բանալ կուտաս, յեսև ալ կսես թե՞ սահաթը տո՛ւ տո՛ւ...Ա՛յ քեզի սահաթ, ա՛յ, ա՛յ,—աղաղակեց նա և վերցնելով ձեռն ընկած

վառարանի մաշան այնպիսի միքանի հարված հասցրեց ժամացույցին, վոր գործիքը չարդ ու փշուր յեղավ և նրա ապակեա բեկորները շաղ ավին չորս կողմը.—ահա՛ քեզի սահաթ. ահա՛ ըստացի,—և չախչախված ժամացույցը բոլոր ուժով շպրտեց փողոց...

---

# ՎԻՃ

— Սրանից ավելի հարմար պատեհ չեր լինի, ընկերներ, պատմելու ձեզ իմ կյանքի այն նշանավոր դեպքը, որ տեղի ունեցավ ամուսնանալուցս վեց տարի հետո և որը ահագին հեղաշրջում առաջ բերեց իմ ընտանիքում: Ցեռ այժմ ձեզ կպատմեմ այդ դեպքը, մանավանդ, որ նրանք յերկուսն ել այժմ այլևս չըկան այս աշխարհում,—այսպես սկսեց իր պատմությունը մի տարիքն առած, արտաքինով վայելուչ մարդ, ամարանոցի մի ստվերախիտ պուրակում, յերբ հանգստանում եր իր մի խումբ մտերիկ ընկերների հետ:

— Առաջ յես մի գավառական քաղաքում պետական հողերի ագենտ եյի: Խիստ մեծ ընդունելություն եյի գտել այդ քաղաքի հայտնի ընտանիքներում և մեր հետ մտերիկ հարաբերություն ունենալը շատերի համար դառել եր մի անձկալի բան:

— Հասարակական բոլոր գործերում յես յուրանգուն մասնակցություն ունեյի և դառել

էյի այդ քաղաքի, համարյա, առաջին մրդը։

— Այդ ժամանակ յես մոտ քսան և ինը տարեկան յերիտասարդ եյի. հագնվում եյի կոկ, ճաշակով և մաքուր։ Պիտի ասեմ, վոր այդ բանում ինձ շատ ոգնում եր ամուսինս։ Գիտեք, վոր կանայք այդ բանում շատ նախանձախնդիր են։

— Իմ ծանոթ ընտանիքների շարքում կար մի պարզ, նահապետական, վայելուչ ընտանիք, վորը բավականին հայտնի եր և անուն ու դիրք ուներ քաղաքում շնորհիվ իր տանտիկնոջ վորը դաստիարակված, միջակ կրթության տեր մի վայելչահասակ, փարթամ կին եր։

— Դշխուհին (այդպես եր նրա անունը) պեղեցիկ եր. հունական դեմքին վսեմություն եյին տալիս նրա յերկու սև սաթի նման, շարունակ ժպտուն, աչքերը, վորոնց վերև կամար եյին կապում բարակ յերկար հոնքերը։ Այդ աչքերը կասես նայողին ասում լինեյին «поди сюда»։

— Սկզբից յես ուշադրություն չեյի դարձրել այդ հազվադյուտ գեղեցկության վրա, բայց յերբ վերջերը լավ դիտեցի տեսա, թե վորքան կանոնավորություն և համաչափություն կար այդ կնոջ դեմքի ու մարմնի վրա։

— Այդ յերևույթը, մանավանդ նրա չափից դուրս սիրալիր վարմունքը, իմ մեջ առաջ բերեց մրրիկ։

— Վորոշ ժամանակից հետո յես տարվեցի այդ կնոջով. իմ մեջ խաղաց յերիտասարդական արյունը, վոր հատուկ է այս հասակի մարդկանց։

— Դշխուհին զգացել եր այդ, և իր նախկին պարզ, անկեղծ և սիրալիր վերաբերմունքի փոխարեն ինձ փոխել եր, դառել եր ավելի զգույշ, մինչև իսկ մի տեսակ պաշտոնական։ Այդ բանում զարմանալի յեն կանայք. մեջ տեղում վոչ մի բան, վոչ մի փաստ չկա՝ սակայն նրանք արդեն ամեն ինչ գիտեն։

— Հրաժեշտներից հետո Դշխուհին այլևս ինքն ինձ չեր ուղեկցում առաջվա նման, այլ հանձնարարում եր իր ռուս սպասուհուն, վորը վայելուչ հագնված, մի հարուստ կրծքով և ավելի հարուստ մազերով դեռատի կին եր։

— Այդ տատանվող դրությունը յերկար շարունակելուց հետո վերջապես մեկ որ յես նրան հայտնեցի սրտիս զգացածը։

— Նա ցնցվեց, ցույց տալով իմ ասելիքի նրա համար անսպասելի լինելը և դառավ՝ «յես այս ձեզանից չեյի սպասում, դուք վոր այնքան լուրջ եք, այնքան գաղափարական»...

— Ի հարկե նա դրանով ուզում էր ամաչացնել ինձ, յես կացնել տալ իմ մտադրությունից...սակայն յես տարված նրանով այլևս անկարող էյի ինձ տիրապետել:

— Դրանից հետո նա շարունակ աշխատում էր ինձ բացատրել, վոր դա լավ բան չէ, վոր այդպիսի արկածները լավ հետևանք չեն ունենում, վոր ինքը տատքինի կին է, զավակների տեր, ունի արժանավոր ամուսին...Սակայն այդ բոլորը ինձ համար կորցրել էր իր նշանակությունը:

— Ցեվ յերբ յերկար ժամանակ աշխատելուց հետո չկարողացավ ինձ յես կացնել տալ իմ զգացմունքից՝ սկսեց սպառնալ ամուսնով:

— Ցես շատ լավ հասկանում էյի, վոր նա այդ անողը չէր, ըստ վորում կարող էր արատավորել իր անունը, մանավանդ կանանց աշխարում, վորտեղ գիտեն այդպիսի դեպքերում չարախոսել՝ իրենց նախանձին բավարարելու համար:

— Մի անգամ ել, յերբ, պարզյալ, նրա մխայնակ ժամանակը յես գնացել էյի մոտը, նա չտքեց տուն, սկսեց մատերը ջարդոտել, ոգաչել-պոգատել, վոր իմ զգացմունքը լինի

յուկ պղատոնական, խղճամ, խնայեմ իրեն...:

— Բայց յես արդեն դառել եյի բիրտ, անկարեկից:

— Մի որ, կարո՞ղ եք յերևակայել, յերբ ելի մենակ եյինք, հակառակ իմ սպասածի, նա բոլորովին մեղմացել եր, բոլորովին փոխվել... Թույլ տվեց անգամ իր բաղուկը համբուրելու. և յերբ յես դարձյալ իմ հոգեկան հուզմունքների մասին խոսեցի՝ նա ականջիս ցածր ասաց. «վաղն առավոտ ասան և մեկ ժամին կսպասեմ ձեզ. շքամուտքը բաց կլինի. կմտնեք այնտեղով, կանցնեք սեղանատունը, և ապա ուղիղ ննջարան»:

— Դուք կարո՞ղ եք յերևակայել իմ ուրախությունը. յես ինձ կորցրած, շնորհակալություն հայտնեցի նրան և հեռացա, սպասելով վաղվա տասնմեկ ժամին:

— Ցեսս ձիյով, կառքով, նույն իսկ վոտով պաշտոնական գործերով մտան յեմ յեկել շատ տեղեր որերով, շաբաթներով, սակայն դրանք ինձ համար այնքան յերկար չեն թվացել, վորքան 10–15 ժամ սպասելը. բոպեները կասես դառել եյին ժամեր, ժամերը՝ որեր. թե ինչ եր տեղի ունեցել այդ ժամանակ իմ շուրջը՝ յես վոչինչ չեմ նկատել, ամբողջովին յելեկտրականացած, տարված եյի վաղվա 11 ժամով...

— Հետևյալ առավոտ, սովորականից վաղ դուրս եկա տանից, մինչև տասնամեկ ժամը լրանալը անց կացրի, կամ, ճիշտ ասած, թափառեցի պարտեզներում, ապա յերբ քաղաքի ժամացույցը խփեց տասնամեկը՝ քայլերս ուղղեցի դեպի բաց շքամուտքը:

— Նախքան մտնելս նայեցի չորս բոլորքս՝ արդյոք վոչ վոք ինձ հետևող չկար, մի բան վոր ուրիշ անգամ չեյի անում, ապա սրտի ուժգին բաբախումով մտա ներս, փակեցի դուռը և սեղանատան միջով անցա ննջարան, վորը մթեցրած եր (պատուհանների փեղկերը փակած եյին):

— Դուք չեք կարող յերևակայել, թե ինչ վայելչություն եր դա...տիկինը իր հարուստ, մետաքսանման մազերը անուշահոտ յուղով ոծել, փռել եր բարձի վրա...իմ կյանքում ես չեյի դրկել այդպիսի իրան, համբույր չեյի քաղել այդպիսի այրող շրթունքներից...դա վայելչության այն գագաթնակետն է, վորից դենը մարդս ավելին չի կարող յերազել:

— Անցան րոպեներ...

— «Ցերջանիկ րոպեներ,—ինչ վոր քաղցր հաճույքով լցված ննջացին լսողները:

— Ցեռ վեր կացա շորերս հագնելու։

— Մթության մեջ վորպեսզի տիկինը ողնե ինձ՝ վառեց մոմը...և Աստվա՛ծ իմ...

— «Ի՞նչ,—հորս կողմից հարց տվին լսողները։

— Տեղաշորում պառկած եր վոչ թե Դըշխուհին...

— «Ապա ո՞վ...չլինի՞ աղախինը,—նորից հարցրին, կես կատակ, կես ապշած, ուկնդիրները։

— Վոչ։

— Ապա՞։

— Կինս...

— Վա՛հ, քո տունն աստված չինի։

Նրանց հաճույքով լի զգացմունքների վրա կարծես սառը ջուր ածեց պատմողը։

— Այո...նա մի դառը հայացք ձգեց յերեսիս ու խոսեց. «միևնույնը չե՞, ասա՛»։

— Ցեռ կանգնած տեղումս մնացի մեռած։

— Նա հուզմունքից ու կրքից վերմակը քաշեց գլխին և սկսեց հեկեկալ ու ցնցվել...

— Այդ ժամանակ յես տեղանի վրա մոմի լույսի տակ ընկած տեսա մի ծալած թղթի կըտոր. մի բանով դառն ամոթն ու անպատվությունը չզգալու համար վերցրեցի թուղթը, կարդացի.

«Հարգելի տիկին. վաղը ուղիղ տասնմեկ ժամին նշանակել յեմ ձեր ուզածը. խնդրում եմ զաք. նախազգուշական բոլոր միջոցները ձեռք յեմ առել:

Հարգանքով տիկին Դ...»

— Այլ ևս ինձ համար պարզ եր, վոր տիկինը չունենալով ուրիշ ճանապարհ ինձ յետ կասեցնելու՝ ընտրել եր այդ միջոցը:

— Դրանից հետո սկսվեց իմ ընտանեկան դրաման, մինչև վոր խորտակվեց մեր ամուսնական կյանքը. մեր հարաբերությունները բոլորովին փոխվեցին և մենք դառանք իրար համար ոտար անձեր. Վիշ ձգվեց մեր մեջ, վորը այլ ևս վոչ մի բանով չլցվեց:

— Մենք չբաժանվեցինք միմիանցից նրա համար, վոր ունեցինք յերեք զավակ, վորոնց հոգացողությունն ու կրթությունը մեր յերկրում պարտականություն եր և շուրջանք, վոր նրանք այդ հասակից հոգից կամ մոլից հեռու տարեն և լսեն մեր հեռանալու պատճառը, այդ մատաղ հասակում կյանքից հիասթափվեն...

— Այդ դեպքից յետո, այդ զավառական քաղաքում այլևս մնալ մեզ համար անհնար եր. ինչպես պահանջով յես թողի պաշտոնս, տեղա-

փոխվեցի Թիֆլիս, որտեղ մտա ուրիշ ծառայության և անձնատուր լեղա միայն աշխատանքի ու զավակներիս կրթությանը:

— Կինս յերկար չապրեց. յերկու տարի անց՝ նա վախճանվեց. վախճանվեց շատ անտարբեր, առանց մի որևե բան ասելու ինձ, յերեք անչափահաս յերեխաների հոգատարությունը թողնելով իմ վրա...

— Այդ ժամանակ վախճանվել եր և Դրշխուհին:

— Ցավ դուք նրանից հետո չուզեցաք յերկրորդ անգամ ամուսնանալ,—հարցրեց լսողներից մեկը:

— Վոչ,—բացատրեր ձեռը շարժեց պատմողը,—վոչ, յես չգիտեմ ինչու՝ վախենում եյի, թե կինս ելի պիտի գաներ ինձ ուրիշի անկողնում և ելի պետք է նախատինքով լի հայացքով նայեր յերեսիս. վո՛չ, յես իմ հանցանքը քավելու համար ուխտեցի ամբողջովին նվիրվել զավակներիս կրթության գործին:

---

# ՄԱՐԴԸ

## I

Մեծ լամպը ուժեղ լուսավորում եր հացի յերկար սեղանի շուրջը նստած մարդկանց դեմքերը, վորոնք ծանր թախիծով պաշարված եյին այդ յերեկո։ Վոչ հաստլիկ տիկնոջ զվարճախոսությունները, վոչ նորատի յերիտասարդի չարաճճությունները կարողացան զվարճություն ներսնչել յերեկոյան. հավաքվածներից յուրաքանչյուրը ծանր վոգոց եր հանում և տխուր նայում սեղանի ծայրին նստած միջատի անձին, վորը շատ մտազբաղ նայում եր իրան շրջապատողներին և թեյը դանդաղ խմում, և, վորպեսզի նկատելի չլիներ իր ճնշված լինելը՝ հաճախ մի-յերկու խոսք փոխարինում եր իր մոտ նստած թխադեմ որիորդի հետ և մեղմ, բայց վշտալի ժպիտ փայլեցնելով շրթունքներին՝ նրից անձնատուր եր լինում իր խորհուրդին։

Աղախինը հաճախ մտնում եր դահլիճ, թեյ, կամ ընթրիք ներս բերում, վորով փոքր ինչ

շարժում եր մացնում սենյակում, վորը նրա դուրս գնալուց յետո դարձյալ փոխվում եր թախիծի։

— Սա ի՞նչ է,—հանկարծ կանչեց յերկարահասակ յերիտասարդը և վեր կացավ նստած տեղից,—կասես մեռելատուն լինի. մենք հավաքվել յենք այստեղ ոգի տուն դարձնելու, թե՞ մեր ամենից հարգած մարդուն հրաժեշտի յերեկույթ տալու։ Թողեք այդ ամենը։

— Լավ է ասում. սա ինչի՞ է նման. մինչև անգամ վիրավորական է։ Մի յե՛րգ, ընկերնե՛ր,—դառավ թխադեմ որյորդը և առաջարկեց յերգել «Սլադյոզ աչերդ» ժողովրդական յերգը, վորը շատ եր սիրում ամենից հարգվածը։

Յերգը յերգվեց. սակայն յերբ այն վերջացավ՝ թախիծը կասես ավելի մեծ թափով իր թեվերը փռեց նստողների վրա։

— Մենք խնդրենք մեր հարգելի անձին մեզ մի բան պատմե իր կյանքից, մի հետաքրքիր բան, վոր մենք միշտ հիշենք այս հրաժեշտի յերեկոն։

— Այո՛, այո՛,—վրա բերին հասակիկ տիկնոջ առաջարկին չորս կողմից և հայացքներն ուղղեցին դեպի սեղանի ծայրը։

Ամենից հարգվածը մի խոսուն հայացք ձգեց բոլորի յերեսին, քիչ մտորավ ու դառավ,

—Թերևս այդ ամենից լավ լինի: Ձեռ կը պատմեմ ձեզ իմ կյանքից մի դեպք, վոր տեղի ունեցավ սրանից ուղիղ տասն և հինգ տարի առաջ և վորը շատ նման է նեղկա ամբաստանության դեպքին, վոր մարդիկ հարուցին իմ դեմ:

— Խնդրում ենք, խնդրում յենք,—դիմեցին չորս կողմից:

Նա—ամենից հարգվածը—վոր մոտ քառասուն տարեկան անձնավորություն եր, ուռած այտերով, վորպիսի այտերը չեյին ներդաշնակում նրա խոհուն ու խոսուն աչքերին, աթոռը քիչ մոտ քաշեց սեղանին, յերկու ձեռով յերեսը տրորեց, կատես այնտեղից մի բան հեռացրեց, թեյից մի-յերկու կում խմեց ու դառավ.

— 1903 թիվն եր. ռուսահայերի համար այն սարսափելի տարին, յերբ հայը հալածվում եր լոկ նրա համար, վոր նա հայ եր: Հայ աշխատավորի ձեռքից խլվեցին նրա դպրոցական կայքերն ու գույքերը, փակվեցին դպրոցները, վորտեղ ժողովրդի միջոցով տասնյակ հազարավոր մանուկներ եյին սովորում և հայ մտավորականությունը հարյուրներով սկսվեց աքսորվել Կովկասի սահմաններից դուրս, վորպեսզի իրագործվեր այն ժամանակվա ցարական քաղա-

քականութիւնը, որ աշխարհի յերեսին վոչ մի հայ չմնար, յեթե մնար էլ՝ միայն մի հատ խրատվիլակ թանգարանում ի ցույց ապագա սերունդների։

— Հեղափոխականները այրվում էին այդ ամենը տեսնելով, բայց վոչ մի հնար չունեին այդ բարբարոս հարձանքի առաջն առնելու։ Միտքն ու որենքը դառել էին անզոր, վոչինչ չէին կարող անել. մնում եր կոպիտ ույժի դեմ ույժ գործադրել... Սակայն ի՞նչ կարող եր անել վիթխարի ույժի դեմ ճղճիմ հայությունը։ Ամենքը հուսահատ իրար յերեսի էին նայում և չէին իմանում ինչ միջոցի դիմեին։

— Սակայն որհասական դրությունը դաճանեերից անգամ հսկաներ է ծնում. միտք եր հղացել հեղափոխականների մեջ վրեժ լուծել այն անձից, որ այդպիսի անողորմ հարձանք եր հարուցել մի աշխատավոր ժողովրդի դեմ, թեկուզ այդ վրեժը լիներ կյանքի գնով...

— Ցեվ կատարվեց. դա 1903 թվի հոկտեմբեր ամսի 17-ին եր, յերբ ամբողջ Թիֆիսը դղրդաց. այդ հարձանքների հեղինակը—իշխանը—ծանր վիրավորված եր գլխից ու վզից և տարված եր պալատ. իսկ իրենք խիզախներից յերկուսը ընկել էին կառավարչական զոր-

քի դեմ կռիվ մղելիս, յերբոյդը վիրավոր տարվել եր հիվանդանոց, բայց նա ել, տեղ չը հասած, ճանապարհին վախճանվել եր։

— Ձեզ պիտի ասեմ, սիրելիներս, վոր այդ գիշեր յես սոսկալի տանջանքների մեջ եյի. այնպես եյի խղճում այն յերեք նահատակներին, այնպես խղճում, վոր մարդկային գրիչն անզոր ե նկարագրել...

— Գիտե՞ք ինչ կը նշանակի ուրիշին ուղարկել մահվան գիրկը և նստել հեռու սպասել նրա հետեվանքին. դա սոսկալի՛ ե. մարդ կարծես իր ձեռքով ե սպանում նրանց... Ցեսս վողջ գիշեր չը կարողացա քնել։ Բացի խղճալուց մի այլ վիշտ կար իմ հոգու մեջ, վոր տանջում եր ինձ. —արդյոք նրանք վոչ վոքի չե՞ն մատնել, կամ նրանց գրպաններում վոչինչ չե՞ն գտել... Ցեվ, հետևյալ առավոտ, յերբ իմացվեց, վոր հերոսների մոտ վոչ մի թղթի կտոր չեն գտել ու չեն ել իմացել նրանց ո՛վ լինելը, և վոչ ել վերջին նահատակի, ճանապարհին վախճանվածի, բերանից վորևե խոստվանություն՝ մատանջությունս թեթեվացավ տեղի տալով ավելի ծանր կսկիծի ու ցավակցության։ Սակայն յեղածն յեղել եր, հարկավոր եր մտածել այն մասին, թե ինչպես փրկվեր մի բուռն ժողովուրդ այդ որհատական վիճակից։

— Այդ պատմական դեպքը հիմքից վեր ցնցեց ինչպես կառավարությունը, այնպես էլ ամբողջ հայ ժողովուրդը։ Դա մի յերեվույթ եր, վոր ինչպես մի ռումբ պայթեր կառավարության և հայության մեջ և նրանց բաժաներ յերկու ընդդիմադիր կողմերի։ Հալածանքները, բանտարկությունները, նույն իսկ բռնաբարությունները ու սպանությունները անկարող յեղան այդ շարժման առաջն առնել. հեղափոխականները վորոշել եյին վոչ մի միջոցի առաջ կանգ չառնել...

— Ինչպես չատերը, այնպես էլ և յես յենթարկվեցի կասկածանքի, վորից յետո ընկա բանդ, ապա ուղարկվեցի աքսոր։

— Ցեվ դիտե՞ք ինչու,— հանկարծ պատմելը ընդհատելով հարցրեց նա և թեյի բաժակը տարավ բերանը։

— Ինչո՞ւ,—հարցեր տեղացին չորս կողմից։

— Նրա համար, վոր հավատալով իմ կառավարիչներից մեկին՝ թույլ եյի տվել մի փոքր գաղտնիք նրան հայտնելու. (այն ժամանակ յես Թիլֆիս քաղաքի մի գործի տնորեն եյի և ունեյի իմ իշխանության ներքո վեց բաժանմունք իրենց կառավարիչներով)։ Ահա այդ

եր պատճառը, վոր յես բանդարկվեցի. ապա աքսոր գնացի:

— Եվ ավելորդ յեմ համարում այստեղ ձեզ նկարագրել բանդային կյանքը, մանավանդ այն ժամանակ, յերբ կատրյալ կամայականություն եր ժանդարմների կողմից: Մոտ յերկու շաբաթ բանտարկվելուց յետո, կանչվեցի ժանդարմական քննչի մոտ: Յերբ նա հանկարծ հայտնեց, վոր յես մեղադրվում յեմ իշխանի կյանքի դեմ մահափորձ կատարելու մեջ՝ մրնացի քարացած: Ո՞վ պիտի ասած լիներ այն պաղանիքը. յես վոչ վոքի չեյի ասել. գիտեյին միմիայն նահատակները և իմ մի կատավարիչը՝ Սամսոնը:

— Ձեվ յես ամբաստանված մի մարդու ձեռքով, վորին միմիայն և միմիայն խղճալով պաշտոն եյի տվել, նախ առանց քննության հեռացվեցի պաշտոնից, ինչպես այժմ հեռացվում յեմ չնորհիվ մի-յերկու ծառայողի ամբաստանության, վորոնց յես պաշտոն եյի տրվել, բարիք արել, ապա աքսորվեցի Կովկասի սահմաններից դուրս, գնացի Ռուսաստան, ձեռք բերի պաշտոն և ամուսնացի իմ բաղդը:

— Անցել եյին ամիսներ: Ձես արդեն հաշտվել եյի իմ վիճակի հետ. նախկին ապավորու-

թյուններս, ինչպես բանդի ու աքսորի, այնպես էլ նահատակների ցավակցության, համբյա անցել էին, և ես զբաղված էի իմ պաշտոնով՝ ազատ ժամանակս անց էի կացնում գեղեցիկ զբաղմունքներով։ Յեվ ինձ թվում էր թե ամեն ինչ անցել, գնացել էր։

II

— Մի կիրակի որ, երբ ես սենյակումս նստած ազատում էի իմ բարի ասնախկնոջս, որ ինձ ճաշ տար՝ նրա մոտ նրա զեռահաս որդին և հայտնեց, որ մի կոլկոտեցի յեկեղեցի ուզում է ինձ տեսնել։ Յես չգիտեմ ինչու, հիսակ իմ սովորության, խնդրեցի իմանալ յեկեղեցի ազգ և անունը։ Պատասխանն էր մի բոպեյից նորից յես յեկավ և հայտնեց, որ յեկեղեցին ինձ բավ ճանաչում է, իր ով լինելը չի ուզում հայտնել և անպատճառ ուզում է ինձ տեսնել, ասածին ասելիք ունի։ «Թերևս վրեժ գաղտնի հանձնարարություն», մտածեցի յես, մանավանդ, որ այդ ժամանակ հեղափոխության յեռուն ժամանակն էր, հարկավոր էր զգույշ։

—Խնդրեցի ասնախկնոջս ճաշը քիչ ուշացնել, պատվիրեցի պատանուն՝ յեկեղեցին ներս հրավիրելու։

— Մի բոպեյից անհամարձակ քայլերով, դվխաբաց ներս մտավ նա։

— Ո՞վ,—չորս կողմից անհամբեր տեղացին հարցեր,—ո՞վ։

— Ինքը, Սամսոնը։ Գունա՛ռ, կնճռոտ յերեսով, տարտրինակ աչքերով։

— Նրան տեսնելիս տարտուռ անցավ մարմնիս վրայով. սակայն տիրապետեցի ինձ, սպասելով նրա այցի պատճառին։

— Նա կանգ առավ դռան մոտ, այլևս չհամարձակվեց առաջ շարժվել։

— Տեր աստված, վո՛ր քան փոխվել եր նա, այդ մի քանի ամսում, կարծես աստ տարով ծերացած լիներ։

— Նա կանգնած մնաց տեղում և մի վշտալի հայացք գցելով յերեսիս դող-դող ձայնեց.

— «Յես եմ, յես, Սամսոնը... Այն որից, վոր պատճառ դարձա քո բանդարկության ու տքտրին, դրա հետ ասնդ ու տեղիդ ավերման, այն որից կորցրի յես իմ հանդիստը... Շատա՛ստ, ընկե՛ր, դիշեր-ցերեկ բարի դեմքդ կանգնած իմ առջև, կարծես, ասում է՝ «Սամսոն, ինչո՞ւ արիր դա, ինչո՞ւ. չե՞ վոր յես բացի բարեխիղճությունից քեզ վոչ մի վատ բան չեյի արել»... Ա-ա՛, ասնջվում եյի այդ յերևույթի

ամեն մի վերակալելուն և այժմս ել տանջվում եմ... Յետ այդ ժամանակ մի կարեկցակոն հայացք ձգեցի նրա հուսահատ աչքերին:

— «Գոնե դարձյալ այդպես բարի մի նայիր իմ յերեսին, խնայց նա,— խղճա՛ ինձ, խոժոռի՛ր աչքերդ վրաս, կանչի՛ր, հայհոյի՛ր, կատաղի՛ր, թերևս այդ քո զայրույթդ ինձ հանդարտություն պարգևե... Բայց, բայց այդ ել չի ողնում... Մի բան, միայն, մի բան, Կովկասից յեմ յեկել քեզանից խնդրելու, վոր նեղես ինձ, նեղես, թերևս դրանով յես հանգիստ դառնամ...

—Նրա մտանությունդրդապատճառն իմանալու համար ինքնաբերաբար հարցրի.—Բայց ի՞նչն ստիպեց քեզ այդպիսի քայլ անելու:

— «Ա-հա՛, մի՛ հարցնիր այդ, մի հարցնիր,— աղաղակեց նա,— դրա մասին և, վոր խղճես խայթի հետ միացած ինձ ավելի և տանջում:

— Իսկույն իմացա, վոր իմ տեղը բռնելու ցանկությունն է նրան դրդել այդպիսի մի բան անելու, ասեցի:

— Կարծես նա հասկացավ, վոր յես իմացա նրա արարքի դրդապատճառը, յերկու քայլ առաջ յեկավ, ընկավ հատակին և վողբալի հայացքով դառավ.

— «Այ, իբրև անզոր մանուկ, ծնկիս չոք ընկած առաջդ, ներողություն յեմ խնդրում... Եթե արբապղծություն չհամարեցի ձեռքերս վոտքերիդ քսելու՝ կը փարվեցի նրանց, արտասուքներով կը թրջեցի այն և... ու սկսեց հեկեկալ:

— Ես քարացած այդ տեսարանի առաջ մընացել եյի ապշած, չգիտեյի ինչ անեյի. կասես կատարվածը տեսել լիներ ինձ համար, յերազ, վոր իրականության մեջ յերբեք հավատալու չե. բան չեյի գտնում արտասանելու, խոսք չեյի գտնում ասելու. և ի՞նչ ասեյի. մարդը, բնական մարդը իր իսկական դեմքով այդ րոպե յեկել, պատկերացել եր իմ առաջ. Սամանի բերանով խոսում եր ճշմարտությունը:

— Դե, ընկե՛ր, ասա՛, պիտի ներե՞ս ինձ, պիտի հանդիսաս չնորհե՞ս ինձ՝ մեղապարտիս, դավաճանիս,— դարձյալ խոսեց նա և հեծեծանքը շարունակեց:

—Այդ բոլոր յես ամբողջովին խիղճ եյի դառել նրա համար. կարեկցեցի, վոր նա մի այդպիսի հանցանք եր գործել իմ դեմ և ընկել հոգեկան դառն տագնապի մեջ. վոչ մի բան չեր մնում անելու. մոտեցա նրան, բռնեցի թևից և ասեցի.

— Վե՛ր կաց—նեղում եմ։

— Այդ ժամանակ նա բռնեց ձեռս, տարավ շրթունքներին։

— Ցեռ վերկացրի նրան, նստեցրի սթոռի վրա և խնդրեցի տանտիկնոջս յերկու բաժին ճաշ տալու։

— Վո՛չ, վո՛չ—հանկարծ ճչաց նա,—յես այդ չեմ կարող անել. յես այն հանցանքից հետո, վոր գործել եմ քո կյանքի դեմ, արժանի չեմ քո հացը կարելու. դա ինձ համար Յուդայի պատառն կը լինի. վո՛չ, յես դրան արժանի՛ չեմ։ Ցեռ այստեղ արժանի յեմ քեզանից միմիայն հարածանքի ու անպատվության։

— Ցեռ ինչ վոր հարուցինցիայի մեջ ընկած ինքնաբերաբար ձչնչացի, «գնա՛, Տերը քեզ հետ», վորից հետո նա կարոտացավ վոտքի յելնել և անմիջապես դուրս սողալ դռնից։

— Նրա գնալուց հետո յես յերկար քարացած դրության մեջ մնացած չեյի հավատում աչքերիս տեսածին, ականջներիս լսածին։ Մի՞թե»... ընկա բազկաթոռի վրա և յերկար-յերկար մտածեցի մարդ արարածի մասին։

— Անցել եյին, այդ որից տարիներ. յես նորից վերադարձա Կովկաս, լսեցի վոր Սամսոնը վախճանվել եր հոգեկան հիվանդանոցում։

ճշմարիտն ասեմ, սրտիս խորքից ցավեցի նրա վրա, որ թողած անոգնական վիճակի մեջ ամուսին ու զավակներ դեռ ջահել մեռել էր:

— Այո՛, սիրելինե՛ր, իր պատմությունը վերջացրեց ամենից հարգվածը,—այդ նույն յերևույթը կրկնվում է և այսոր. յես ամբաստանված յեմ իմ հովանավորած մարդկանց կողմից ի տարապարտուց և հեռացվում յեմ իմ ստեղծած ու փայփայած գործից, որին յես այնքան նվիրված աշխատում եյի:

— Մնա՛ք բարեվ: Սակայն թող այսպիսի յերևույթներ յերբեք չթուլացնեն ձեզ և չվհատեցնեն ձեր հոգին. իմացեք, որ բարին միշտ հաղթանակող է:

— Մնաք բարեվ»:

Նոր լցված գինու ամանները նրանք չըրխկացրին իրար և սկսեցին հրաժեշտի յերգը:

---

Հ. ՍԱՀԱԿՅԱՆ
Հ. Ս. Ս. Հ. ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ. Ս. Ս. Հ. ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
L. U. S. SILLIMAN LIBRARY

# ՅԱՆԿ

1. Զավախքի յերազը . . . 5
2. Գյուղի յուզքաշին . . . . 11
3. Անպատուաո յերեցփոխը . . . 36
4. Անմեղ հոգին . . . . . 89
5. Նոխազը . . . . . 126
6. Խանումը . . . . . 154
7. Վիհը . . . . . 177
8. Մարդը . . . . . 186

| Եջ | տող | Ս Խ Ա Լ | Ո Ւ Ղ Ի Ղ |
|---|---|---|---|
| 6 | 4 | Նվաղել | Նվաղել |
| 20 | 15 | Կողմն | Կողմեն |
| 28 | 14 | Հոբերտուդ | Հոբերտուրդ տնեբեն |
| 32 | 25 | փարատելեն | փարատելեն |
| 45 | 4 | Չենի | Չենե |
| 45 | 23 | Բոյիդ | Բոյիդ յեա |
| 52 | 1-2 | տողերը եա ու առաջ են շարված | |
| 52 | 20 | Թպզուկեա | Թիզ ու կեա |
| 53 | 17 | փութ | փուտ |
| 77 | 10 | Իր վերցնելու, ինձ իլ հափտատացնելու | Ասել է. են հինգ մանեթը ինձի հալալ է |
| 78 | 25 | փերի | փերե |
| 93 | 5 | անելու | ասելու |
| 109 | 16 | կամ | կար |
| 112 | 25 | ցնցվում | ցնծում |
| 129 | 16 | տուն | տուն, վոր |
| 145 | 19 | պայրութի | պայրութ |
| 150 | 18 | պատոն | դատոն |
| 172 | 19 | և | ալ |
| 179 | 25 | այս | այպ |
| 182 | 12 | մթեցրած | մթնեցրած |
| 190 | 9 | կընշանակի | կընշանակե |

# ԻՄ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Յերդում, վիպակ, (սպառված) . . . 40 կ.
2. Գառաբեկան հուշեր, (սպառված) . . . 15 »
3. Հրոտ-Մրոտ առաջին գիրք (սպառ.) . 30 »
4. » » յերկրորդ գիրք (սակավաք.) 60 »
5. » » յերրորդ գիրք . . . . 60 »
6. Հայ գեղջուկի այլբոմը, I մաս. (սակավ.) 1 ռ.
7. » » » II մաս. (սակավ.) 1 »
8. Մեր բարեկամները, պատվածքներ . . 30 »
9. Հանցանք, եռյուդ (սպառված) . . . 15 »
10. Ավազի վրա, դրամա (սակավաքիվ) . . 1 »
11. Սիրո և գաղափարի սգավոր յերգիչը . . 25 »
12. Գիր և կյանք. դասագիրք հայ լեզվի. կազմած Նար-Դոսի հետ. (սպառված) . . 1 » 25 »
13. Հրոտ-Մրոտ, չորրորդ գիրք . . . 1 »

## ՊԱՏՐԱՍՏ ՅԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Ծիլեր, դրամա.
2. Կյանքի հեքիաթը, դրամա.
3. Բնության գրկում. պատվածքներ.
4. Պատերազմի ալիքներից. պատվածքներ.
5. Հայ գեղջուկի այլբոմի III մասը.
6. Գյուղի Շուշանը, վեպ.
7. Հրոտ-Մրոտ. հինգերրորդ գիր

ՀՀ Ազգային գրադարան
NL0943210

Ահ 92
923

ԳԻՆՆ Ե Ի ՌՈՒԲԼԻ